



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Վ. ԵՆ Է. ՏԷՐ-ՆԵՐՍԻՍԻԱՆ  
Սուրբան-Համալ  
Կ. ՊՈԼԻՍ



ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒ  
ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒԱԾ

ՄԻՋԻՆ ԳԱՍԵՆՓԱՑԻ  
Բ. ՏԱՐԻ



معارف عمومیہ نظارت جیلہ سنک فی ۱۹ ایلول ۳۲۲ تاریخی  
و ۲۵۴ نومرولی رخصتنامہ سیلہ طبع اولمشدر

172 / Mayreni lezu hatentit...

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

270

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

## ՀԻՄՆՈՎԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒԱԾ

221 p.

ՀԱՏԸՆՏԻՐ ՔԱՂՈՒԱԾԲ  
ՄԻՋԻՆ ԳԱՍԸՆԹԱՑԳ  
Բ. ՏԱՐԻ

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՄԲ, ՋՐՈՒՑԱԳՐԵԼ ՀԱՏՈՒԱԾԸ,  
ԲԱՌԱԳԻՑԱԿԱՆ ՄԹԵՐԲ ՈՒ ԻՐԱԳԻՑԱԿԱՆ ԾԱՆՕՓՈՒԹԻՒՆՆԵՐ,  
ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ԳՐԱԳԻՑՈՒԹԵԱՆ, ԾԱՆՕՔ ԲԱՌԵՐՈՎ  
ԿԱՐՃ ՆԱԽԱԴԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼ. ԳԻՒՑԵՐ.  
ԴԷՄ ՑԱՆԴԻՄԱՆԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐ  
ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՄԲ :

Ծանօթէն անծանօթը  
Պարզէն բաղադրեալը  
Դէմ յանդիմանական ուսուցում  
Ասփնանական զարգացում

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն  
Վ. և Հ. ՑԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ  
1907

Grad

1010

949

BVHR

i

GRAP  
EREN  
649  
L.I.C. 117

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս 5 Փետրուար 1905

Համար 1983

## ՎԱԻԵՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Ուսումն. Խորհուրդս ֆինուքեան առաւ «Մայրենի  
Հեզու» դասագրքին Գ. մասն՝ որ կը պատկանի Միջին Դա-  
սընթացի շրջանին, եւ անոր պարունակութիւնը համաձայն  
զտեղով Ազգ. Վարժարանաց Կրթական Ծրագրին՝ վաւերա-  
ցուց զայն, եւ արտօնեց անոր կիրառութիւնը Միջին Դա-  
սընթացի աշակերտաց եւ աշակերտուհեաց համար .


Ի Դիմաց Ուսումն. Խորհրդոյ

Վ. Ասեմադարի

Ասեմապետ

ԲԱՐՍԵՂ ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՅՈՒԹ. Տ. ԱՃԷՄԵԱՆ





ՄԱՅՐԵՆԻ ԼԵՋՈՒ ՄԻՋԻՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ


Քաջալերուելով այն ջերմ գնահատութեան , զոր քննալեցին Ազգ. Վարժարաններու Հոգաբարձութիւնք եւ ուսուցիչ՝ Նպաստից Յանձնաժողովոյ սեփական դասագիրքերէն Մայրենի Լեզու Մանկապարտեզ Ա. եւ Բ. եւ Տարրական Ա. եւ Բ. հասորներն քնդունելով իրենց դրպրոցներու մէջ , Յանձնաժողովս կը ձեռնարկէ հրատարակութեան Մայրենի Լեզու Միջին Ա. եւ Բ. հասորներու , պատրաստուած նոյն դիւրուսոյց մեթոսով եւ ուղղութեամբ , որով օժտուած էին նախորդ հասորներն :

Յանձնաժողովս աներկմիտ է որ միեւնոյն գնահատման եւ քնդունելութեան պիտի արժանանան այս հասորներն եւս , նիւթական շահ մը յառաջ բերելով նաեւ Նպաստից Սնուկին , որուն հասութից մաս կը կազմէ այս դասագիրքերու վաճառման արդիւնքն :

ԱԶԳ. ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՆՊԱՍՏԻՑ ԾԱՆՁՆԱԺՈՂՈՎ





# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ՄԻՋԻՆ ԳԱՍԸՆԹԱՑԻ

Բ. ՏԱՐԻ

---

ԴԱՍ Ա.

## ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ՄԵՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Մեր վարժարաններուն մէջ հասարակ ընթերցման շատ կարեւորութիւն չտրուիր ընդհանրապէս, և այդ պատճառաւ հոգ չտարուիր որ տրւոյ մը իր ընթերցանութեան առաջին տարիներուն մէջ կարենայ անսխալ կարդալէն զատ՝ պէտք եղածին պէս կարդալ, այսինքն զինք մտիկ ընողին հասկնալի ընել իր ընթերցումը :

Վարժարաններու մէջ առ հասարակ կը քառականան աշակերտին անսխալ ընթերցում սորվեցնելով, ա՛լ նկատողութեան չեն առներ թէ անոր կարդացածը հասկնալի կ'ըլլայ թէ՛ ոչ : Մինչեւ իսկ թէ կարդացած ատեն եղանակ մը դնէ, ուսուցիչներն անոր ալ անփոյթ կը գտնուին շատ անգամ :

Ասկէ առաջ եկած է որ մեր վարժարաններէն ընթացաւարտ շատ մը աշակերտներ մանչ ու աղջիկ՝ յոռի ընթերցում մը ունին : Անոնց ոչ հնչիւնը ուղիղ է , և ոչ կէտերուն ու շեշտերուն ուշադրութիւն կ'ընեն , իսկ ձայնի ելեւէջ բնաւ չկայ , կառնայական կերպ մը , արռեսասկեսաջ ձայն մը կ'առնեն աշակերտները , երբ գիրքը ձեռք կ'առնեն կարգալու համար : Ու այս ամէնը գիտէ՞ք ինչո՞ւ . վասն զի առաջին տարիներու մէջ սխալ ըմբռնած են ընթերցման կանոնները : Մէկ խօսքով կարելորութիւն չտրուիր վարժարանին փոքրագոյն կարգին :

Թելադրութիւններ . — Մէն մի նախադասութիւն հարցումներու վերածել . — Բարոյական :

2. Մէյմէկ խօսք կազմել դրուած բառերով .

3. Զրուցագրիչ հատուածները :



## ԴԱՍ Բ.

4. Գիւետք . — Մէյմէկ խօսք կազմել հետեւեալ օրինակին համեմատ՝ սա բառերը գործածելով .

Կաղնի, հաճար, հոյնի, մամլի, ոնի, մորենի, արժայամորի, որթի, խողկաղնի, հաճար, մամուլս, սին, մոր, արժայամոր, խաղող :

Որթը խաղող կու տայ :

Հետեւեալ բառերը յարմարցնել կէտերուն տեղ .

Լոյս, ջրվէժ, ռիս, շողի, աղբիւր, անձրիւ, գիր, վտակ, առուակ :

Ամպերն կը տեղան ..... Արեւէն կու գայ ..... Ժայռերէն կը գահավիժէ ..... Հողէն կը բղխի ..... Հիւսիւսէն կը փչէ ..... Ծովէն կը բարձրանայ ..... Վտակին մէջ կը հոսի ..... Դէպի գետը կը վազէ .....

Շարագրութիւն . — Յակոր ու Յովհաննէս քաղաքէն կը դառնան, կը լսեն զանգակին ձայնը : Յակոր զայն կը կարծէ անձրեւինչան (դժգոհութիւն) . Յովհաննէս հակառակը . (գոհունակութիւն) : Տրամախօսութիւն, իրարմէ կը բաժնուին գժտուած :

6. Մէյմէկ խօսք կազմել դրուած բառերով .



## ԴԱՍ Գ.

7. Գիւտեր . — Մէյմէկ խօսք կազմել հետևեալ թառերով . վարի օրինակին համեմատ :

Եղ , ձի , խոզ , վարաղ , փիղ , ճագար , խեցգետին , կրիայ , խղունջ , իշամեղու , առիւծ , խայթոց , ժանիք , պարեճ , եղջիւր , ճիրան , բբուկ , կնճիթ , կճղակ , բողկուկ , հերձատամ , խիկար , հերկժանիք :

Օրինակ . — Փիղը կնճիթ ունի :

---

## ԴԱՍ Դ.

### ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

Ե Ի

### ՀԱՅ ՏԱՌԵՐՈՒ ԳԻՒՏԸ

Սուրբ Մեսրոպ , մականուանեալն Մաշթոց , Տարօն գաւառի Հացեկաց գիւղէն էր և աշակերտ՝ Մեծն Ներսէսի : Անդադար Սուրբ Գիրքը կարդալու կը պարապէր . այս կերպով այնքան վարժեցաւ ու վառեցաւ հոգեւորապէս , որ հրաժարեցաւ աշխարհէ և արեղայ ձեռնադրուե-

շով վանք մտաւ , յետոյ պահ մըն ալ ճգնաւորական կեանք վարեց : Այնուհետեւ Մեսրոպ որ մեծ տաղանդի տէր էր , միանձնական կեանքը անձուկ գտնելով՝ սկսաւ ազգային լուսաւորութեան գործոյն . շատ աշակերտներ ժողվեց , կըրթեց զանոնք , և հետը առած՝ զանազան տեղուանք քարոզութիւններ կ'ընէր . այսպէս ջնջեց նոյն տեղերու աւելորդապաշտութիւնները և ազանդներու մնացորդները : Այս քարոզութեանց ժամանակ մեծ նեղութիւն կը կրէր , որովհետեւ հարկադրուած էր Աստուածաշունչ գիրքը կարդալ և հայերէն թարգմանել : Այս դժուարութիւնները իրեն մեծապէս զգալի ըրին ինչ տառերու պէտքը , զոր գտնելու համար շատ փորձեր ըրաւ , բայց անօգուտ : Ապա իմանալով Ս. Սահակ Հայրապետին բարի համբաւը՝ անոր մօտ եկաւ և իր խորհուրդը յայտնելով՝ տեսաւ որ ան ալ միեւնոյն մտածութեամբ գրաւուած էր : Ս. Սահակ ժողով գումարեց , և հոն յայտնուեցաւ թէ Միջագետի մէջ Հաբէլ անուն երէց մը ըսեր էր թէ Դանիէլ Եպիսկոպոսին քով Հայոց նշանագիրեր կան : Այս նշանագիրերը բերել տուին , և թէպէտ երկու տարի շարունակ փորձեր ըրին ա-

նոնցմով ուսուցանելու, բայց ի զուր աշխատեցան, որովհետեւ ձայնաւոր տառեր պակաս էին: Ս. Մեսրոպ միտքը դրաւ աւարտել սկսած աշխատութիւնը, ուստի քանի մը աշակերտներով գնաց Դանիէլ Եպիսկոպոսին քով, որպէս զի անոր հետ խորհրդակցութեամբ տառերուն պակասը լրացնելու հնարը մտածեն, բայց այս ջանքն ալ ի դերեւ ելաւ: Մեսրոպ՝ իր քանի մը աշակերտները Դանիէլի քով թողլով, երկուքին հետ Եդեսիա գնաց, Պղատոս անունով հեթանոս ճարտարանի մը մօտ: Բայց անկէջ ալ օգուտ չտեսաւ. վերջապէս գնաց Սամոսատ Հռոփանոս փիլիսոփային, և դարձեալ ձեռնունայն ելաւ: Այսպէս օտարներու օժանդակութենէն և մարդկային հնարքներէ յոյսը կտրելով՝ ապառիներացաւ Աստուծոյ և իր աշխատութիւնը շարունակելով՝ վերջապէս գրտաւ ցանկացած տառերը, 404 թուին:

Գլխաւոր դժուարութիւնը մէջ տեղէն վերցած էր: Երանելի վարդապետը Սամոսատ քաղաքին մէջ ուսումնարան բացաւ, և իր աշակերտ Յովհանն Եկեղեցացիին և Յովսէփ Պաղնացիին օգնութեամբ Սաղմոսն ու Առակներու Գիրքը ու Նոր Կտակարանը թարգմանեց: Երբոր վերադարձաւ երկիր,



հայրապետն և հանայն ժողովուրդը մեծ հրճուսե-  
փով ընդունեցին զայն՝ իր նորագիտոս նշանագիրե-  
րով և անոնցմով թարգմանուած մատեաններու  
հետ, և ուրախութեան սօն կատարեցին : Ուսում-  
նարաններ բացուեցան և զարմանալի յառաջադի-  
մութեամբ Հայերէն դպրոթիւններդ ծաղկիլ սկը-  
սան : Այնուհետեւ այդ մեծ մարդը յօրինեց նաեւ  
Վրաց և Աղուաններու գիրերը : Յետոյ գնաց Յու-  
նաց կողմերը, ուր Ս. Սահակ Հայրապետի կողմէ  
նուիրակ զրկուեցաւ և իր մեծ գիտութեան հա-  
մար պատուուեցաւ : Ս. Սահակէն ետքը վեց ամիս  
կառավարեց Հայրապետական աթոռը, և կնքեց  
իւր արդիւնաւէտ և յաւիտեան անմոռանալի կեան-  
քը : Հայերը այն ժամանակէն անոր ցոյց տուին  
իրենց երախտագիտութիւնը . փառաշուք յուղար-  
կաւորութեամբ անոր սուրբ մարմինը զետեղեցին  
Օշական գիւղին մէջ և վրան եկեղեցի շինեցին :

Բարերարներու յիշատակը օրհնութեամբ և  
երախտագիտութեամբ պիտի յիշուի միշտ :

Թելադուքիւններ . — Հարցումներու վերածել նա-  
խադասութիւններն :

9. Շեղագիր բառերով խօսքեր կազմել :

## Գ Ա Ս Ե .

10. Գիւտեր . — Մէյմէկ խօսք կազմուլ հետեւեալ ըստերով .

Պատ , որմ , պատուար , պատնէշ , պարխապ : — Զե-  
փիւռ , քամի , հիւսիւսակ , սիւք : — Սենեակ , խուց ,  
դահլիճ , սրահ : — Կանթեղ , լամբար , լապտեր , ջահ :  
— Կօշիկ , մուճակ , տրմուխ : — Գլխարկ , բեղոյր , խոյր ,  
գտակ : — Նախահաշ , ճաշ , նախընթրիք , ընթրիք :

Շարադրութիւն . — Մարիամ պատուհանին քով  
կ'աշխատէր : Պատուհանին սուջեւ կատուն կը լզէ իր  
ձագը : Ծնճղուկ մը յանկարծ ներս կը մտնէ , նկարա-  
դրել անոր ստկումը : Կատուն կը ցատկէ ճնճղուկին  
վրայ , Մարիամ կը բռնէ կատուին ձագը ու պատուհա-  
նէն վար ձգել կը ձեւացնէ : Ասոր վրայ կատուն թող  
կու տայ ճնճղուկը , Մարիամ կ'առնէ զայն ու պատուհա-  
նէն դուրս կ'արձակէ :

---

## Գ Ա Ս Զ .

### ԿԱՅՆԱՎԱՃԱՌԻ ԿԻՆՆ ՈՒ ԿԱՅՆԱՄԱՆԸ

Արսէն դիտուն վերեւ կաթի աման մը բարձած  
լաւ մը բարձոյլ հաստատած .

Հանգիստ ու անարգել քաղաք հասնիլ կը կարծէր  
Պարճ ու թեթեւ զգեստովն առաջ կ'երթար մե-  
ծաքայլ .

Դիտմամբ արագ շարժելու՝ նոյն օրն արդէն հա-  
գածն էր

Բաճկոն , կօշիկ պարզ անփայլ :

Հանգրիճաճեւ , ինքն ասանկ ,

Հաշիւ կ'ընէր ո'րչափ դանկ ,

Ձեռքը կու գար իր կաթէն , անոր բերած ստակով  
Հարիւր հաւկիթ կը գնէր , թուխս կը դնէր երեք  
հեղ

Եւ բանն աղէկ կը յաջողէր իր մտադիր խնամով :

« Ինձի համար դժուար չէ ,

Կ'ըսէր միտքէն , տանս բոլոր վառեակներ մեծ-  
ցընել ,

Ճարպիկութեամբ մնացածովն ես կրնամ խոզ մը  
գնել

Դիւրին է զինքն առանց մեծ ծախք մը բանալու  
գիրցնել :

Գնած ատենէս լաւ մը լեցուն էր արդէն .

Կրնամ կրկին ծախելով՝ աղէկ ստակ ձեռք բերել .

Եւ ո՞վ կրնայ զիս արգելել որ ախոռին մէջ պահեմ

Կով մը մէկտեղ իր հորթով՝ եթէ ձեռք տայ գի-  
նեւորին ,  
Որոնց հօտին մէջ հոս հոն պիտի տեսնեմ յատկեւ-  
նին » :  
Ասոր վրայ ինքն ալ Արսէն վեր կը ցատի : Խնդու-  
մով  
Կը թափի կաթն , ողջամբ մնան թուխս , խուեակ ,  
խոզ , հօթն ու կով :

Քելադրութիւններ . — Հարցումներու քննարկ . —  
Բարոյական . — Մէյմէկ խօսք կազմել շեղ խնդրով :

## ԴԱՍ Է.

### ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՈՒՐԱԽՈՒՄԻ ԵՆԸ

Առաւօտ մը երբ քոյրերն ու մայրները  
դպրոց երթալ կը պատրաստուէին , Ջարեհ գէմ-  
քը փոխած էր ու տեղէն չէր շարժեր : Երբ մայրը  
հարցուց պատճառը . « Ես դպրոց երթու չեմ ու-  
զեր , չեմ կրնար աշխատիլ » , պատասխանեց ,  
այնպիսի շեշտով որ մայրը ձայն չհանար :

Ջարեհ փողոց իջաւ , մարդ չկրէր , դրացի

տղայք ամէնքն ալ դպրոց գացեր էին : Դիչ մը հոլ խաղաց ինքնիրեն , քիչ մը ասդին վազվզեց , վիւր ելաւ , վար իջաւ , ու կէս օրին տուն եկաւ յոգնած , առանձնացաւ : Զարեհ սաստիկ կը ձանձրանար , չէր գիտեր ի՞նչ ընէ : Իրիկունը փողոցը լեցուեցաւ ազմուկով : Դպրոցի տղայք ետ կը դառնային ուրախ զուարթ : Դրացի տղայք երբ տեսան Զարեհը , սկսան անոր վրայ ծիծաղիլ : Է՛ , տեսէ՛ք սա Զարեհը , դպրոցէն փախած է : Զարեհին եղբայրներն ու քոյրերը ներս մտան , Զարեհ տրտում ու քիթ բերան կախած , առանձնացաւ : Մայրը սկսաւ սողոց համար ձողազեղ պատրաստել : Դպրոցէն եկողներն անօթի էին ու անհամբեր : Եօր սեղան նստան , Զարեհ տեղէն ելաւ ու մօրը մօտեցաւ , — Հապա ես՞ : — Մարդ չնայիր երեսդ , ահա՛ քեզի կտոր մը հաց , նստէ՛ կեր : — Զարեհ հպարտ տղայ էր , հացը չառաւ : — Ես բան չեմ ուտեր , ըսաւ , նաեւ քաշուեցաւ անկիւնը , հին անօթի ու տխուր քնացաւ :

Հետեւեալ առաւօտ եղբայրներն ու քոյրերը դպրոց գացին : Զարեհին երեսը մարդ չէր նայեր : Անիկայ կամաց մը մօտեցաւ մօրը : — Մայր , դըպրոց երթալ կ'ուզեմ , ընկերներուս պէս ուրախա-

նալ կ'ուզեմ, ինչո՞ւ դուն Ատրուժանին ու Կուսի-  
նէին ձուագեղ տուիր, ինձի չտուիր, ես դպրոց  
կ'երթամ: —

Իրիկունը Ձարեհ շատ ուրախ ետ դարձաւ և  
Ինքն ալ իր եղբայրներուն ու ընկերներուն պէս  
կը խնդար, կ'երգէր, ու անհամբեր կ'սպասէր որ  
մայրն անուշեղէն տայ իրեն:

### Ա Ռ Ա Ծ

Այն մարդն որ չ'աշխատիր, ամենեւին ու  
րախ չըլլար:

Քելադուքիւններ. — Հարցումներու վերածել. —  
Բարոյական:



### Դ Ա Ս Ը.

Շարադրութիւն. Սանդուխտին առաջին նամակը .  
— 1. Անուն, թուական: 2. Սանդուխտ կ'ըսէ թէ իր  
առաջին նամակն է այս, և թէ զայն գրելու համար  
անհրաժեշտ բոլոր բաներն ունի: 3. Կը պատմէ թէ վար-  
ժուէին նամակ գրելու ինչ պատուէրներ տուած է իրեն:  
4. Նամակի վերջաւորութեան յարմար ձեւով ստորա-  
դրութիւն: 5. Հասցէ:



ԴԱՍ Թ.



ԿԻԻԹԷՄՊԷՐԿ

Ե Ի

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻԻՏԸ

Առաջին անգամ գիրը հնարեցին եգիպտացիները : Երբ Եւրոպա տակաւին բարբարոս վիճակի մէջ էր , եգիպտոսի քաղաքները լեցուն

էին կոթողներով, որոնց վրայ զանազան ձեւերով պատկերներ քանդակուած էին : Այն պատկերներէն իւրաքանչիւրը գաղափար մը կամ խորհուրդ մը կը ներկայացնէր : Հին Եգիպտացւոց շինած քուրզերն ու կոթողները կը մնան դեռ : Եգիպտական նշանագրութեան վրայ ծանօթութիւն մը ստանալու համար պէտք է դիտնալ թէ ձեռքին մէջ գաւազան բռնած մարդը պետ կամ իշխան կը նշանակէր, առիւծի գլուխը՝ քաջութիւն, երկու ստները՝ քաղէլ, հորիզոնական գիծի մը վրայ երկու աչերն՝ տեսնել, ձեռքերը դէպի երկինք ամբարձած և ծունր իջած մարդ մը՝ աղօթել, ուռած առագաստը՝ հով, եւայլն :

Եգիպտացիները նախ քարէ, ոսկրէ, արծաթէ և կապարէ թերթերու վրայ կը փորագրէին : Երբ մերանը հնարուեցաւ, սկսան ոչխարի կամ այծի մորթերու վրայ գրել, մանաւանդ պապիրոս կոչուած ծառին տերեւներուն վրայ, որ նեղոս գետին եզերքը կ'աճի : Պապիրոսի տերեւները թերթերու կը վերածէին, փայտէ զրաններու վրայ կը փաթթէին և դարակներու մէջ կը պահէին : Գիրքին նախնական ձեւն այսպէս էր : Փիւնեկեցիները, Յոյները և Հռոմայեցիները հետզհետէ աւելի կատա-



րելագործեցին գրելու արուեստը : Տպագրութեան գիւտէն առաջ, մարդիկ ձեռքով կը գրէին փայտէ կամ եղէգէ գրիչներու միջոցաւ : Վանքերու մէջ զարմանալի համբերութեամբ ձեռագիրներ կը պատրաստուէին կամ կ'օրինակուէին, այս պատճառով գիրքերն շատ թանկագին էին . Աստուածաշունչ մը գրելու համար գիրքին ծանրութեան չափ ոսկի տալ հարկ էր : Իսկ այսօր չնչին գնովմը կրնանք ամենէն ընտիր գիրքերն ստանալ և մեր ուսման փափագը գոհացնել : Այս գիւրութիւնը մեզ պարգեւողն եղած է Կիւթէմպէրկ Գերմանացին , տպագրութեան գիւտին հեղինակն :

Կիւթէմպէրկ ծնաւ 1400 ին , Հէս-Տարմըշքասի Մայնց քաղաքին մէջ , Հռէնոս գետին եզերքներուն վրայ : Ընտանիքն ազնուական տնտէս էր , իսկ ծնողքը՝ ո'չ այնքան հարուստ : Տղայ հասակին մէջ կորսնցուց իր հայրն և աննշան վիճակի մէջ ինկաւ : Սակայն ի բնէ ուսումնասէր ըլլալով , իր ծննդավայր քաղաքին վարժարանները յաճախեց և անխոնջ աշխատութեամբ ժամանակին ամենէն գիտուն մարդոցմէն մէկն եղաւ : Հորանօսա գնաց և կրկնապատկեց իր ուսումնասիրութիւններն ու զննութիւններն այլ և այլ արուեստներու վրայ ,

և այս առիթով մեծ խորհուրդ մը յղացաւ էր միտքին մէջ, այն էր տպագրութեան միջոցով գիրք ընդօրինակել։ Արդէն Կիւթէմպէրկէն առաջ, մարդիկ փայտէ գիրեր շինելու արուեստը գիտէին . փայտէ գաւազանիկներու վրայ զմեղինով կը փորագրէին այբբենարանի գիրերը, մելանի մէջ կը թաթխէին և մամուլի տակ դնելով՝ շարունակ գիրերը կը գրոշմէին սպիտակ թուղթի վրայ։ Բայց չափազանց դժուար գործ մըն էր այս, հարկ էր աւելի դիւրին եղանակ մը գտնել։

1437 ին Կիւթէմպէրկ Սթրազպուրկ քաղաքը կը բնակէր։ Հոն տանը մէջ առանձնացած՝ գիրքի երեսներ կը փորագրէր տախտակներու վրայ և զատ զատ կը տպէր զանոնք։ Բայց այս եղանակն ալ մեծամեծ դժուարութեանց կը հանդիպէր։ Հարիւր երեսներէ բաղկացած գիրք մը տպելու համար հարիւր տախտակ ունենալ հարկ էր, ամէնն ալ զատ զատ փորագրուած։ Կիւթէմպէրկ մտածեց փոխանակ միեւնոյն աախտակի վրայ բառի մը կամ խօսքի մը ամէն տառեր փորագրելու, մետաղի կամ փայտի կտորներու վրայ շինել տառերը, յետոյ իրարու քով բերելով շարել, երեսներ կապել և մամուլին յանձնել։ Այն ժամանակ բաւական

կըլլար այբբենարանի տառերուն ամբողջ հաւաքածոյն ունենալ մասնաւոր տուփերու մէջ, և այն շարժուն մետաղէ տառերով ամէն տեսակ գրութիւն տպել: Ի՞նչ գեղեցիկ և ի՞նչ հաւնճարեղ մտածութիւն:

Կիւթէմպէրկ աղքատ էր, չունէր դրամ տպարան մը հիմնելու: Բարեկամներ իրենց աջակցութիւնը նուիրեցին անոր, բաւական մեծ գումար մը դնելով իր տրամադրութեան տակ, որպէս զի կարենայ գործադրել իր վսեմ խորհուրդը: Կիւթէմպէրկ պայման դրած էր որ երբ իր դիւտը յաջողութիւն գտնէր, գոյանալի՛ք շահը պիտի բաժնէր իր ընկերներուն հետ: Սթրազպուրկ քաղաքին մօտ հինօրեայ վանք մը կար լքուած և գրեթէ կիսաւեր վիճակի մէջ: Կիւթէմպէրկ այն առնայի շէնքին մէջ հաստատեց իր գործարանը: Առաջին անգամ հոն տեսնուեցան մամուլները, տպագրական գործիները, պապիւրոսն, թուղթի ծրարներն և մետաղեայ տառերը: Գործաւորները թուով չորս հոգի էին և գաղտնի կ'աշխատէին: Կիւթէմպէրկ և իր ընկերներն ամենամեծ խնամով կը ծածկէին տպագրութեան գաղտնիքը, մի գուցէ ուրիշներ ծանօթանային այդ նորահնար ար-

ուետոին , և իրենց յուսացած մեծամեծ շահերը , նաեւ գիւտին փառքը խլէին իրենցմէ :

Աշխատութիւնն արդիւնաւոր եղաւ : Կիւթէմէ պէրկ անլինաս հաւթերասարուքեաւթ և յամառ աշխատութեամբ , ինչպէս նաեւ ամենամեծ գոհողութեամբ յաջողեցաւ դանել տպագրական տառերուն բաղադրութիւնը : Հալած կապարը մասնաւոր կաղապարներու մէջ հոսեցնելով՝ տառեր ձուռեց , և յասիկերէն Աստուածաշունչը տպագրել սկսաւ : Բայց Կիւթէմպէրկ դրամական կարողութիւն չունէր այսպիսի մեծ գործեր գլուխ հանելու համար : Մայնցի մէջ բնակող հարուստ մարդ մը , Փառուստ անուն , իր աջակցութիւնը նուիրեց իրեն . Պետրոս Շէֆֆէր անուն կրօնաւոր մըն ալ ասոնց հետ միանալով՝ երեքը միասին սկսան անդռոյ աշխատիլ :

Տպագրուած գիրքերը մեծ քանակութեամբ կը ծախուէին . հնարիչն և իր ընկերները մեծագումար դրամ կը շահէին և ժողովուրդը գոհութեամբ կը վարձատրէր Կիւթէմպէրկը : Բայց Փառուստ նախանձէն և ազահուքենէ գրգուած՝ չուզեց գոհանալ իր շահու բաժինով : Գժտութիւն մը հանեց , բաժնուեցաւ Կիւթէմպէրկէն , և դատ

բանալով գրաւեց ամէն գործիները , մամուլներն  
և տպագրուած գիրքերը : Ո՛րքան դժբախտ պի-  
տի ըլլար Կիւթէմպէրկ եթէ ազնիւ մարդ մը օգ-  
նութեան չհասնէր իրեն : Այդ պատուական մար-  
դը բժիշկ մըն էր , որ իր տունն հրաւիրելով տա-  
րաբախտ հնարիչն՝ ըսաւ անոր . « Ես քեզ գրամ  
փոխ կու տամ . երբ կարող ըլլաս , վճարէ ինձի »  
Ուստի գործարան մը վարձէ՛ , մամուլներ և գոր-  
ծիներ գնէ՛ և աշխատէ՛ » :

Կիւթէմպէրկ շնորհակալութեամբ ընդունեց  
այս վեհանձնական առաջարկն , երրորդ անգամ  
ըլլալով գործարան մը հիմնեց և բազմաթիւ գոր-  
ծաւորներ աշխատեցնելով՝ սորվեցուց տպագրական  
արուեստը : Սակայն դժբախտութիւն մը վրայ հա-  
տաւ : Մայնց քաղաքը պատերազմական խռո-  
վութեանց ասպարէզ եղաւ , Կիւթէմպէրկի տպա-  
րանը կործանեցաւ , գործաւորներն ու աշակերտ-  
ները ցրուեցան , և Գերմանիայ ուրիշ կողմերը , ինչ-  
պէս նաեւ Փրանսա և Իտալիա գաղթելով՝ նորա-  
նոր տպարաններ հիմնեցին :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Շեղագիր բառերով խօսք կազմել :



## ԴԱՍ Ժ.

Շարադրութիւն , խղունջն ու քրթուրը . — Թրթուր մը խղունջի մը հանդիպելով՝ կը բարեւէ զայն ընտանե-  
բար : Խղունջը վիրաւորուած կ'զգայ իր արժանապատ-  
ուութիւնը : 1. Ինչ կը պատասխանէ : 2. Քանի մը օր  
ետք խղունջը մեծարանքով կը բարեւէ Թրթուրը որ Թի-  
թեռնիկի փոխուած է : 3. Թիթեռնիկը հարկ եղած դա-  
սը կու տայ խղունջին : (Թիթեռնիկն ինչ կրնայ ըսել-  
վենդանիները իրենք թող խօսին) :

---

## ԴԱՍ ԺԱ.

### ՇՐԵՇՏԱԿՆ ՈՒ ՄԱՆԿԻԿՆ

Հրեշտակ մ'աղւոր լուսահեր ,  
Օրրանին քով վայրահակ ,  
Իր պատկերն հոն կը դիտէր՝  
Կարծես ջուրի մէջ յստակ :

«Եկ'ուր , կ'ըսէր , վա'րդ մանկիկ ,  
Գուն՝ որ ինձի ես նման ,

Եկո՛ւր , ըլանք երջանիկ ,  
Երկիրն է քեզ անարժան :

« Ինչո՞ւ կսկիծ և վրդով  
Ճակտիդ խորշում տան քուկին ,  
Ինչու աղի արցունքով  
Քու խաժ աչքերդ աղօտեն :

« Թող քու տունէդ ոչ ոք լայ ,  
Հագնի սուղի հագուստներ ,  
Թող քու վերջին ժամդ ըլայ  
Ծնունդիդ պէս խնդարե՛ր :

« Չըլլա՛ն դէմքերն հոն տխուր ,  
Մահուան ողբերն անհե՛տին ,  
Երբ մարդ քեզ պէս է մաքուր ,  
Քարեբախտ է օրն յետին » :

Եւ հրեշտակն առաւ քեւ ,  
Թեւերն ուղղեց քաց խփիկ  
Դէպի կայանն իր անձիւր ,  
Մեռա՛ւ զաւակդ , հէ՛ք մայրիկ :

---

## ԴԱՍ ԺԲ.



### ՈՍԿԻ ԵԶՆԱԿՆԵՐԸ

Մաղարթներուն վրայ աղւոր  
Մասափի բոյն մ'է ինկեր ,  
Վարդերուն մէջ փայլուն բոտոր  
Լեցուն ոսկի եղնակներ :

Տըզ տըզ թուփին մէջ կը թռփն ,  
Տըզ տըզ կ'ելեն օդն ի վեր .  
Եւ ոստերուն մէջ կը թառփն  
Արեւուն դէմ յուսահեր :

Կանանչ ու Բիշ ճանճեր խոշոր  
Կը պտակին հոյշ ի հոյշ ,  
Թոյլ թեւերնին թոյր է բոլոր  
Եւ ձայներնին թեթեւ սոյլ :




Ճակատնին լայն , կռնակնին լայն ,  
Թաթիկնին հաստ , շերկ ու սուր . .  
Բայց մանուկներ կը մօտենան  
Անոնց անվախ անսարսուռ :

Կեռ ճանկերէն չըլլայ վախնաք ,  
Չունին ասեղ , ոչ խայթոց .  
Գարնան վարդի թուփերուն տակ  
Մեծ զբօսանքն են տղոց :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել .

15. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## Դ Ա Ս Ժ Գ .

16. Շեղագիր բառեր իրենց պատշաճ տեղեր դնել ,  
սրբագրել ու գոց ընել :

Իւրաքանչիւր չորքոտանի իր յատուկ ձայնն ունի .

Առիւծը ..... մեղուն ..... ձին ..... էջն ..... շունը  
..... գայլը ..... կատուն ..... խոզը ..... ցուլը ..... կովը  
..... եզը ..... ոչխարը ..... կոկորդիլոսը ..... վագրը .....  
այծը ..... կապիկը ..... արջը ..... մուկը ..... :

Մռնչել , գոչել , խրխնջել , զուայ , հաչել = կադիան .

ձեղ , ոռնաղ , նռնաղ = մկառեղ , վոնցեղ , պոռոցեղ , բառա-  
ջեղ , բզեղ , մնայեղ , ճջեղ , մրմռաղ , ճռաղ :

**Թռչուններէն ոմանք իրենց յատուկ ձայնն ունի .**

Ագռաւը ..... աղաւնին ..... տատրակը ..... Թռ-  
թակը ..... աքաղաղը ..... կաքաւը ..... կկուն ..... ար-  
ծիւը ..... արագիւը ..... սոխակը ..... ճնճղակը .....  
հնդկահաւը ..... վառեակը ..... անծեղը ..... :

Կանցեղ , մնցեղ , վուվու ընեղ , բոբովեղ , խօսիղ ,  
կրկչաղ , զգռեղ , կառաչեղ , կախկապեղ , զեղզեղեղ , ճճռեղ ,  
զզգրաղ , բերեղ , կարկաչեղ :

Իր ծախքն իր տոմարին համեմատ կարգադրել ..... ,  
քոյորը ծախսել ..... ումպկատ , աւելի ծախսել ..... :

**Յիւսարութիւն , ինաստութիւն , անխոհեմութիւն .**

Ամբարտաւան մարդիկ ուսումէ ..... միամիտները ----  
..... խելացիները ..... կը զարմանան անոր վրայ , կ'արհա-  
մարեն , անկէ կ'օգտուին :

Յիսուս երբ աշխարհ եկաւ սրբագործելու համար ----  
..... զօրացնելու համար ..... փրկելու համար ..... միացը-  
նելու համար . թաժնուածները , կորսուածները . զկարա-  
ջածները , ապականիչները :

---

## ԴԱՍ ԺԴ.

### ԱՄԷՆ ԲԱՆ ԿԸ ՄԵՌՆԻ ԵՒ ԿԸ ՎԵՐԱՍՆԻ

Ա.

Ուսկի՞ց կու գաս, մահու զաւակ, ի՞նչու է որ  
Չուլաս ու տրտմեր ես : — Տեսայ վարդն որ իր  
կեանքի առտուն՝ թերթերը արեւուն բացած գե-  
ղեցիկ գոյնովը կը փայլէր : Քանի մը ժամ ետք  
նորէն անցայ տեսնեմ որ իր կոթին վրայ թռումեր  
էր . ազուորութիւնը գացած , գոյնը նետած , հո-  
տը փախած , թերթերը գետինը թափած , ոտքի  
տակ ինկած :

Իաչտին մէջ մեծ ու բարձր ծառ մը կար ,  
ճիւղերը տերեւով ծածկուած չորսդին ընդարձակ  
չուք մը կը ձգէին , վարի դին ամուր սիւնի մը կը  
նմանէր , արմատները՝ կեռ ճանկերու : Քիչ ատե-  
նէն նորէն դարձայ , մէյ մըն ալ ի՞նչ տեսնեմ ,  
արեւելեան հողմ՝ չորցած ու դեղնած տերեւները՝  
ասդին անդին կը ձգէր : ճիւղերը փայտահարին  
կացինին բերանը ինկած էին , որդերը կոճղին մէջ

կը վիսացայիմ , փայտը փտած՝ փոշոյ պէս կը թափ-  
թփէր :

Տեսայ միցասնէր որ արեւուն լուսոյն մէջ կը  
փայլփրլային , ջուրի եղերքը կը թռչտէին , թեւերնին  
իբր ոսկի ու իբր ծիրանի պայծառ , մարմիննին  
զնրոյիսի պէս կանանչ , շարժմունքնին շատ , թե-  
ւերնին անհամար . իրիկունը դառնալու ատեն տե-  
սայ որ կէսը ջուրին մէջ խզդուեր է , կէսը բարակ  
հովէն զարնուած սատկեր է : Միծեռնակն կերաւ  
զանոնք . ձուկն ջուրին հետ խմեց , հատ մըն ալ  
չմնաց հոն :

Մարդն ալ տեսայ իր ուժին մէջ , երեսները  
դեռ դաշտ էին ամէն անգամներն ժիր և ուժով .  
կը ցատքէր , կը վազէր , կը խաղար . ու կը կար-  
ծէր՝ որ իրեն պէս կտրիճ չկայ : Այն տեղէն նո-  
րէն անցնելու եղայ , ի՞նչ նայիմ , գետնի վրայ  
պաղած ու մերկ փուուեր էր , ո՛չ ոտուրները կր-  
նար շարժիլ , ո՛չ ձեռուրները բանալ , կեանքը կոր-  
սուեր էր , մեռեր էր . . . :



## ԴԱՍ ժե.

Բ.

Մաղիկը ճղին վրայ ցամքեցաւ, գետինը թափեցաւ, նորէն տեսայ որ ծլեր էր, ճիւղերը կոկոններով զարդարուած, հոտը սկսեր էր բուրել:

Տեսայ արեւն որ մարը կը մտնէր. գիշերն պատեց երկինքին մէկ ծայրէն մէկալ ծայրը. բան մը չէր տեսնուեր, ձայն մը չէր լսուեր: Շատ չանցաւ արեւն նորէն արեւելք երեւցաւ, լեռներուն ծայրը կրակ կտրեց, արժոյցն ելաւ զինքը քարեւելու, մութն հալածուեցաւ:

Տեսայ միջատն որ ուժը տեսքը տեղն էր՝ մէկ մին ալ սկսաւ կերակուր չուտել: Իրեն գերեզմանի ծռակ մը փորեց, մետաքսահիւս պատանքով պատեցաւ, ուժն ալ շարժմունքն ալ կորսնցուց, մէյ մ'ալ նայիմ որ ծակեց իրեն գերեզմանն ըսածը, դուրս ելաւ թեւերը բացաւ, ու սկսաւ ճիւղէ ճիւղ թռչտիլ:

Ասանկ ալ քեզի պիտի ըլլայ ո՛վ մարդ, թէ և մարմինդ մահկանացու է, հոգիդ անմահ է,

բայց այս կեանքէդ կախուած է քու յաւիտենական բախտդ :

— Ո՞վ է անիկա որ գերեզմաններուն քարերը կը վերցնէ և մեռելները դուրս կը կանչէ :  
Ո՞վ է ատիկա որ կը ժողվէ ատոնց աշխարհիս չորսդին սփռած անդամները :

Ո՞վ է անիկա որ կրակի ամպի մը վրայ նստած՝ փողերու ձայնով հրեշտակներու բազմութեամբ երկիր կ'իջնէ :

— Յիսուս է անիկա, Որդին Աստուծոյ, աշխարհիս Փրկիչն, արդարներուն բարեկամը :

Իր յաւիտենական հօրմէն առած Աստուածային փառքին վրայ ուրախ՝ իր Մօրն ալ կու տայ անկէց, իրեն կը կանչէ ամէն իր պատուիրանքները պահողները, ու իրեն համար նեղութիւն քաշողները :

Ուրեմն՝ մի տրտմիր, անմահ տղայ, Աստուծոյ արարածներն աւրողը յաղթուեցաւ, Յիսուս իր մեռներովը՝ յաղթեց անոր, ուրախ կեցի՛ր :

Թեյադրուքիւններ . — Հարցումներու վերածել :

18. Մէյմէկ խօսք կազմել շեղագիր բառերով :

## ԴԱՍ ԺՉ.



### ԵՐԿՐԱԳՈՐԾԻՆ ԿԵԱՆՔԸ

Երբոր ծագի գարնան արեւ  
Կ'երթամ հերկել ես իմ արտիկ ,  
Կ'երգէ արտոյտ գլխուս վերեւ ,  
Կ'երգէ հոգիս ալ հանդարտիկ :

Երբոր հառնի ամրան տաքը ,  
Սիրտս ուրախ է տղու նման ,  
Տէրն օրհնած է իմ վաստակը ,  
Արտս հասկերու ծով ո՞ր է լման :

Ու երբոր գայ աշուն նորէն  
Սիրտս պիտի ըլլայ զուարթ ,  
Ունիմ առատ պտուղ ցորեն  
Եզներուս ա՛լ չոր խոտ ու յարդ :

Եւ երբ հասնին ցուրտեր ձմրան  
Ջաւակներս պէտք մը չունին ,  
Իրենց հացէն մաս մ'ալ կու տան  
Խեղճուկ որբին ու թռչունին :

Տարին ամբողջ մենք կաշխատինք  
Մարմնով առողջ , միտքով զուարթ ,  
Զուր չի հոսիր համեստ քրտինք ,  
Տէրը կ'օրհնէ մեր տունն ու արտ :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

## Դ Ա Ս Ժ Է .

Շարադրութիւն . աջ ձեռք , ձախ ձեռք . — 1 .  
Աջ ձեռքն իր ըրած ծառայութեանց վրայ կը խօսի՝ ինք-  
նօգնութիւն (թուելիք այդ ծառայութիւններն) , ու  
արհամհարանքով կ'ստգտանէ ձախ ձեռքը՝ անոր անգոր-  
ծութեան համար : 2 . Ձախ ձեռքը ինքզինք կը պաշտ-  
պանէ՝ ըսելով թէ մարդիկ պէտք եղածին չափ կըր-  
թութեան չեն տար իրեն , և այս է ետ մնալուն պատ-  
ճառը . . . և կը թուէ իր ըրած ծառայութիւնները . . . :



3. Եզրակացնելով՝ կ'առաջարկէ որ սիրով ու միութեամբ վարուին իրարու հետ :

20. Շեղագիր բառերը յարմարցնել կէտերուն տեղ :  
Մարդոցմէ շատեր կ'ուզեն ..... հարստանալ , քիչեր ..... :

Արդարութիւն , դիպուածով :

Մի' ամէնար զգեստիդ ..... համար , այլ անոր ..... համար :

Բիծերուն , ծակերուն :

Կեանքի մէջ խնդրելու չէ այն առարկաներն որ աւելի ..... ունին , այլ զանոնք որ աւելի ..... ունին :

Արժեք , ծանրութիւն :

Նախ պէտք է ..... այն անձը զոր կ'ուզենք ..... :

Յարգել , սիրել :

Ամէն մարդիկ չեն կրնար ..... ըլլալ , բայց ամէնքը կրնան ..... ըլլալ :

Մեծ , բարի :

Ձի կրնար մէկը մեծ մարդ ըլլալ , երբ ..... ունի քան ..... :

Միտք , սիրտ :

Ահա երեք չքնաղ զարդեր երիտասարդութեան ..... որ գիտէ խորհիլ , ..... որ գիտէ ..... չափաւորել , ..... որ գիտէ շիկնիլ :

Լեզու , գրույս , դիմք .

---

## ԴԱՍ ԺԸ.

### Ե Ր Կ Ի Ր

Աստղերն որք մեզի կ'երեւին իբրեւ փայլուն առկայծեաց կէտեր, մեծամեծ աշխարհներ են : Եթէ այդ աստղերէն մէկին վրայէն կարենային դիտել մեր երկիրը, սա կամ բոլորովին պիտի չտեսնուէր, կամ միւս աստղերուն նման փոքր և փայլուն կէտ մը պիտի երեւար :

Շատ բնական է որ մարդ գիտնայ թէ ինչ ձեւ ունի այն երկիրն որոյ վրայ ինք կը բնակի : Բայց ի՞նչպէս : Մենք գիտենք որ մարդս առարկաներու ձեւը տեսանելիի և շոշափելիի միջնորդութեամբ կ'ըմբռնէ, և երբ կ'ուզենք ինձորին ձեւը հասկնալ, ձեռքերնիս կ'առնենք զայն և ամէն կողմէ ուշի ուշով կը զննենք : Բայց այդպէս կարելի չէ շոշափել երկիրը : Երեւակայեցէ՛ք թէ եկեղեցւոյ մը ահագին գմբէթին վրայ փոքրիկ միջին մը կը քայլ և կ'ուզէ ըմբռնել անոր ձեւը : Ի հարկէ շատ դժուար է գաղափար մ'ունենալ անոր ձեւի մասին : Մարդս համեմատելով երկրի

հետ՝ աւելի փոքր է քան ամենէն փոքր միջիւնը քաղղատմամբ գմբէթի հետ : Բայց և այնպէս մարդս չըջելով, ճամբորդելով երկրի վրայ, կրցաւ վերջապէս հասկնալ թէ Աստուած մեծ գունճի մը ձեւ տուած է երկրիս :

Երբ մարդ պատահմամբ ճանապարհորդէր ծովերու կամ լայնասարած դաշտերու վրայ, և երբ անտառներ կամ լեռներ չխափանէին անոր տեսութիւնը, այն ատեն կը տեսնէր որ երկիրն իբրեւ թէ կցուած ըլլար երկինքին : Պէտք չէ զարմանալ թէ մարդիկ՝ երկրիս գնճաձեռութիւնը գուշակելէ առաջ՝ տափակ և բոլորաձեւ մարմին կը համարէին զայն . բայց եղան խելացի մարդիկ որոնք գուշակեցին թէ այդպէս չէ և երկիրը ծայր չունի, ինչպէս գունտը : Բայց սակաւաթիւ էին այնպիսի մարդիկ և անոնց գրեթէ չէին հաւատար միւսները : Վերջապէս մարդիկ սորվեցան հաստակաւորոյց նաւեր շինել, որոնցմով սկսան նաւարկել ծովերու վրայ . այսպէս շարունակ դէպ առաջ գնացին, բայց երբէք երկրիս ծայրը չգտան : Հուսկ ուրեմն գտնուեցան այնպիսի համարձակ անձեր որ ալ աւելի առաջ երթալով՝ հակառակ կողմէն հասան այն տեղն ուսկից որ մեկնած էին : Ճամբան բնաւ

անդունդի չպատահեցան , և միշտ կը կարծէին թէ հարթ մակերեսոյրի վրայ կ'ընթանային : Միեւնոյնը պիտի պատահէր միջատի մը՝ եթէ ան ուղղակի պարտէր դմբէթի մը շուրջն առանց ետ դառնալու , այսինքն միւս կողմէն անպատճառ պիտի հասնէր այն տեղն ուսկից ճանբայ ելած էր :

Թելադուքիւններ . — Հարցումներու վերածել :

22. Շեղագիր բառերով խօսք կազմել :

23. Հետեւեալ առածներուն մոխութիւնը տալ ու շարադրել :

1. Շունը շան միսը չուտեր .

2. Գլխորոզ քարը հիմ չբռներ :

3. Շուն ու կատու են իրարու հետ :

4. Մէկ քարով երկու թռչուն դարնել :

5. Օձը շապիկը կը փոխէ , բայց ոչ բնոյթը ,

24. Շեղագիր բառերը կետերուն տեղ յարմարցնել :

..... մը ապագայն իր ..... գործն է միշտ :

Մանկան , մօր :

Զգուշացիր ..... մարդէն , խոյս տուր ..... մարդէն :

Կեղծաւոր , բարկասիրտ :

..... վիճակ մըն է ..... գործ մը :

Աղբասութիւն , Մուրացկանութիւն :

Գործերուդ մէջ ..... եղիր , խոստումներուդ մէջ ..... :



## ԴԱՍ Ի.

### Գ Ա Յ Լ Ե Ի Գ Ա Ռ Ն

Ականակիս առուակի մը քով կեցեր

Գառնուկը ջուր կը խմէր ;

Վրայ հասաւ անդիէն գայլ մը սաստիկ անօթի ,  
Արիւն կ'ուզեր խմելու , միս կը վնտուէր որ ճրթի ,  
« Գուն ո՞վ ես որ իմ'խմելու ջուրս եկեր պղտորեր ես ,  
Կանչեց գազանն անօրէն ,

Հիմայ պատիժդ կը գտնաս , աներե՛ս » :

— Մի բարկանար վրաս , տէր իմ , պատասխանեց  
գառն իրեն

Նայէ , կ'աղաչեմ ,

Ես որչափ վար եմ

Քու կեցած տեղէդ

Ու խմած ջրէդ .

Ի՞նչպէս կրնամ պղտորել այն ջուրն որ ձեզմէ ին-  
ծի կու գայ — :

— Կը պղտորես՝ ըսի քեզի , իմ խօսքիս մէջ սուս  
չկայ :

Հապա հեռօ՞ւն , որ հայհոյեցիր ինծի՞ . . .

— Հեռու ես աշխարհ ալ եկած չէի ,  
Ես դեռ կաթ կ'ուտեմ , կը սխալիս , տէ՛ր — :  
— Եթէ դու չէիր , ուրեմն եղբայրդ էր — :  
— Եղբայր ալ չունիմ — : — Շա՛տ երկնցուցիր ,  
Ես սո՛ւտ չեմ խօսիր , ա՛ս աղէկ դիտցիր  
Ըսեղ է թէ ազգական էր ան քեզի ,  
Միթէ չգիտեմ ինչ քէն ունիք դուք ինձի ,  
Ամէնքնիդ ալ , հօտ և հովիւ և շուներ ,  
Ալ ճար չկայ , չեմ ներեր — :  
Աս ըսաւ ու վրան ցատկեց ,  
Իեզճ գառնուկը պատուեց լափեց :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Քարոյական :

26. Շեղագիր բառերով խօսք կազմել :

## Գ Ա Ս Ի Ա .

Շարադրութիւն , պայքած աչիւր . — Շահէն՝ որ ան ,  
Տնազանդ տղայ մըն է ..... իր մօրը մկրատին հետ կը խա-  
ղայ և զայն կը դարձնէ ..... : 2. Կը կանչէ իր Մարիամ  
քոյրը ..... : 3. Չուանը կը կտրի , մկրատը կ'երթայ կը  
պայթեցնէ Մարիամին աչքը : 4. Շահէնի յուսահատու-  
թիւնը , երեւակայութիւն : 5. Քարոյական :

27. Շեղագիր բառերը յարմարցնել կէտերուն տեղ :  
..... Հոգւոյն ..... :

Գանձ , առաքինութիւն :

Աւելի պէտք է ագահ ըլլալ ..... քան ..... :

Ժամանակի , դրամի :

Վայելէ՛ նախախնամութեան բարիքը , ահա ..... , վա-  
յելիլ տուր ուրիշներուն , ահա՛ ..... :

Առաքինութիւն , ինաստութիւն :

Կրօնքը միայն կրնայ պատրաստել ..... քաղաքացի .....  
հպատակ ..... սպասաւ որ ..... տէր , ..... դատաւ որ ..... իշխան .....  
քարեկամ :

Բարի , հաւասարիւն , խոնարհ , համբերաստ , ճշ-  
շարիտ , անաչառ , գրած :

---

## ԴԱՍ ԻԲ.



### ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿՆ

Ոչխարներու հօտ մը ապահովութեամբ կը մակաղէր իր փարախիկն մէջ . շուները կը քնանային , և հովիւը քարճաքերճ կնճենոյ մը հովանոյն տակ նստած , սրինգ կը զարնէր ուրիշ մերձակայ հովիւներու հետ : Սոխաշուկ գայլ մը եկաւ , փարախիկն պատռուած քէն , հօտին վիճակը զննելու համար : Անփորձ գառնուկ մը որ երբէք բան մը տեսած չէր , անոր հետ խօսակցութեան սկսաւ : — Ի՞նչ կը վնտուէք հոս — , ըսաւ շատակերիկ , — Փափուկ և ծաղկախիթիթ խոտ — , պատասխանեց անոր գայլը : Գիտենք որ չկայ առաւել քաղցր բան մը քան ճարակիլ դաշտագեղ , ծաղկառէտ մարգագեցնի մէջ , իր քաղցր յագեցնելու համար , և



երթալ անցնել իր ծարաւն ակնակիս վտակէ մը ,  
երկուքն ալ գտայ հոս : Այլ եւս ի՞նչ բանի պէտք  
կայ : Կը սիրեմ փիլիսոփայութիւնն որ սակաւով  
շահանալ կ'ուսուցանէ : — Իրա՞ւ է ուրեմն, կրկնեց  
գառնուկը որ կենդանիներու միս չես ուտեր և  
դոյզն խոտ մը բաւ է քեզի : Եթէ այսպէս է ,  
եկուր եղբայրաբար ապրինք և ի միասին արա-  
ծինք : — Իսկոյն գառնուկը վարախէն դուրս կը  
ցատկէ , և մեր սակաւապէս փիլիսոփայն զայն գե-  
շագէշ պատուելով՝ կը կլէ :

Մի՛ վստահիք գեղեցիկ խօսքերուն այն մար-  
դոց որ առաքինի կը ձեւանան : Դատեցէք զա-  
նոնք իրենց գործերէն ու ոչ թէ խօսքերէն :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —

## ԴԱՍ ԻԳ.

29. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :
30. Հետեւեալ առածներուն մեկնութիւնը շարա-  
դրել .
  1. Կարկուտէն փախանք , անձրեւի բռնուեցանք :
  2. Մէկուն յիթէն բռնել :

3. Ամէն փայլուն բան ոսկի չէ :

4. Անցուկը մոռցուկ կ'ըլլայ :

5. Խնքը քուն՝ բաղդն արթուն :

31. Մէյմէկ բառեր յարմարցնել կէտերուն տեղ :

Աստուած է որ կը վարձատրէ ..... , կը չարժէ ..... , կը փթթեցնէ ..... , կը հասունցնէ ..... , կը դեղնեցնէ ..... , կը ծագէ ..... , կը գոռացնէ ..... , կը լուսցնէ ..... , դալարադեղ կը զարդարէ ..... :


Երկչտոր ինքդինք ..... կը կարծէ , ագահը ..... , շռայլը ..... , յամառը ..... , բարկասիրտը ..... , հպարտը ..... , շատախօսը ..... :

Աստուած , ջուր տուր ..... , ստուեր ու ցօղ ..... , առողջութիւն , ..... հաց ..... , բնակարան ..... :

Լաւագոյն է կորսնցնել խնձորը քան անոր ..... , հունքուն ..... : Չկայ վարդ առանց ..... , երկինք առանց ..... , ծով առանց ..... , թռչուն առանց ..... :

---

## ԳԱՍ Ի Գ.



### ՈՉԻՍՐ ՈՒ ԳԱՅԼ

Գայլ առ ոչխար այսպէս կ'ոռնար.

— Աւետիս քեզ, ոչխար եղբայր,

Գովիդ դուռը բանայիր

Աւետիսըս լսէիր :

Օրհնած ժամանակն ահա՝ ալ հասաւ

Դարն այն սիրոյ, ժամանակն անցաւ,

Զոր աւետած է մարգարէն

Մեզ ամենուս՝ շատ կանուխէն .

Զէ՛, գրուած է մէջ սուրբ գրքին,

«Գայլք և գառինք ի միասին

ճարակեցին» :

Բա՛ց դռնակդ, արածինք մէկտեղ

Ա՛հ սիրալիր վարենք կեանք անմեղ : —

Ոչխար ներսէն պատասխանեց .

— Գրեւ կարդալ ես չեմ գիտեր ,  
Միայն թէ ես լսեր եմ , մէջ սուրբ գրքին  
Այդ տողէն ետք գրուած կայ սա՛ խօսքն անդին .  
« Առիւծ իբրեւ զեզն յարդ կերիցէ » .

Առիւծ տեսա՞ր դուն որ յարդ ուտէ : —  
— Հապա տեսայ , դուռդ բաց որ դուն ալ ինծի պէս  
Աչքով տեսնես ու հաւատաս արագապէս : —  
— Իմ տեսնելու պէտք չկայ , ոչ , այլ տամ իմաց  
Գրող կարդացող շնիկ աղբօրս . —

Ոչխար խկոյն այնպէս մէ՛ , մէ՛ ուժգին մայեց  
Իր շունն անդէն լսեց , հասաւ , գայլը բռնեց ,

Կը խածնէր

Կը պատժէր ,

Աստուծոյ գրքի այս նոր մեկնիչը


Եւ խաղաղութեան այս նոր բանբերը :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

33. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## ԴԱՍ ԻԵ.



### Է Շ

Որքան շատ բան կը կարդանք ու կը խօսինք շնտանի կենդանիներուն շատերուն՝ կովին՝ ոչխարին ու ձիուն վրայ, բայց խեղճ իշուն չէ թէ միայն խօսքը չենք ըներ, այլ երեսն անգամ չենք ուզեր նայիլ: Բայց ի՞նչ, միթէ կը կարծես թէ նա միւս կենդանիներէն պակաս արժանաւորութիւն ունի, կամ անոնցմէ նուա՞ղ ծառայութիւն կը մատուցանէ մարդկութեան: — Ո՛չ: Միայն մարդիկ առ հասարակ խեղճ կենդանւոյն անունը նախատանքի առարկայ մը դարձուցած են: Բայց մենք թողլով այդ անսեղի նախապաշարումները, անգամ մըն ալ այս կենդանւոյն վրայ աղէկ ուշադրութիւն դարձնենք: — Էջն իր ակռաներու և

ամբակներու կազմութեամբ . ձիու կարգին կը պատկանի , թէեւ պոչը կովու պոչին աւելի կը նմանի : Առաջին նայուածքիդ աչքի կը զարնէ անոր խոնարհ ու բրդոտ գլուխն՝ երկու անհամեմատ երկար ականջներով :

Չանագան գոյնով և մեծութեամբ կ'ըլլան էշերը , բայց ընդհանրապէս մոխրագոյն : Չայնը խիստ անախորժ է , և թերեւս անոր համար է որ այս համեստ կենդանին այնքան արհամարանք կը կրէ , բայց կ'ըսեն թէ իշուն զուալն անգամ անխորհուրդ չէ , իբրեւ թէ ատով կը գուշակէ թէ օդը պիտի փոփոխուի և չորութենէ խոնաւութեան դառնայ . էշը խոնաւ օդը չսիրեր :

Էշը տաք ու քարեխառն կլիմայի կենդանի բլլալով՝ երկարատեւ ու ցուրտ ձմեռուան չգիմանար : Յաւալի է որ ցուրտ կլիմայի չէ ընտելացած անիկայ , որովհետեւ իբրեւ օգտակար կենդանի՝ սա առաւելութիւնն ալ ունի որ շատ դիւրաւ և ատան կը պահուի . առանց բժականութեան կ'ուտէ նա ամէն տեսակ խոտեր և փուշեր որոց ձին չմտենար անգամ : Միայն խմելու ջուրը շատ մաքուր պէտք է ըլլայ :

Թէեւ դանդաղ , բայց չափազանց համբերա-  
տար է , և իր փոքրիկ հասակին հակառակ՝ կար-  
ծուածէն աւելի ուժեղ :

Զուարճալի է տեսնել թէ ինչպէս զառիվեր  
և զառիվայր շարիղներէ զգուշութեամբ կ'ելլեն  
կամ կ'իջնեն ծանր բեռնաւորուած էշեր . երբեմն  
անոնց վրայ նստող գիւղացիք կը հարկադրին կա-  
րելի եղածին չափ ոտքերնին վեր առնուլ ամփո-  
փել որպէս զի գետնին չդպչին : Իշու քայլերն  
այնքան ամուր են ու հաստատ , որ մարդիկ նա-  
խապա տիւ կը համարին լերանց վտանգաւոր ու  
նեղ շաւիղներէն իշով անցնիլ քան թէ ձիով : Ու-  
րեմն էշը լեռնոտ երկիրներու մէջ այնքան կարե-  
ւոր է որքան ուղտն անցրդի անապատներու մէջ :  
Բայց այս օգտակար կենդանւոյն հետ մարդիկ  
չատ անգթութեամբ կը վարուին , շարունակ մըտ-  
րակով կը ճեծեն զայն , և մինչեւ իսկ կը վիրաւո-  
րեն , և եթէ ձիէն աւելի հաստ կաշի չունենար  
անիկայ՝ ի՞նչ պիտի ըլլար խեղճին վիճակը : Բայց  
չկարծէք թէ էշերը միշտ սյապիսի տանջանքի են-  
թակայ են . ո՛չ , շատ տեղեր ալ անոնց տէրերը  
գոժուարութեամբ կը փոխեն զանոնք ձիերու հետ :

Քելագրութիւններ . — Հարցումներու վերածել :  
35. Շեղագիր բառերով խօսք կազմել :

## Դ Ա Ս Ի Զ .

Շարագրութիւն , ճղու մը առակը իր սիրելի մօր  
սօնախմբութեան առթիւ . — 1. Տեղ , թուական : 2.  
Տիգրան իր մեծ մօրը կը գրէ թէ տարիէ մը իվեր զըպ-  
րոց կ'երթար : 3. Ինչ մը մեծկակ կը գրէ , բայց այսու-  
հետեւ աւելի փութաջան պիտի ըլլայ յաջորդ տարին :  
4. Իր մեծ մօր տօնախմբութիւնը կը շնորհաւորէ : 5.  
Վերջաւորութեան բանաձեւ ու ստորագրութիւն : 6.  
Հասցէ :

26. Շեղագիր բառերը յարմարցնել կետերուն տեղ :  
..... կորուսող կը գարմանուի , ..... կորուստն անդար-  
մանելի է :

Դրամի , պատիւի :

Մի խօսիք ձեր — վրայ հիւանդի մը առջեւ , ոչ ալ  
ձեր ..... վրայ թշուառի մը առջեւ :

Հարսութիւն , առողջութիւն

Ինչ որ է ..... հողին համար , նոյն է ..... հողւոյն համար :

Մշակութիւն , դաստիարակութիւն

---



## Գ Ա Ս Ի Է .

### Գ Ա Յ Լ ՈՒ Մ ՈՒ Կ

Գայլը ֆաղցած խլեց հօտէն մէկ դէր ոչխար ,  
Եւ սիրտը դող՝ վաղեց փախաւ ան անտառ ,  
Հոն ոտք գրաւ թէ չդրաւ ,  
Խեղճ կենդանին գետին զարկաւ ,  
— « Ա , յ , պոռալով ապուշ անխելք ,  
« Քիչ մնաց որ զիս տայիր ձեռք ,  
« Ինչ և իցէ , ըսաւ պրծանք  
« Ա , յ անգամ ալ անվճա'նզ » :

Գոխեց փորին սուր ակռաներ .

Դունչն ետեւէն կռեց ի խոր ,

Ինչ կար չկար լափեց բոլոր ,

Խառն ճարպով լի աղիվներ ,

Սիրտ , թոք , փայծաղ

Արիւնթաթախ :

Եւ մէկ ժամէն . ի'նչ կը կարծես ,

Կերաւ գիրուկ ոչխարին կէս ,

Մնացածին աչքը վրան ,

« Թողունք ըսաւ , այդ ալ վաղուան » :

Ուռած արկուած սատակի պէս  
Շընթրոկեցաւ գետնին երես ,  
Դրացի մուկն որսին հոսէն  
Արտորնօք դուրս ելաւ ծակէն :  
Պինչը գէպի հոն շակելով ,  
Եկաւ հասաւ նա գայլին քով ,  
Եւ ոչխարէն քրդուն մ'առած՝  
Քշքշելով իր ծակ գնաց :  
Իր խոր քունէն գայլն արթնցաւ  
Բարկութենէն կրակ դարձաւ ,  
Կանչ մը վերցուց անհնարին ,  
Լեռներ ձորեր կը թնդային :  
« Հա՛ , պահապանք , հասէ՛ք կանչէր ,  
« Անտառին մէջ գո՛ղ է մտեր ,  
« Եկէ՛ք բռնենք անզգամն այն ,  
« Որ արժանի է խիստ մահուան » :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Բարոյական :

38. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## ԴԱՍ Ի Ը.

39. Հետևեալ առածներուն մեկնութիւնը չարագործի քիչ մը ընդարձակելով :

1. Դուն քեզի օգնէ, Աստուած ալ քեզի օգնէ :
2. Մարգարէն իր գաւառին մէջ պատիւ չունի :
3. Չունիս փող, մտիր հող :
4. Զուի գող, ձիու գող :
5. Ինը չտուած, տասը ձեռք չիյնար :

---

## ԴԱՍ Ի Թ.

### ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԵՒՈՐ Է ՄԱՆԿԱՆ

Տեսէ՛ք սա հինցած կաղնիի ծառն որ դեղին պարծանքն է, ի՛նչ հաստ կոճղ ունի, ինչ ամուր ու շատ ճիւղեր, ի՛նչ խոր արմատ գետնին մէջ, որուն վրայ ծառը իր ծանրութեամբը կեցեր է :

Թռչունները անոր ճիւղերուն մէջ կը դնեն բոյներնին, ոչխարներն անոր քով կը ժողվուին, կը նստին, անոնց մէջէն ամենէն ծերն ալ ծառին

մատչաշուքիւնը տեսած չէ . մարդիկ աշխարհ ե-  
կեր անցեր են , անտառին ծառը նոյնպէս մնա-  
ցեր է 200 ձմեռ անցնելէ ետքն ալ :

Բայց եղած է ատեն մը որ սա ծառն ալ մէկ  
խողակ մընէր ինչպէս որ հիմայ իր չորագին սրժ-  
ուած են : Այն խողակին որուն վրայ հազիւ քանի  
մը կաթիլ ցօղ կ'իջնար , ծառը իրեն սերմովը մէջը  
սեղմած էր . այդ հաստ կոճղը , այդ ճիւղերը ,  
այդ անհատնում տերեւները , ամէնքն ալ մէկ խո-  
ղակէ մ'ելեր են : Ծառը կամաց կամաց կը մեծ-  
նայ , ճիւղերու կը բաժնուի , անունդը կ'առնու  
հողէն՝ որ անձրեւով կը պարարտանայ , ու ցօղը կը  
ծծէ : Բայց հողն , անձրեւն , ցօղը , չեն կրնար  
առանց խողակի բան մը բուսցնել , կամ խողակը  
բուսնելէն արդիւիւլ որ կաղնի մը չըլլայ :

Տղան ալ խողակի մը կը նմանի . հետզհետէ  
կը մեծնայ . ծնած ատենը մէկտեղ կը բերէ իր ա-  
մէն տեսակ կարողութիւններն՝ սերմը ու խելքը ,  
դատողութիւնը , յիշողութիւնը , աղէկն ու գէշը  
ճանչալը , արդարն անիրաւէն որոշելը , ստոնք  
բոլոր իրեն հետն են :

Մտածէ մէյմը ամենէն իմաստուն մարդը , որ

Ճանչցած ըլլաս կամ լսած ըլլաս , կամ անիկայ՝ որ մեծ ծառի մը պէս իրեն նման մարդոց վրայ թեւեւրն ու օգնութիւնը կը տարածէ , ու ըսէ մտքէդ . այս մարդն ալ ինծի պէս տղայ եղած է , ինծի պէս սօգէտ , ատեն մը եղեր է՝ որ ոչ չարը բարիէն , և ոչ իրան սուտէն կրնայ եղեր զատել :

Թէ որ այս խողակը տեսած չըլլայիր , չէիր կրնար հաւատալ կաղնի ծառին մեծութեանը և ուժին , թէ որ խնաստունի հետ չխօսէիր , չէիր կրնար տղայ մը տեսնելով՝ իմաստութեան հաւատալ :

Գիտութիւնը խելքի կերակուր է . ինչպէս են հողն , անձրեւն ու ցօղն ծառին՝ որ արմատը գետնին տակ կ'երկնյնէ : Խելացի գիրքեր միտքը կը անուցանեն ու անոր կարողութիւնները կը տարածեն , և մեծցնելով կը շատցնեն :

Ուրեմն քանեցո՛ւր միտքդ , անոր հարկաւոր եղած սնունդը տուր , որպէս զի մեծնայ :

Կաղնին մինչեւ որ այդ հասակը անցաւ , ո՛րչափ տարիներ անցան , քանի՞ եղանակներ փոխուեցան՝ երբոր այն գետ մատղաշ տունկ մըն էր , այնպէս որ տղայ մըն ալ ձեռքով կրնար քաշել

հանել, շատ ատեն անցաւ մինչեւ որ ծառ ըս-  
ուեցաւ :

Ասանկ ալ տղայն մարդ ըլլալու համար՝ շատ  
տարիներ կ'ուզէ :

Կրնայ ըլլալ որ խողակը հողին մէջ կորսուի,  
մատաղատունկն ճիւղերը կորսնցնէ, ծառը կտորի,  
բայց մեծնալէն ետքը՝ պէտք է որ կաշնի ըլլայ,  
չէ՞ր կրնար ըլլալ որ մէկ եղանակին մէջ տերեւ ու  
ծաղիկ տուող ծառը միւսին մէջ չտայ, ինչպէս  
կան ծառեր որ նոյն տարուան մէջ կը ծլին ու նոյն  
տարին կը չորնան :

Տղայն ալ կրնայ խելացի ըլլալ, կրնայ ան-  
խելք, բայց մեծնալուն պէս մարդ կըլլայ, իր  
քնութիւնը անասունի չնմանիր, իր հողին անմահ է :

Նայէ՛ որ հողաս հողիդ, գիտութեամբ ու  
ժողցնես, գիտնաս որ Աստուծոյ պատկերն է հո-  
դիդ, ու Աստուած է տուեր քեզի զայն :

Կաղնին հարիւրաւոր տարիներ կը կենայ,  
մարդուս միտքը անմահութեան համար ստեղ-  
ծուած է :

Մի՛ արհամարեր տղան, մի՛ աւրչակեր Աս-  
տուածային պատկերը :

Փելադրուքիւններ . — Հարցումներու վերածել :  
41. Շեղագիր բառերով խօսք կազմել :

---

## Դ.Ս.Ս 1.



### ՑՈՐԵՆՆ ՈՒ ՔԻՍՏ

—Այս ի՞նչ շատ ձիրք մեզ ես տուած ,  
Փառք քեզ , Աստուած :

Ի՞նչ սակայն , Տէ՛ր , վեր գլխուն մեր

Այս անշահ ֆիւսղ բեռ ես դրեր

Որ ինձ դէմ կարծես ծաղրի ես ելեր՝

Իրենց սուր քիթեր տնկած դէպի վեր :

Ի՞նչ են ասոնք , տունկ , բո՞յս , ծաղիկ .

Գոնէ կ'ըլլա՞ն կարճ աւելիկ : —

Յորենուկ տակաւին լուսծ չէր ,  
Ահա քիստ « քուրուկս , կը հեծծէր ,  
Դուն որչափ մեծ բարիք ես ,  
Բայց առանց իմ ոչինչ ես :  
— Վա՛յ խելքիդ , այ քիստ . կը մտածե՞ս .

Թէ ինչ կ'ըսես :

Շատ մի խօսիր ,

Զայս լաւ գիտցիր

Թէ երբ խօսի նշնարժու թիւն

Ամաչելէ կը մանես դուն

Գետնի տակ

Ով ցորեակ :

Գիտե՞ս , այնքան լեցուն քիստերէն

Զպահպանուիս , կը խաշխշիս հրակէզ արեւէն .

Նաեւ թռչուններն դքեզ կը կտցեն , եթէ քիստերէն  
Իսկոյն խեղդանան ըլլալուն ահէն զիրենք զերծ  
կարծեն :

Այսպէս ոչ մէկ իր գիտցի՛ր , ցորեն ,

Տէր զուր չէ ըրեր , տգէսներն են

Որ կը կարծեն , թէ այն բաներ՝

Աստուած անպէտ՝ զուր է ստեղծեր :





**Քելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —**  
**Բարոյական :**

43. Շեղագիր բառերէն մէյմէկ նախադասութիւն  
կազմել :



## **Դ Ա Ս Լ Ա .**

**Շարադրութիւն , մտամուտ գիտնականը . — 1. Ք .**  
**անուն գիտնականը մտամուտը է :** 2. Օր մը կը կար-  
ծէ թէ իր բարեկամին տունը մոռցած է իր ոսկիէ ծը-  
խատուփը : 3. Փոքրիկ տոմսակ մը կը գրէ անոր . (չարա-  
դրեցէ՛ք այս տոմսակը) : 4. Տոմսակը գոցելու պահուն  
կը գտնէ ծխատուփը , այս պարագայն ալ յետ գրութեան  
յաւելուածով կ'իմացնէ իր բարեկամին , (չարադրել այս  
յաւելագիրը) , և տոմսակը կը ղրկէ դարձեալ իր բարե-  
կամին :

44. Հետեւեալներուն մէջ շեղագիրները իրենց բը-  
նական կարգին = գաղափարներու կարգի վերածել :

1. Ամէն տարի ծառերը կը ծածկուին սաղարթներով ,  
պտղերով , կոկոններով , ծաղիկներով :

2. Եւա կերաւ ..... քաղեց արգիլուած ծառին պը-  
տուղէն :

3. Միտքը կը դասե ու կը բաղդասե :
4. Գիտերը կ'ոռոզեն դաշտերը, կը բապիին ծովը . կը բուսցնեն երկիրը :
5. Ոճրագործը բռնուեցաւ, դասուեցաւ, բանսարկուեցաւ, գլխասուեցաւ, դասապարսուեցաւ :

---

## ԴԱՍ ԼԲ.

### Չ Ո Ր Ր Ո Ր Դ Վ Ա Ր Ժ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ր Կ Ն Ա Կ Ա Մ Ա Ր

Երբ սենեակի մը մէջ կանգուն կենանք, մեր ոտքերուն տակ կ'ըլլայ յատակը, իսկ մեր գլխուն վերեւ՝ առաստաղը : Բայց երբ դուրս ելլենք փողոցը, այգին, դաշտը, ան ժամանակ մեր ոտքերուն տակ կ'ըլլայ երկիրը, իսկ վերը երկինքը ոչ իբրեւ ցած առաստաղ, այլ անհուն բարձրութեամբ թխրեղանման կապոյտ կամար : Այս բարձրը և սփանջեղապէս գեղեցիկ կամարին վրայ շատ նշանաւոր երեւոյթներ կը տեսնենք . ցորեկը՝ շուսապայծառ արեգակը, դիշերը՝ ճաճանյագեղ լուսինը և թխրաւոր շողշողուն աստղեր . երբեմն կը տեսնենք թափառական գիաւոր աստղն, որ

Իր երկար վարսով այնքան երկիւղ կ'ազդէ նան-  
օանհաւաս մարդոց : Ասոնցմէ զատ գրեթէ միշտ  
երկինքին վրայ կը թափառին բազմաթիւ ամպեր ,  
երբեմն մթագոյն , երբեմն կապտագոյն , իբրեւ  
սպիտակ լեռներ , որոնք յաճախ իրիկուան վեր-  
ջադրոյսի կամ առաւօտեան արշադրոյսի ճառա-  
գայթներէն լուսաւորուելով կը փայլին ոսկւոյ պէս :  
Շատ անգամ ամպերուն մէջ կը տեսնենք հրացայտ  
կայծակն և անձրեւէն ետքն յաճախ կը զուարճա-  
ցընէ մեր աչքերը փառահեղ և երփնետրանց ծիա-  
ծանն՝ իբրեւ գոյնզգոյն նարոս մը , որ աղետնա-  
ձեռ կը պատէ ամբողջ երկնակամարը՝ ծայրերը  
երկրիս վրայ կը թնելով , իսկ շուրջը կը տարածուի  
պայծառ ու կապոյտ երկինքը :

Երբ կանգնինք ընդարձակ դաշտի մը մէջ .  
մեր անարգել նայուածքին առջեւ գնտաձեւ կ'ե-  
րեւայ երկնակամարը . իսկ այն եզերագիծն , ուր  
երկինք երկրիս հետ կը միանայ , մեզի կը թուի  
իբրեւ ահագին չրջանակ մը՝ որու կեդրոնը կը  
գտնուինք մենք : Բայց այդ չրջանակն որ հորի-  
զոնն որորս կը կոչուի՝ կարծես կախարդիչ է . ո՛ւր  
որ երթաք , ձեր կեցած տեղէն հազար մղոն հե-  
ռու ալ սրանաք , ո՛չ միայն այդ չրջանակէն դուրս

չէք կրնար ելլել, այլ միշտ նոյն իսկ անոր մէջ տեղը կը գտնուիք: Ուր որ երթայ մարդ, ամէն տեղ կը տեսնէ երկնակամարն իր գլխուն վրայ բարձրացած և ինքն ալ հորիզոնին մէջ տեղ կանգնած, կամարին նոյն իսկ ամենաբարձր կէտին տակ: Վերջապէս ամբողջ երկրագունտը պտտելով հաստատապէս կը համոզուինք թէ ոչ մէկ տեղ երկինքը երկրիս հետ միացած է, անիկա մեզի երկու կամար կը թուի, բայց իսկապէս ո՛չ թէ կամար է, այլ թափանցիկ օդը որ կը շրջապատէ երկիրը և իր անհուն բարձրութեան և թանձրութեան պատճառով, ծովու ջուրի պէս կապոյտ կ'երեւայ: Օդը կամ մթնոլորտը 90 քիլոմէթր թանձրութիւն ունի: Այն կապտագոյն օդին մէջէն կը տեսնենք արեգակը, լուսինը ու աստղերը. իսկ ամպերը, ինչպէս յայտնի է ձեզի, ո՛չ թէ երկինքին վրայ այլ օդին մէջ կը լողան: Գալով ծիածանին, ան իր երկու ծայրով չկրթնիր երկրի վրայ, ինչպէս կը կարծեն շատեր, այլ մի միայն արեւին ճառագայթներուն քնկքնկումն է: Արդարեւ եթէ պայծառ օր մը արեւուն ճառագայթներուն ներքեւ ջուր սրսկենք, կրնանք տեսնել թէ ինչպէս վայրկեանին մէջ ջրի կաթիլներուն մէջ կը փայլի քաղ-

վերանց ծիածանը : Ծիածանի երեւոյթը կը յայտ-  
նուի նաեւ երբոր շիշ մը ջուր դնէք պատուհա-  
նին առջին՝ արեւին դէմ : Այդ կը նշանակէ թէ  
Ծիածանը , թէեւ աղեղնածեւ կը թուի մեզի , կա-  
մարածեւ է :

Թելադրութիւններ . — հարցումներու վերածել :

46. Շեղադիրներով մէյմէկ նախադասութիւն կազ-  
մել :

## Դ Ա Ս Լ Գ .

47. Շարադրել . սանդուխին անփնանները :

1. Սանդուխի մը վերին աստիճանները արձամար-  
հանքով կ'խօսէին ստորին աստիճաններուն հետ : (Տը-  
րամախօսութիւն) :

2. Խելացի մարդ մը վեր վայր կը դարձնէ սանդու-  
խը ..... : Հետեւութիւն :

3. Կեանքի մէջ ալ յաճախ այս բանը կը պատահի  
երջանիկ ու դժբախտ մարդոց : 4. Բարոյական :

Գաղափարներու կարգ :

1. Յիսուս Բրիտոս մարգարէներէն զուշակուե-  
ցաւ , Հրէաստանի մէջ պտրեցաւ , Յուդայէն մաս-  
նուեցաւ , քառասուն օր իր աշակերտներուն հետ ան-  
ցուց . խաչեցաւ , ու Կոյսէն ծնաւ , Աւետարանը քա-

բողեց, երկինք համբարձաւ, Հօր Աստուծոյ աջ կողմը  
նստաւ, դժոխք իջաւ, գերեզմանն դրոնցաւ, յարեաւ,  
դատապարտուեցաւ :

2. Փախայ օձ մը նշմարեցի :

3. Գորտը նշմարեց եզը, պայթեցաւ, ուռեցաւ,  
փափաքեցաւ անոր մեծութեան, ուզեց անոր նմանիլ :

4. Յուդայ յուսահասեցաւ, ինկզինկ կախեց ու վա-  
ճառեց իր Տէրը :

---

## Դ Ա Ս Լ Դ .

### Ե Ր Ա Ժ Ի Շ Տ Ն Ե Ր

Մռ. քիթ կապիկն ու արջ թաթեղ .

Երկայն ականջ էչն, այծ մօրուեղ,

Օր մը, չգիտեմ, որ սուրբին էր,

Ուզեցին լաւ երգ մ'յօրինել :

Գտան քնքռուկ մը ծակ . փնար անոշոր,

Հին կիսաձայն տիկ մ'ու սրինգ ջախջախած,

Ուռենույ մը զով շուքին տակ կէս բոլոր

Մեր պարոնայքն շարուեցան երգասաց .

Կը զարնէին ջանքով ամէնն իր գործիք,

Բայց այլանդակ ձայնէն խլացան լսելիք :

Վեր յատկեց հոն իսկոյն աշխոյժ մեր կապիկ .  
« Կեցէ՛ք , կեցէ՛ք , պողոսց իզուր չյողնիք .  
Ի՛նչպէս կրնայ մեր երգն ըլլալ ներդաշնակ ,  
Խառնաբնդոր երբ մենք բազմինք այս տեսակ .  
Դու , արջ եզբայր , թմբուկովդ աջ կողմն կեցիր ,  
Փողահար դուն ալ , պարոն էշ , ձախս անցի՛ր ,  
Ես ալ այժին դէմ հոս նստիմ ֆնարահնար  
Հապա՛ սկսինք նոր եղանակ ու նոր պար » :  
Փոփոխուեցան տեղերն այլ ոչ եղանակ .  
« Այսպէս չըլլար բան , բարեկամք , արջն ըսաւ ,  
Թէ որ անոյշ երգ մը զարնել կամենաք ,  
Երիցուլթեան հարկ է նստինք մենք կարգաւ » :  
Զուր տեղ Արջուն հետեւեցան նոր գիւտին ,  
Ելան դարձեալ փոփոխեցին տեղերնին ,  
Նորէն աղմուկ , նոր աղաղակ , նոր շփոթ ,  
Երաժշտաց ջանիցն արդիւնք համառօտ :  
Յանկարծ ծառին ծայրն էջ սոխակ մ'երկնքէն .  
Ուրախութեամբ մէկէն ասոնք կը կանչեն ,  
« Բարով եկիր , չքնաղ հումներ հրաշախօս ,  
Շնորհք մ'ըրէ , լաւ մը կարգի դիր մեզ հոս .  
Ունինք ահա քնար ու տիկ և սրինգ ,  
Ըսէ՛ միայն ի՞նչ կարգով հարկ է բազմինք » :

« Կարգաւ անոյշ ձայնի ու կիրք ականջաց » .  
Ըսաւ սոխակն ու խնդալով թռաւ գնաց :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Բարոյական :

49. Շեղագիր բառերով խօսքեր կազմել :

---

## Դ Ա Ս Լ Ե .

### Պ Ի Ի Թ Ա Գ Ո Ր Ո Ս

Այն անձն որ առաջին անգամ յղացաւ այն կարծիքը թէ երկիրս կը շարժի՝ Պիթագորոս յոյն իմաստասէրն էր , որ Քրիստոսէ 500 ասրի առաջ կ'ապրէր : Իր երիտաւարութեան ժամանակ Պիթագորոս շատ ճամբորդեց և ամէն տեղ մեծ ջանքով ուսաւ ինչ որ ուրիշ մարդիկ գիտէին , ուշագրութեամբ հետազօտելով ամէն իրեն պատահածները : Դառնալով իր ծննդավայրը Յունաստան , բազմաթիւ աշակերտներ ժողվեց իր շուրջն և շատ խելացի գաղափարներ հաղորդեց անոնց : Ուրիշ շատ բաներու հետ սա ալ կը յայտնէր թէ երկիրս անշարժ կեցած չէ՝ այլ կը շրջի , և որուն հետե-



ւանքն են գիշեր և ցորեկ, թէ երկրագնտին ո և է մասը. երբ դէպ ի արեգակը կը դառնայ, այն մասին վրայ ցորեկ կ'ըլլայ, իսկ երբ արեւին ճառագայթներուն հանդիպակաց կողմը դառնայ, այն ժամանակ այն տեղ գիշեր կ'ըլլայ: Պիւթագորոս շատ խոսակեաց էր. քիչով բաւականացող: Թէեւ կռապաշտ (հեթանոս) էր, բայց կը հաւատար հոգւոյ աննահուրքեան, Աստուծոյ ամենակարողութեան և բարութեան: Այս պատճառով ալ իր հոգւոյն անդորրութեան կ'սպասէր ապագային մէջ, և անտարբերութեամբ կը կրէր կենսական ծանր դժբախտութիւնները: Ուստի զարմանալի չէ որ երկար ապրեցաւ, թէեւ իր ծերութեան ժամանակ շատ զրկանք կրեց չարաբարոյ մարդոց կողմէ, և ինչպէս կ'ըսեն, սարսափելի աղքատութեան մէջ գրեթէ անօթութենէ մեռաւ: Բայց եթէ այս բան ճշմարիտ ալ ըլլայ, դարձեալ պէտք է նախանձիլ մեծ իմաստասէրին բախտին, որովհետեւ իր հանճարեղ զբաղումներուն շնորհիւ ա'յնքան ճշմարիտ գովութեան նիւթ ստացաւ, որքան ամենահարուստ մարդ մը իր բոլոր փարքամութիւնով չի կրնար ստանալ:

**Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —**  
**Բարոյական :**

51. **Շեղազիր բառերով մէյմէկ խօսք կազմել :**

~~~~~

## Դ Ա Ս 1, 2.

52. **Շարադրել , ուսուցչին ուղղեալ նամակ :**

1. **Տեղ , թուական :** 2. **Աշակերտ մը իր ուսուցչէն հրաման կը խնդրէ՝ յառաջիկայ բչ . որ բացակայ ըլլալու համար (չարժատիթ մը հնարեցէք) :** 3. **Իր փաստերը կը պարզէ (փաստիր գտէք) :** 4. **Կը խոստանայ թէ պիտի դարմանէ ժամանակի այն կորուստը (ինչպէ՞ս) :** 5. **Բանաձեւ վերջաւորութեան , ստորագրութիւն :** 6. **Հասցէ :**

**Գաղափարներու կարգ . ընական կարգի վերածել հետեւեալները :**

1. **Քնննալուն պէս պառկեցաւ :**
  2. **Տիտոս կործանեց . պաշարեց ու առաւ Երուսաղէմը :**
  3. **Պառկելէն ետք ընթրիք :**
  4. **Գողը կախուելուն պէս բռնուեցաւ :**
  5. **Մարդուս կեանքը չորս ժամանակներու կը բաժնուի . հասունութիւն , մանկութիւն , երիտասարդութիւն , ծերութիւն :**
-

## ԴԱՍ ԼԷ.



### Փ Ի Ղ Ը

Փիղը ցամախային կենդանիներու ամենամեծըն ու ամենէն ուժեղն է և դիւրաւ կ'ընտելանայ : 4-9 կանգուն բարձրութիւն և 6-8 կանգուն երկայնութիւն ունի . մարմինը 1800 հօխայէն ա-

ւելի կը կշռէ : Փղի կաշին այնքան հաստ ու կարծր է որ հրոցանի գնդապետը անդամ դժուար է ծակել զայն : Գլուխը մեծ է և աւակաւ ինչ երկայն , աչքերը փոքր և իւրանալի , ականջներն լայն և կախուած : Փիղը վերին ծնօտին վրայ միայն երկու առաջնասամներ ունի . սեղմնասամներու թիւը զանազան է . — մէկէն մինչեւ երեք՝ իւրաքանչիւր ծնօտի վրայ : Ժանիքները երկու են , որոնցմէ իւրաքանչիւրն մինչեւ երկու մեթր երկայնութիւն ունի . բայց իսկապէս ժանիք չեն տանք , այլ արու փղին երկարացած ատամներն որոնք շատ սուղ են և կը վաճառուին փարս անունով : Իսկապէս փիղերը ժանիք չունին , ինչպէս նաեւ միւս խոտաճարակ կենդանիք , և ասով կը զանազանին իրենց ցեղակից ամենակեր խողէն : Փիղի ոտքերը հաստ են և իւրաքանչիւրին վրայ կայ հինգ կճղակ : Սակայն անոր մարմնոյն ամենահետաքրքրական մասը պատճառն է որ քիթին շարունակութիւնն է և չափազանց շարժական : Պատիճն երկու մեթրէ աւելի երկայնութիւն ունի և ընդունակ է ուղած ժամանակը սեղմուելու կամ կարճնալու : Պատիճը փղին համար այնքան գործածական և կարեւոր անդամ մըն է , որքան մեր

Ճեռքը մեզի համար : Անիկա պատիճով կրնայ գետնէն վերցնել թէ՛ ամենամեծ և թէ՛ ամենափոքր բաներ . անով կերակուրը բերնին կը տանի , անով կրնայ պարանի կապը լուծել , գոցուած գուռը բանալ և կրկին գոցել , շիշերու բերնին խցանները դուրս հանել , և այլն : Բացի այս յատկութիւններէն , պատիճը սաստիկ ուժեղ է և անոր մէկ հարուածով փիղը կրնայ դիւրաւ մարդ սպաննել : Անով մինչեւ 60 հոխա ծանրութիւն կը վերցնէ գետնէն , իսկ մէջքին վրայ 500-1000 հոխա ծանր բեռ կրնայ տանիլ . վեց ձիէ աւելի ոյժ ունի նա :

Ատենօք փիղ մը քաղքին մէջ շրջած ժամանակ , դերձակի մը խանութին կը մօտենայ և պատուհանը բաց տեսնելով՝ պատիճը ներս կ'երկընցընէ : Դերձակներէն մէկն ալ զուարճանալու համար ասեղով կը ծակծկէ զայն : Փիղը բարկանալով՝ իսկոյն կ'երթայ տեղ մը աղտոտ ջուր կը գըտնէ , պատիճը լաւ մը կը լեցնէ անով և շուտ մը գառնալով՝ պատուհանէն աղտոտ ջուրը հեղեղի նման դերձակին կարած զգեստներուն վրայ կը լեցնէ և ինքը ճամբան կը շարունակէ : Այդչափ ուշիմ է տաք երկիրներու այդ հսկան : Անոր աչքերը ի

զուր շեն նայիր խմաստալից : Բայց առանց պատիճի  
փիղն ամենալսեղճ կենդանի մըն է և եթէ զրկուի  
անկից , մեռնիլ կը մնայ իրեն . այս պատճառով  
ահա զգուշութեամբ կը պահէ նա իր պատիճը ա-  
ռիւծներու և վագրերու հետ պատերազմած ժա-  
մանակ , որոց շատ անգամ ալ կը յաղթէ . փիղը  
իր պատիճով վեր կը նետէ զանոնք , ապա իր մեծ  
մեծ ժանիքներով վարէն հարուածներ կու տայ  
կամ վար ձգելով իր ոտքերուն տակ կ'առնէ և կը  
հարուածէ զանոնք :

Սակայն իր սաստիկ ուժին հակառակ , խիստ  
հանդարտ բնաւորութիւն մը ունի և երբէք նա-  
խայարձակ չըլլար , այլ ընդ հակառակն միշտ կ'աշ-  
խատի թաքչիլ . բայց երբ բարկանայ , զարհուրելի  
կենդանի մը կը դառնայ :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

54. Շեղագիր բառերով խօսք կազմել :

## ԴԱՍ ԼԸ.

### Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՔ ԵՒ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ

55. Շարադրել, ընդլայնել հետեւեալ հասուածը :

Մինչ 451 ին Գաղկեդոնի ժողովը կը գումանրուէր, Ս. Վարդան որ Ս. Սահակ հայրապետին թոռն էր, և Ս. Ղեւոնդ քահանայն՝ որ Ս. Սահակի ու Ս. Մեսրոպի աշակերտներէն մէկն էր, իրենց անարիտ կրօնասէր ընկերներով, հեթանոսներուն դէմ հայ եկեղեցւոյ հաւատքի պաշտպանութեան համար նահատակուեցան և պահեցին մեր Ս. եկեղեցւոյ գոյութիւնը :

Ս. Ղեւոնդեանք իբրեւ սրբանուէր հոգեւոր պաշտօնեայ Գրիստոսի Ս. Աւետարանին, իրենց անձըն օրինակ հանդիսացուցին, և ամէն պարագայի մէջ հաւատարիմ մնացին մայրենի եկեղեցւոյն :

Ս. Վարդանանց տօնի օրը յիշատակ է Մեռեցոց և տօն է :



## ԴԱՍ ԼԹ.

### ՍԵՒԵՐԵՍ ՄԱՐԴԸ

Չար — մարդ մը կար  
Որ հոգեառ սուրբ հրեշտակին  
Կ'աղերսէր միշտ կողկողացիմ  
Զղումէն ետք առնել հոգին :  
Հոգեառն գութ ունէր , այո ,  
Ներեց քանիցս , բայց ի վերջոյ  
Նշանակեց օր իբր շնորհ վերջին  
Ապաշխարել վրայ մեղքին :  
Բայց ի՞նչ ըրաւ չարն անպիտան .  
Գործեց անվախ մեղք զանազան ,  
Քացաչերուած թէ տակաւին  
Շատ օրեր կայ իր օրհասին :  
Բայց , հազար եղուկ , հասաւ օրն ու ժամ  
Այլ եւս — ապաշառ — էր սարսժամ :  
Ի՞նչ էր ան , շատ մտածեց ,  
Եւ հռակ ուրեմն մէկ գիւտ ճարեց .  
Սեւ իմ երեսս , այսպէս ես ծպցիմ ,  
Հոգեառն խաբեմ , ձեռքէն ճողոպրիմ :



Սեւ մուր քսեց դէմքն ու երես ,  
Անհամբեր կ'սպասէր  
Հոգէառի գալուն :  
Եկաւ հոգէառն ու փայրակնացայց  
Աչքով նայելով՝ ահեղ որսին ,  
« Ժաննսաժոռս չար , էհ , արդէն քեզ ես  
Պէտք ունէի տանիլ սեւ երես :  
Հիմա գոհ եմ քեզմէ որ , զիս ազատած ես  
Այս աշխատանքէս ,  
Սեւցնելով երեսդ աադայերայէս » :

Թելադրութիւններ . — Հատուածներու վերածել . —  
Բարոյական :

57. Շեղագիր բառերով խօսք կազմել :

---

## Դ Ա Ս Խ .

### ԵՐԱԽԱՅԻ ՄԸ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Հօրեղբորս մանչն ութօրեայ էր : Այս կիրա-  
կի կնիսհայրն եկաւ , դայեկը իսանձարուռին մէջ  
փաթթեց մանկիկը , ժամկոչը դիրկն առաւ զայն

ու տարաւ եկեղեցի : Կիներ ս. բարեկամներ խըմ-  
բովին հետը գացին , ես ալ գացի :

Մանուկը մերկացուցին , կնքահօր գիրկը  
տուին ու քահանայն առաւ առագանին մէջ մկր-  
տեց՝ ըսելով . « Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
սրբոյ » : Առաջ քահանայն հարցուց երիցս . « Ե-  
րախայս զինչ խնդրէ » , կնքահայրն երեք անգամ  
պատասխանեց . « Հաւատք , Յոյս , Սէր , և Մկր-  
տութիւն » : Մանուկին ճակատը , աչքը , ակամջը ,  
ձեռքն և այլն Միւռնոնով գրոշմեցին : Մանուկին  
անունը դրին Արամ , մինչ ինք կը ճչէր , կու լար  
անգիտակ այս շարժումներէն :

Թաղական Խորհուրդին գրագիրը բերաւ մեծ  
տետրակ մը , որուն վրայ գրուած է արձանագրութիւն  
ծննդոց : Այս տետրակին մէջ գրեց նորածինին  
անունը , ծնած թուականը , հօրն ու մօրը անունը ,  
կնքահօրն ու մկրտող քահանային անունը : Այդ  
տետրակին մէջ երկու տեղ գրեցին այս օրուան  
թուականը : Կէսը կտրեցին տուին հօրեղբօրս ,  
և միւս կէսն ալ թաղին խորհրդարանը պահեցին :

Այս արձանագրութեան համեմատ թաղին  
միաբարը կը տեղեկագրէ Մարդահամարի Վարչու-

Քեան, որ նոյնպէս արձանագրելով մանուկին ծը-  
նունդը՝ կու տայ անոր Օամանիէ թէզգքէրէն, որով  
կը հաստատուի անոր Օամանեան հպատակութիւնը :

Այդ թէզգքէրէն կարելոր է սանկան ամէն  
մէկ տարիքին և կեանքի այլ և այլ պարագանե-  
րուն :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

59. Ծեղագիր բառերով խօսք կազմել :

Դ Ա Ս Խ Ա .

60. Շարադրել, սիւ, սիւ, սիւ :

1. Մայիսի մէջ (նկարագրել) սոխակ մը կ'երգէր,  
էջ մը կ'ուզէ նմանիլ անոր : 2. Սոխակին կը հարցնէ թէ  
ինչպէս կ'ընէ : Թռչունը կը պատասխանէ (տրամախօսու-  
թիւն) : 3. Էջն ալ կ'ուզէ ընել տիւ, տիւ, տիւ : Զուք  
ջանք : 4. Բարոյական :

61. Գաղափարներու կարգ . — Հետեւեալները բը-  
նական կարգի վերածել :

1. Ցորեկը երեք մասերու կը բաժնուի, միջօրէ, ե-  
րեկոյ, առաւօտ :

2. Նաւամատոյց իջայ, նաւ մը նշմարեցի, նաւը մտայ, մեկնեցանք, առաջաստ բացին, անցագինը տեղեկացայ, խարխախ վերուցին :

3. Կաքաւը բոյն շինեց, թխսեց, ձու ածեց :

4. Վիլհէլմ Թէլ կը շարժէ իր աղեղը, նեաը կը մեկնի, զայն կ'ուղղէ նպատակին, կը շրջէ. բոլոր ժողովուրդը կը ծափահարէ, խնձորը կը զարնէ :

5. Չարերը կը փախչին իրարմէ ու կը կասկածին:

---

## ԴԱՍ ԽԲ.

### ՀՈՂԱԳՈՐԾՆ ԵՒ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ

Հարուստ հողագործ մը իր մահուան մահճիկն Մօտ կանչեց իր մանչ զաւակներն արի, Եւ բսաւ անոնց, միակ ու վերջին Պատուէրս այն է որ չըլլայ օտարի Վաճառելու հանել, յանձնել կաւասիփ Հողն այն՝ զոր թողած են մեզ մեր նախնիփ . Ձի անոր ներքեւ գանձ մը կայ թագուռն :

Ո՛ր կողմ գտնուիլն աղէկ չեմ գիտեր ,  
Բայց քիչ մ'աշխատանք և կամք աննկուն  
Կրնան այն գանձին ընել ձեզի տէր :

Ուստի այս տարի երբ գայ օգոստոս  
Առէ՛ք ձեր դործիքն — արօր, բրիչ, բահ —  
Բացէ՛ք, փորեցէ՛ք ամէն տեղ ակօս,  
Չարօրուած խորչ մ'անգամ չմնայ :  
Մեռաւ հողագործն, իր որդիքն ուժեղ  
Բազկօք և բրչով գետին հերկեցին ,

Տահն ու վրայ ըրին հողերն ամէն տեղ :  
Եւ թէպէտ հետքն իսկ չգտան գանձին ,  
Սակայն տյնքան լաւ հերկուած հողերէն  
Երբ սերմանեցին , խիստ առատօրէն  
Քաղեցին ցորեն , հաճար ու գարի ,  
Եւ լաւ հասկցան թէ իրենց բարի  
Հայրն ուզած էր մեռնելէ առաջ  
Իր զաւակներուն ուսուցանել քաջ  
Թէ աշխատութիւնն գանձ մ'է յաշխարհի :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Բարոյական :

63. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## Դ Ա Ս Խ Գ .

64. Շարագրել , ընդլայնել մեկնելով հետեւեալ առածներ :

Անոյշ լեզուն օձը ծակէն կը հանէ :

Անպտուղ ծառին քար նետող չըլլար :

Բարձր սարին բուքն ու քամին շատ կ'ըլլայ :

Ես գանձ կ'ըսեմ , դուն տանձ կ'իմանաս :

---

## Դ Ա Ս Խ Գ .

### Հ Ա Մ Շ Ի Ր Ա Յ Ի Պ Ա Ր Տ Ք Ե Ր

Բարեկենդանի օր մըն էր . գիւղի մը բնակիչները ուրախութեան մէջ էին . փող ու թմբուկ կը հնչեցնէին և ամէն կողմ խաղ ու խնդում կը լսուէր : Միասին կ'երգէին , կը պարէին , տուներու մէջ ալ կերուխում ու զուարճութիւն կար : Միայն մէկ ընտանիք մը կար՝ որ տանը անկիւնը քաշուած տրտում նստեր էր . որովհետեւ աղքատ էր ու նոյն իսկ հացի կարօտ : Հայրերնին պակաս , մայրերնին հիւանդ , տղայքն ալ անօթի :

Խեղճերն այսքան թշուառ վիճակի մէջ՝ կրնայի՞ն  
երթալ ուրիշներուն հետ խնդալ, խաղալ ու բա-  
րեկենդան ընել : Տղոց մէկը՝ Գնէլ՝ մինչեւ տան  
գուռը եկեր էր ու խմբապարտը կը դիտէր զոր կը  
խաղային գեղացիները . անոնց մէջ էր գեղին մե-  
ծաւոր ծերը : Գնէլ որ շատ անօթի էր զանոնք  
տեսնելով սկսաւ լալ : Մեծաւորը զայն տեսաւ ,  
քովը կանչեց . հարցուց թէ ի՞նչու կուլար , և ո-  
րովհետեւ քարեսիրտ ու աղիաստաւէր անձ մ'էր ,  
շուտ մը մարդ զրկեց իր տունը , ուտելիք բերել  
տուաւ աղքատ ընտանիքին համար : Ուրիշներն  
ալ անոր ըրածին հետեւեցան : Քանի մը վայր-  
կեանէն աղքատ ընտանիքին այնքան նպաստ բե-  
րին որ ամիս մը ապրելու կը բաւէր : Ասոնք ալ  
կրցան բարեկենդան ընել , ընդհանուր ուրախու-  
թեան մասնակցիլ :

### Ա. Ռ. Ա. Ծ

Ով որ աղքատին օգնէ՝ Աստուծոյ փոխ տուած  
կ'ըլլայ :

Թելագրութիւններ . — Հարցումներու վերածել :

66. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## Դ Ա Ս Խ Ե .

67. Շարագրել ու ընդլայնել մեկնելով հետեւեալ առածները :

1. Քարէն կաթ կթել :
2. Տաշուած քարը գետինը չմնար :
3. Մի՛ թքներ այն ջրհորին , որուն ջուրը խմեր ես :
4. Հաց տուէք՝ ուտէ , ջուր տուէք՝ խմէ , ծածկեցէք , անկէ նայեցէք որ հողին չեւէ :
5. Մինչեւ աղը հասաւ , մատաղն վերցաւ :
6. Վազող ձիուն գլխուն մի՛ զարներ :
7. Կատուն միսին չէ հասեր , միանս հոտած է ըսեր :

---

## Դ Ա Ս Խ Զ .

### Փ Ո Ք Ր Ի Կ Բ Ա Ր Ձ Ի Կ Ը

Փոքրիկ բարձիկ սիրական՝  
Կակուղ , գլխուս տակ տկար ,  
Ճերմակ տաքուկ պատուական  
Փետրով լեցուած ինձ համար :  
Հովին ձայնէն երբ վախնամ ,  
Գայլն սւ մրրիկ երբ գողան ,  
Վրադ ննջել միշտ կու գամ ,  
Փոքրիկ բարձիկ սիրական :



Կան անթիւ խեղճ մանուկներ  
Մերկ , մայր չունին , չունին տուն ,  
Եւ բարձ մ'անդամ չեն գտներ ,  
Երբ աչքերնին վիակի քուն :  
Ո՛հ , դա՛ռն բախտ , միշտ քնատ  
Կը տառապին երբ սյսպէս ,  
Անո՛յչ մայրիկ , անընդհատ  
Արիւն կ'երթայ իմ սրտէս :

---

## ԴԱՍ ԽԷ.

### Մ Ա Ն Ո Ւ Կ Ը

Լոյս ժպիտոջն ի՞նչ գեղեցիկ է տղայն .  
Անոյչ , աննեւնգ կ'ուզէ խօսիլ ամէն բան ,  
Արցունքն իսկոյն կը մարի :  
Իր զարմացկոտ աչքն ամէն կողմ կը յածի .  
Կեանքն կու տայ իր թարմ հոգին ծիծաղի ,  
Եւ շրթունքներն համբոյրի :

Տէր , չտեսնեմ , սիրականներս ալ ինձ պէս ,  
Մնողքս , եղբայրս և ոսոխներս անգամ վէս ,  
Որք չարիքով կը յաղթեն .

Թող չտեսնեմ ամառն առանց վարդերու ,  
Վանդակն անհաւ , փեթակըն ալ անմեղու ,  
Տունն անմանաւկ չտեսնեմ :

Քելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Բարոյական :

69. Շեղագիր բառերով խօսք կազմել :

Դ Ա Ս Խ Ը .

70. Շարադրել , ամսօրեայ դասի տեսակը :

1. Ի՞նչ է ամսօրեայ դասի տեսակը . խնամով պէտք է գործածէք զայն , ի՞նչու : 2. Այս դպրոցն ի՞նչ պիտի յիշեցնէ ձեզի ապագային : 3. Ինչպէս պիտի ընէք որ ապահով ըլլաք թէ յառաջադիմած էք :

71. Հետեւեալներուն երկերկու հոմանիշ գտնել :

Զեփիւռ , կարծրութիւն , յաջորդ , ազգական , առեւտուր , որմ , հասակ , արմատ , հովանի , գող , կապ , ուղեւոր :

## Դ Ա Ս Խ Թ .

### Գ Ա Ր Ո Ւ Ն

Երկար օրեր Դեկտեմբեր տասնէն կ'սկսին , իսկ Մարտ իննին ցորեկ ու գիշեր հաւասար կ'ըլլան . այս պատճառաւ գարնան սկիզբը Մարտ իննէն կը հաշուեն : Արեգակը գարնան ժամանակ շատ կը մնայ երկինքի երեսը , ուստի և օր աւուր աւելի կը տաքցնէ զայն : Հետզհետէ ձիւնը կ'սկսի հալիլ և ջուրն առուակի պէս կ'երթայ . գետերուն սառոյցն ալ շուտով կը հալի և ջուրն այնքան կ'ուռճանայ գետերուն մէջ՝ որ շատ անգամ եզերքէն վեր բարձրանալով՝ կը յորդէ շրջակայ մարգագետիկներն ու դաշտերը կ'ողոզէ : Այն փոքրիկ գետերն , որոնց վրայէն ամառը կարելի էր դիւրութեամբ անցնիլ՝ գարնան ժամանակ կը յորդին և կը տարածուին . իսկ մեծամեծ գետերն , որոց մէջ բազմաթիւ գետակներ ու վտակներ կը թափին , գարնան ատեն ծովու չափ կ'ընդարձակին : Դեռ բոլոր ձիւնը չհալած , հոս հոն , հին չորցած խոտերու մօտ , արդէն նոր և դաշար խոտ

կ'սկսի բուսնիլ . խոտին հետ կը բուսնին նաեւ առաջին ծաղիկները : Քարափներու ծայրն ու բլուրներու կողը կը ծաղկի ձնծաղիկը , և այնպէս խիստ կերպով , որ կարծես թէ սպիտակ կտու է փռուած : Այնուհետեւ կը ծաղկի դարնան յայտարար՝ հաւնէս և անուշահոտ մանուշակը : Ծառերը նոյնպէս իրենց ձմեռնային քունէն կը զարթնուն , և արեգակին ներգործութենէն տաքնալով՝ հիւրով կը լեցուին , և սակաւ առ սակաւ կը կանաչնան ու կը ծաղկին : Թուփերն ու ծառերն իրարու ետեւէ կը շտապեն պննիլ Ձատիկի և Կանաչ Կիւրակէի համար : Ի սկզբան ծառերու և թուփերու վրայ կանաչը նօսր ու փոքրիկ կ'երեւի , բայց քիչ ժամանակէն այնպէս կը մեծնան և կը բազմանան անոնք , որ կանաչագարդ անտառները միանգամայն անթափանցելի կը դառնան : Դաշտերու վրայ հազարաւոր ծաղիկներ կարծես դարնան գալուստը կ'ողջունեն ուրախութեամբ :

Գարունը գալուն պէս , թռչուններն ալ բազմութեամբ կ'երեւին : Արժոյցները , ծիծեռնակները , սարեակները , արագիչներն և կռռակները , վերջապէս կկռներն ու սոխակներն իրարու ետեւէ իրենց տեղերը կը դառնան և կ'սկսին բնակու-

Թիւն հաստատել դաշտերու անսառններու ու ծառասռնակերու մէջ :

Աշխատասէր միջիւններ , դոյնդգոյն թիթեռնիկներ , անձողնի բղէզներ և ուրիշ հազարաւոր միջատներ ու զեռուններ ըյս աշխարհ կու գան : Մեզուն որ բոլոր ձմեռը փետրալի մէջ քնացած էր՝ կը զարթնու , և թողլով իր մամեղէն խցիկը՝ կը թռչի կ'երթայ անոյշ մեզր ժողվել ծաղիկներէն :



Իսկ վայրենի չորքոտանիներու վրայ շատ փոքր փոփոխութիւն կը նշմարուի . անոնք ամառ ձմեռ միեւնոյն տեղը կ'ապրին և տաք երկիրներ չեն գաղթեր : Իսոյց և այնպէս անոնք ալ անհամբերութեամբ դարնան դալստեան կը սպասեն : Ար-

ջը , ողնին և միւս ձմեռնային քունի ենթարկուող կենդանիները կ'արթննան իրենց երկարատեւ քրմ-րուքնեցեց, և կ'սկսին իրենց համար ապրուստ արոնել :

Երկրագործ գիւղացւոյն գործերն ալ բնութեան հետ կ'արթննան . անոր թէ ընտանեկան ու թէ անասուններու պաշարը սպառելու մօտ ըլլալով , անիկա կ'սկսի պատրաստել իր երկրագործական գործիները , և երբ գետինը փոքր ինչ տաքնայ ու կակուղնայ , դաշտը կ'ելլէ և կը հերկէ ու կը սերմանէ գարնցանը : Այգեպաններն ու պարտիզպանները զանազան տեսակ բոյսեր և ծաղիկներ կը ցանեն ու կը տնկեն : — Գարնան ամէն ոք ուրախ և զուարթ կ'ըլլայ , նա՛ մանաւանդ աղքատներն՝ որք ձմեռը ո՛չ փայտ ունին և ո՛չ տաք հագուստ : Գարնան ժամանակ Աստուծոյ արեգակը զանոնք ալ ուրիշներուն նման կը լուսաւորէ ու կը տաքցնէ :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :  
73. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## ԴԱՍ Ծ.

74. Շարագրել, Տարեգլխի առթիւ կնիստիօր նամակ :

1. Տեղ ու թուական : 2. Գիրքի մը մէջէն շնորհաւորական մը պիտի օրինակէք, բայց ..... : 3. Նախամեծար կը համարիք որ ձեր միտքին յարմարին ձեր գրեթէլիքները, բարի տարի կը մաղթէք : 4. Ինչ կըսէք ձեր ծնողքին կողմէն : 5. Բանաձեւ վերջաւորութեան, ստորագրութիւն : 6. Հասցէ :

75. Հետեւեալներուն երկերկու հոմանիշ գտնել :

Բիծ, հաց, պատսպարան, փառաւոր, բարակ, անզութ, մեծ, սին, լայն, կլոր, յայտնի, ծանր ( մարդ ), ծանր ( խօսք ), ծանր ( աշխատանք ), ծանր ( բեռ ) :

---

## Դ Ա Ս Ծ Ա .

### Տ Ը Ն Ի Բ Ա Բ Է Ն

Ե Ի

#### ՇՈՂԵՇԱՐԺ ՄԵՔԵՆԱՆՆԵՐՈՒ ԳԻԻՏԸ

Կը տեսնէք այսօր ձեր աչքերուն առջեւ անթիւ շոգեկաւեր, շոգեկառներ, և գոնէ անգամ մը ձեր միտքէն կ'անցնէ՞ք թէ ո՞վ հնարած է այդ հրաշալի գործիքները, և ի՞նչպէս շինուած են, և թէ այս մեծամեծ հնարագիւտ անձերը ո՞րչափ դժուարութեանց հանդիպեր են, և ո՞րքան յարատեւ աշխատութիւններու պտուղ են այդ հրաշալիքներն՝ որոնց վրայ կը սքանչանանք ամէն օր :

Քրիստոսէ 120 տարի առաջ Հերոն Աղեքսանդրացի անուն գիտուն մը շոգեւոյն զօրութեան վրայ գրուածներ ունէր և անոր կարողութիւնը բացատրած էր : Հետզհետէ բազմաթիւ ճարտարարուեստագէտներ և գիտուններ շոգեւոյն զօրութեան վրայ խուզարկութիւններ ըրին, գլխաւորապէս ձիան Պաթիսթա, Տէլլա Բօռլթա, Պրանքա և Սալօմօն տը Ֆօս :



Ուորսթրրի մարքիզը որ իբր մասնից անբասսանուելով՝ Լոնսրայի աշատրակիև մէջ բանսարկուեցաւ, անխոնց յայտարարութեամբ աշխատեցաւ հոն շոգւոյն զօրութեան վրայ, և շոգեշարժ մեքենայ մը հնարեց՝ որ թայմզ գետէն ջուր հանելու կը գործածուէր: Այս մեքենան իր մէկ քանի թերութեանց պատճառաւ անգործածելի եղաւ, բայց երեսուն տարի ետք, Փրանսացի բողոքական մը, Տօքթէօր Տընի Բաբէն, բազմաթիւ գրութիւններով և փորձերով լուսարանեց շոգւոյն զօրութիւնը:

Տընի Բաբէն Փրանսայի Պլուա քաղաքը ծնած էր: Երկար ժամանակ Բարիզի մէջ յաշոյութեամբ բժշկութիւն ընելէ ետք, քննագիտութեամբ և մեքենականութեամբ զբաղել սկսաւ: 1681 ին Փրանսայի մէջ բողոքականներու դէմ կրօնական հարածանիք ելլելով, Բաբէն Անգլիա ապաստանեցաւ: Անգլիացի գիտնականները մեծ պատուով ընդունեցին զինք և Արխայական ընկերութեան թոշակաւոր վերակացու կարգեցին: Տընի Բաբէն իր փորձերը շարունակեց Անգլիոյ մէջ: 1687 ին Գերմանիոյ Մարպուրկ համալսարանին չափագիտութեան ուսուցիչ ընտրուելով՝ Գերմանիա գնաց:

Բարէն Անդլիա գտնուած ժամանակ Թայմզ գետին վրայ Թոպէրթ իշխանին շինած մէկ նաւը քալեցուց, որուն անիւները ձիեր կը դարձունէին : 1698ին Բարէն այցելութեամբ Լոնտոն երթալով՝ Պ. Սէվրիի շինած մէկ ուրիշ նաւը տեսաւ, որուն անիւները մարդիկ կը դարձնէին : Այն ժամանակ Բարէն խորհեցաւ ձիերու և մարդոց ուժին տեղ շոգւոյն ուժը գործածել նաւերուն անիւները դարձնելու, որով հով չեղած ատեն ալ կրնային առանց առագաստի նաւարկել :

Տասն և հինգ տարի շարունակ աշխատելէ ետք՝ Բարէն յաջողեցաւ վերջապէս նաւու մը համար մեքենայ մը շինել և կրցաւ այն նաւը մեքենայով շարժել : Բարէն մեծ դժուարութեամբ հրաման ստացաւ իր շինած նաւը Վէզէր գետին վրայ տանելու, սակայն նաւը հոն չհասած՝ նաւավարները ջարդ ու կտոր ըրին զայն, բայց մեքենան բարեբախտաբար ազատելով Քասէլ զրկուեցաւ, սակայն հոն ալ քաղաքը պաշարող Ֆրանսական զօրքերուն ձեռքով ջախջախուեցաւ 1706ին : Մեքենային միայն գլանը ազատեցաւ՝ որ մինչեւ այսօր խնամով կը պահուի Քասէլ բնակող Հէնչէլ ընտանիքին քով : Այս դժբախտութենէն տարի մը

Ետքը , Բարէն նամակ մը դրեց Լոնտոնի Արքայական Ընկերութեան և աղաչեց , որ իրեն դրամ ղրկեն նոր մեքենայ մը շինելու համար , որովհետեւ Կար պիտի ըլլար նաւերը փայտեցնելու :

Ընկերութիւնը մերժեց Բարէնի առաջարկն և չղրկեց խնդրուած դրամը : Այս մերժումը ծանր հարուած մը եղաւ Բարէնի . տխրութենէն և յուսահատութենէն տկարացած՝ երկու տարիէն մեռաւ ուրիշներու թողլով իր մեծ գաղափարին իրագործումը : Այդ կատարելագործողը և այսօրուան վիճակին մէջ դնողը Յակոբ Հուայթ եղած է , երախտապարտ թողլով իրեն մարդկութիւնը , որովհետեւ շոգեշարժ մեքենաները անհուն ծառայութիւն կը մատուցանեն մեզ :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . — Քարոյական :

77. Շեղագիր բառերով խօսքեր կազմել :

---

## ԴԱՍ ԾԲ.

### Հ Ր Ա Շ Ա Լ Ի Տ Ն Ա Կ

Ես հրաշալի տուն մը գիտեմ որուն մէջ ամէն բան կարգաւորուած է և պակասութիւն մը չկայ : Կանոնաւոր աղօրիփ ունի և խոհանոց, ուր գիշեր ցերեկ տաք կերակուր կը պատրաստուի : Տունը շատ մուտքեր և անցքեր ունի, ուսկից ժրպէտեմ ծառայներ կերակուր կը կրեն դէպի ամէն կողմ : Տունը հնուոս տնտես մը ունի. այնքան աշխատասէր է որ գիշեր ու ցորեկ բոլոր մը հանգիստ չառներ. անդադար ձայնն հանելով, իր առոյգ արագաշարժ ծառայները այլ և այլ կողմեր կը դրկէ, ո՛ւր որ կարօտութիւն կայ կերակուրի, ըմպելիքի, ջերմութեան, կամ անկիւն մը նորոգելու համար նոր նիւթ մը :

Տունն ունի ընդարձակ դահլիճ ուր ազատ և մաքուր օդ կը թափանցէ. ունի նաեւ երկու պայծառ լուսամուտներ շարժուն փեղկերով : Գիշերն այդ փեղկերը կը գոցուին, իսկ ցորեկը կը բացուին : Տան մէջ կ'ապրի տան տիկինը առանց մէ-

կուն Երեւնալու : Թէպէտ կարելի չէ զինք տեսնել , բայց անիկա ամէն բան գիտէ և ամէն բանի թարեկարգիցն ու կենդանութիւն տուողն ինքն է : Անոր համար կ'աշխատի տնտեսը , անոր համար կը գործեն փոքրիկ ծտուաները , ինքը կը դիտէ լուսաւոր պատուհաններէն , ինքը կը բանայ և կը գոցէ զանոնք : Գիշեր ցորեկ քնանալ չգիտեր անիկա . անոր աչքերը — միտքը — շատ հեռուն կը տեսնեն : Եթէ տան տիկինը դուրս ելլնէ , ամբողջ տունը խոր քունի մէջ կը թաղուի , կը թուլնայ և կը լռէ , տնտեսը գործելէ կը դադրի , ծառաները անցքերուն մէջ կը կաշկանդուին , և ամբողջ տունը խոր լռութեան մէջ մտնելով կը պաղի ու կը քայքայի : Բայց ո՛ր գնաց տան տիկինը : Անիկա այն տեղ գնաց ուսկից եկած էր , երկինք : Երկրի վրայ ժառանգակառոր հիւր էր անիկա , հեռացաւ հիւրը և անոր բնակարանը՝ մարմինը՝ այնպիսի արկղի մը մէջ դրին ուր ոչ կրնայ կանգնիլ ո՛չ շարժիլ և ոչ ուտել : Արկղն անխօփեցիկն հողին մէջ և տունը ֆայֆայուեցոյ՛ հող դարձաւ :

Թելագրութիւններ . — Հարցումներու վերածել . — Բարոյական :

79. Շեղագիր բառերով խօսքեր կազմել :



## Գ Ա Ս Ծ Գ .

80. Շարադրել, չոր սալորի ամանը :

1. Չոր սալորները նեղ բերան ամանի մը մէջ ..... :
2. Ղուկաս հրաման կը խնդրէ մօրմէն, անոր մէջէն բուռ մը առնելու (խօսակցութիւն) :
3. Ղուկաս ձեռքը մէջը կը խոթէ ..... յետոյ չկրնար այլ եւս դուրս հանել (ըսել թէ ի՞նչու համար) :
4. Մայրը խորհուրդ մը կու տայ :
5. Բարոյական :

81. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :

Հանդիպիլ, դեղնիլ, խնամել, շաղակրատել, ցնցել, գերազանցել, կանչել, համրել, փափուկ, շաղուել, հազնիլ, խոցել, ծաղրել, եռալ :

---

## Դ Ա Ս Ծ Դ .



### Ծ Ա Ղ Ի Կ Ն Ո Ի Թ Ի Թ Ե Ռ Ն Ի Կ Ը

Նազիկ ըսաւ թիթեռնիկին օդատույ ,

— Մի փախչիր .

Տարբեր կ'ապրինք , կեցած եմ ես , դուն անդուլ  
Կուգաս հիռ :

Բայց կը սիրենք զիրար , կ'ապրինք մարդէն զատ  
Եւ հեռու ,

Կ'ըսեն՝ ծաղիկ ենք երկուքս ալ նման շատ  
Իրարու :

Ծաղիկներուն մէջ կը վազես կը յածես

Միշտ արագ ,

Ես հոս մինակ կը դիտեմ դարձն ստուերիս

Ոտքիս տակ :

Կ'երթաս , կուգաս , նորէն կ'երթաս փայլիլ դուն

Տեղեր նոր ,

Եւ արցունքի մէջ կը գտնես զիս առտուն

Ամէն օր :

Մեր սէրն ըլլայ միշտ անվրդով և անհետ

Թէ կ'ուզես ,

Արմատ առ դուն , կամ գէթ ինծի տո՛ւր թեւեր

Քեզի պէս :

Թելադրութիւններ . — Հացումներու վերածել . —  
Բարոյական :

83. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :

## Դ Ա Ս Ծ Ե .

84. Շարադրել , ուշադիր տղայն :

1. Հրանտ գիրք մը փոխ առաւ Երուանդէն , ինչ-պէս հոգ պիտի տանի , որ գիրքին վնաս մը չհասնի . (մանրամասն բացատրելի) : 2. Երուանդ ուրիշ գիրքեր ալ փոխ պիտի տայ անոր :



85. Գտնել շեղագիրներուն հոմանիչները :

1. Ազան հօր՝ շուշ որդի .

2. Բնաւ փոքրիկ թշնամի չկայ :

3. Լաւագոյն է միայնակ երթալ քան չարի մը ընկերութեամբ :

4. Անիկա է հարուստ՝ որ բանի մը չիսպիսիր :

5. Երանի այն աշակերտին՝ որ իր աշխատութեանք ու հաւնէս վարքով իր բոլոր դասսուներուն հաւատնան արժանացած է :

6. Զբօսանքի լաւ է, բայց աւելի լաւ՝ կրթութիւնը :

7. Հարուստ է ան՝ որ գիտէ փչելով քաւականանալ :

8. Լաւ է յանդիմանութիւն լսել իմաստունէն, քան թէ յիմարէն զովասանի :

9. Անօրութիւնն աշխատաստեր մարդուն դոնէն կը նայի ու չհաւատճակիր ներս մտնել :



## ԴԱՍ ԾՁ.



### ՖՐԱՆՔԼԻՆ

Նոր աշխարհի այս մեծ քաղաքացին ու պար-  
ժանքը ծնաւ 1706 ին Մասաչուսէթ նահանգին  
Գոսթըն քաղաքը : Հայրը աղքատիկ օճառագործ  
մըն էր : Նախ Ֆրանքլին տպարանի գործաւոր ե-

զաւ, և իր բարի վարքովը ու խնայողութեամբ քա-  
նի մը տարի ետք կարեւոր տպարանի մը պետ եղաւ  
Ֆիլատէլֆիայի մէջ, և քիչ ժամանակէն համեստ  
ապրուստ մը ձեռք բերաւ : Այն ժամանակէն  
սկսաւ հանրային օգտի վերաբերող գործերու  
պարապիլ : Մասենադարսան մը և գրական ընկերու-  
թիւն մը հիմնեց, լրագրեր և տարեցոյցներ հրատա-  
րակեց, որոնք ժողովրդին մէջ օգտակար ծառայու-  
թիւններ ծառայելու կը ծառայէին : Շատ շանցաւ՝  
կառավարական պաշտօնի մէջ մտաւ . նախ ֆարսու-  
դար եղաւ, յետոյ անդամ Բէնսիլվանիոյ համայն-  
քին, և կարեւոր տնօրէնութիւններ առաջարկեց և  
ընդունել տուաւ, այն է ուսումնարաններու, հի-  
ւանդանոցներու և ուրիշ հանրօգուտ հաստատու-  
թիւններու հիմնարկութիւն : Միանգամայն գիտու-  
թիւններու կը պարապէր : Հանձարեղ գիւտեր ը-  
բաւ ելեքտրականութեան վերաբերեալ, և շան-  
քարգէլը հնարեց : 1753 ին Ամերիկայի թղթասա-  
րու թիւններու վերատեսուչ անուանեցաւ . երկու  
տարի ետքն ալ պատգամաւոր ղրկուեցաւ Անգլիա՝  
իր քաղաքացիներու շահերն պաշտպանելու, և քանի  
մը մասնական յաջողութիւններ ձեռք բերաւ : Բայց  
գժգոհութիւններու հիմնական պատճառները բառ-

նալ կարելի չեղաւ, և վերջապէս պատերազմ ծագելով Անգլիոյ և Ամերիկայի միջեւ, Ֆրանքլին մեկնեցաւ Լոնտրայէն : Վերադարձին՝ Բէնսիլվանիոյ կողմէ պատուիրակ ընտրուեցաւ կեդրոնական ընդհանուր ժողովին, հասարակապետութեան : 1776 ին Ֆրանսա զրկուեցաւ օգնութիւն ինդրելու, և մեծ համակրութեամբ ընդունուելով՝ իր ամէն խնդրածը ձեռք բերաւ : 1783 ին ստորագրեց հաշտութեան նշանաւոր դաշնագիրն : Երկու ասորի յետոյ վերադարձաւ Ամերիկա, ուր փառաւոր ընդունելութիւն մը ըրին իրեն, և Բէնսիլվանիոյ նահանգին գահերէց անուանեցին զինքը : 1788 ին գործէ քաշուեցաւ և երկու տարի յետոյ վախճանեցաւ 84 տարեկան հասակին մէջ :

Ֆրանքլին ոչ միայն գերընտիր քաղաքացի մը և ճարտար բնագէտ մը եղաւ, այլ և մեծ բարոյախօս մը և առաքինութեան տիպար : Ինքնակրթական մեթոտ մը հնարած էր իր բարոյական պակասութիւններն ու մոլութիւնները ուղղելու համար, և այսպէս իր հայրենակիցներու բարքն ալ կրթելու մեծապէս նպաստեց իր ժողովրդային գրուածներով :

Ահաւասիկ իր բարոյական ինքնակրթութեան մեթոտը, զոր իբրեւ կտակ իր սերունդին կ'աւանդէ այս մեծ քաղաքացին :

---

## ԴԱՍ Ծ Է.

### ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՅԱՌԱՋԴԻՄԵԼՈՒ ՄԻՋՈՅԸ

«Պատանեկութեանս ժամանակ դժուարին և խիղախ խորհուրդ մը յղացայ, այն է բարոյական կատարելութեան հասցնել զիս : Կը բաղձայի պահպանել զիս այն ամէն մոլութիւններէն ու սխալներէն, որոնց մէջ կրնային քաշել ձգել զիս բնական հակումը, սովորոյթը կամ ընկերութիւնը : Այս դիտաւորութեամբ հետեւեալ միջոցը փորձեցի : Տասներկու առաքինութիւններու անուան տակ ժողովեցի ինչ որ ներկայացաւ միտքիս՝ իբրեւ կարեւոր և բաղձալի, և այն անուններու իւրաքանչիւրին առջեւ կարճ պատճառ մը դրի, անոնց նըշանակութեան տուած ընդարձակութիւնս յայտնելու համար :

1. Ժուժկալութիւն . — Մի՛ ուտեր սասանօքսրդ ծանրացնելու չափ , և մի՛ խմեր գլուխդ դառնալու չափ :

2. Լուութիւն . — Մի՛ ըսեր այնպիսի բան մը՝ որ ո՛չ ուրիշներու կրնայ օգտակար կամ պիտանի ըլլալ , և ո՛չ քեզ : Զգուշացի՛ր ունայնութենէ :

3. Բարեկարգութիւն . — Բնակարանիդ մէջ ամէն բան իր յատուկ տեղն ունենայ և ամէն գործ իր ժամանակն :

4. Յառաջադիմութիւն . — Հասցաստացես որոշէ՛ ինչ որ պարտիս ընել , և առանց թերանալու կատարէ՛ ինչ որ դրած ես միտքդ :

5. Խնայողութիւն . — Քեզի կամ ուրիշներու օգուտ չունեցող ծախք մի՛ ըներ , այսինքն մի՛ վատներ :

6. Աւխտութիւն . — Մի՛ կորսնցներ ժամանակը . միշտ զբաղէ՛ օգտակար բանով մը : Հեռու կեցի՛ր անպէտ գործերէ :

7. Անկեղծութիւն . — Զգուշացի՛ր պատիպատ գործերէ ու խօսքերէ . խորհէ՛ անմեղութեամբ ու արդարութեամբ , և ինչպէս որ կը խորհիս՝ այնպէս խօսէ՛ :

8. Արդարութիւն . — Մի՛ վնասեր մէկուն անիրաւութիւն ընելով՝ կամ պարտականութիւնդ եղած բարիքը չընելով :

9. Չափաւորութիւն . — Փախի՛ր ծայրայեղութենէ : Չգուշացի՛ր քեզ տրուած վնասուց վերայ դառնապէս զգածուելի :

10. Մաքրութիւն . — Մաքուր պահէ մարմինդ , հանդերձներդ և բնակարանդ :

11. — Հանրութիւն . — Մի՛ վրդովիր չընչին բաներէ , ո՛չ ալ հասարակ կամ անխուսելի դէպքերէ :

12. Խոնարհութիւն . — Յիսուսի նմանէ՛ :

« Այս ամէն առաքինութիւններն ինծի ունակութիւն ընելու համար , որոշեցի իւրաքանչիւրին կատարման մէկ մէկ շաբաթ նուիրել մասնաւորապէս , առանց միւսներն ալ զանց առնելու :

« Այս նպատակաւ տասներկու երեսներէ բաղկացեալ տետրիկ մը շինեցի , մէն մի երեսին վերի գլուխն առաքինութեան մը անունը գրեցի և կարմիր մելանով վերէն վար եօթն գիծ քաշեցի , շաբթուն եօթն օրերուն համար , և իւրաքանչիւր սիւնակին վերի ծայրը եօթ օրերէն միոյն անունը

գրի. յետոյ այն սիւնակները տասն երկու մասի բաժնեցի, տասն երկու ճողածեւ գիրերով: Այն գիծերուն և օրուան սիւնակին վրայ մեղանով կէտ մը կը դնէի, նշանակելու համար այն սխալները զոր գործած ըլլալս կը ճանչէի:

«Այսպէս կրնայի կատարեալ դասընթացք մը ընել տասներկու շաբաթի մէջ, և տարին չորս անգամ վերսկսիլ: Ինչպէս որ ընդարձակ պարտեզ մը մաքրել ուզող մարդ մը ջնանար բոլոր վնասակար բոյսերը միանգամայն խլել, վասն զի իւր կարողութենէն վեր է, այլ կ'սկսի նախ ածուներէն մէկը մաքրել՝ և առաջինին գործն աւարտելէ ետք անցնիլ միւսին, այսպէս ես ալ կը յուսայի քաջաշէտական բերկրութիւն մը ճաշակել տետրիկիս երեսներուն վրայ տեսնելով իմ յառաջադիմութիւնս առաքինութեան ճամբուն մէջ, սխալացոյց կէտերուն հետզհետէ նուազումովը, մինչեւ որ վերջապէս տետրիկիս երեսները կատարելապէս սպիտակ տեսնելու երջանկութիւնն ունենայի տասներկու եօթնեակի օրստօրէական քննութենէ ետքը:

«Ուստի սկսայ գործադրել այս ծրագիր, և զարմացայ՝ տեսնելով որ երեւակայածէս շատ



աւելի պակասութիւններ ունէի . բայց յետոյ գոհութեամբ տեսայ որ օր օրի կը պակսէին :

« Կը փափաքիմ որ իմ ապագայ սերունդս գիտնայ թէ իրենց պապերէն մին , Աստուծոյ շնորհաց օգնութեամբ , այս միջոցով երջանիկ կեանք մը վարեց մինչեւ իւր եօթանասունիններորդ տարին , ուր կը գրէ այս տողերը » :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել գոց սորվիլ :

87. Շեղագիր բառերով խօսք կազմել :

## Դ Ա Ս Ծ Ը .

88. Շարադրել , անուշադիր տպան .

1. Գագիկն փոխ առաւ գիրք մը Երուանդէն :  
Իր անհոգութիւնը (մանրամասնօրէն բացատրել) : 2. Երուանդ ա՛լ գիրք չպիտի տայ անոր . . . :

89. Հետեւեալ շեղագիրներուն երկերկու հոմանիչ գտնել :

Մութ , տտուն , բազուկ , աղմուկ , վնաս , մշակութիւն , սկաւառա՛լ , գոյն , կուտ , ցաւ , անկողին , կանթեղ , գերեզման , այծ , կոչունք , ստացուածք , կարօտութիւն :

## ԴԱՍ ԾԹ.

### ՏԻՊԱՐ ՔԱՂԱՆԱՆ

Հագած սեւ զգեստ , գլուխը փակեղ՝  
Կը շրջի տէրտէրն ամէն տուն ու տեղ .  
Սրբութեան ողջոյն ցանէ ամէն դի ,  
Իր բերնէն , կարծես , մեղր կը կաթի :  
Շնորհաշի ու հեզ այդ տէրտէրն հայ է ,  
Որ իր օրհնէնքը քեզի կ'ընծայէ :

Երբ ժամկոչ աղբարն՝ լոյս առաւօտուն՝  
Կը հնչեցնէ կոյնակը ժամուն ,  
Տէրտէրն հոն դիմէ քայլերով արագ  
Կարդալ , աղօթել , ընել պատարագ :  
Սուրբ , առաքինի այդ տէրտէրն հայ է ,  
Որ մաս ու նշխարք մեզի կ'ընծայէ :

Նորածին մանուկն երբոր ժամ տանին ,  
Կը մկրտէ զայն մէջն աւազանին .  
Ճշմարիտ հաւատ յոյս ու անկեղծ սէր  
Ներչնչէ անոր մեր ծերուկ տէրտէր .


Թաւ ձայնով կ'երգէ «Մկրտի Քրիստոս» ,  
Իր բերնէն բղխի աղօթք մշտահոս :

Երբոր հարսնիք կայ շուրջառք ուսին  
Նարօտ կը կապէ հարսին ու փեսային ,  
Շնորհաւորենք , սաղեր , շարակաս  
Չուարթ շեշտերով կ'ըսէ տէր պապան :

«Օրհնեալ եղիցի , որդեա'կ այս պսակ ,  
Ու ձեր նուէրով ապրի իմ քսակ» :

Քելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

91. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :



## Դ Ա Ս Կ .

92. Շարադրել , կարգապահութիւն :

1. Աննիկ կարգապահ աղջիկ մըն է , վարժարան երթալու պահուն դիւրութեամբ կը գտնէ իր բոլոր բաները ..... : Լաւ յարգարուած սննեակ ..... ճշդութիւն : 2. Լեւոն իր եղբայրը՝ որ կարգապահ չէ , կը փնտռէ իր գիրքերը , իր գլխարկը , (նկարագրել) , և կ'ուշանայ վարժարան երթալու : 3. Եզրակացութիւն :

93. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :

Իմաստուն , ազնուական , սնունդ , տկար , քաջափրտ , անտեղի , պարարտ , ռխակալ , հանդարտ , խաբեքայ , քնքուշ , թեթեւամիտ , շատակեր , չոր , աղքատ , անկիրթ , բերրի :



## Դ Ա Ս Կ Ա .

### Ա Մ Ա Ռ

Ամառուան առջի օրերը շատ երկար կ'ըլլան . արեգակը կարծես թէ երկինքէն շնորհաբար գիշերը միայն վեց կամ եօթը ժամ կը տեսէ : Արեգակն ուղղահայեաց ճառագայթները սաստիկ կ'այրեն ու կը տաքցնեն թէ՛ երկիրը և թէ՛ օդը : Մարդս ակամայ զոյնաթիւն կը փնտռէ և անտառացի ու ստաւերայիս վայրեր կը գիմէ հանգիստ գտնելու համար : Կէս օրին սաստիկ տակ կը տիրէ ամէն կողմ : Հողմն ա՛լ չփչեր , ծառերն ա՛լ չեն շարժիր և տերեւները տաքէն իրենց գլուխները կը կախեն : Թռչունները անտառին խորը կը թաքչին . ընտանի կենդանիներն ալ չեն արածիր :

Մարդիկ քրտնաթոր ու սաստիկ խոնջած՝ իրենց գործը կը թողուն . ամէնքը կը սպասեն թէ ե՛րբ պիտի նուազի և անցնի տաքը : Բայց արտերուն, բոյսերուն և ծառերուն համար տաքութիւնն անշուշտ հարկաւոր է . սակայն երկարատեւ երաշջը փասակար է բոյսերուն՝ որոնք թէեւ շերմութիւն

կը սիրեն , բայց կը սիրեն նաեւ խոնաւութիւնը :

Այն ժամանակ , մարդիկ կ'ուրախանան երբ երկնից երեսն ամպեր երեւին , որոսման ձայներ լսուին , կայծակը փայլի , և զովարար անձրեւները ծարախ երկիրը արբեցնեն : Միայն թէ , երբ անձրեւը կարկսախառն ըլլայ , այն ժամանակ կը վնասէ հասած արտերուն և պարտէզներուն . այս պատճառաւ երկրագործները շերմեռանդութեամբ կ'աղաթեն որ կարկուտ չգայ :

Ինչ որ գարնան կ'սկսի , ամառը կը վերջանայ , ծառերուն տերեւները պէտք եղածին չափ կը մեծնան և ժամանակէ մը ետքը նախկին քափանցիկ անտառը հազարաւոր թռչուններու անքափանցիկ բնակարան կը դառնայ :

Ոռոգեալ դաշտերուն մէջ խիս ու բարձր խոտը ծովու նման կը տատանի : Անոնց մէջ կը թրուչրտին ու կը բզզան հազարաւոր միջատներ : Այգիներու և պարտէզներու կարմիր բայլը , շիկակաւնիւր ծիրանն և սալորն արդէն կը փայլին ծառերուն կանանչ տերեւներուն մէջէն : Դաշտերը ծածկուած են երփնեռանգ ծաղիկներով՝ որոնցմէ հեշտալի անուշահոտութիւն կը բուրէ : Այգ անուշահոտ ծաղիկներու մէջէն անդաշնակ և յաւեր ձայն կը լսու-

ուի, հազարաւոր մեղուներու բզզանքն է այդ, որոնք ծաղիկներու վրայ երգելով՝ քաղցրանիւթ անոյշ մեղր կը պատրաստեն թէ մեզի և թէ իրենց համար : Հաճարի և ցորենի արտերն արդէն բարձրացած, հասկ են տուած և կ'սկսին դեղնիլ : Եթէ հովը փոքր ինչ փչէ, ծովու նման կը տատանին անոնք :

Ամառը թէ՛ թռչուններու, թէ՛ չորքոտանիներու և թէ՛ միջատներու համար առատութեան եղանակ մըն է : Ահա փոքրիկ նորածին թռչուններն իրենց բոյներուն մէջ կը կերակրուին, մինչեւ որ անոնց փետուրները բուսնին . աշխատաւոր ծընողք ուրախ ձայնով կը սրանան օդին մէջ և իրենց ձագերուն համար կերակուր կ'որոնեն : Լայնածաւալ բնութեան մէջ՝ թէ թռչուններու թէ՛ աշխատասէր միջատներու և թէ՛ չորքոտանիներու յարմար բնակութիւն և առատ կերակուր կայ : Ողորմած Արարիչը ամենուն համար իր ձեռքը բացած՝ երկրիս վրայ առատօրէն կը սփռէ իւր բնութեան շնորհները :



## Դ Ա Ս Կ Բ .

Գիւղացւոյն գործերը ամբան ժամանակ շատ ու շատ են : Աշնանացանի համար պէտք է հերկէ և պատրաստէ հողը . յետոյ պէտք է խոտը հնձէ : Խոտի հունձքը դեռ չաւարտած , արդէն արտերը հասունցած են , պտղալի և հասունցած հասկը գլուխը դէպի դետին խոնարհեցուցեր է , և եթէ մի քանի օր եւս թողուն զայն , կծղած հասկերու հատիկները կ'սկսին թափիլ և աստուածային սուրքը ի զուր կը փճանայ : Ուստի գիւղացիք գերանդիները թողլով՝ մանգաղներն ձեռք կ'առնուն : Որչափ հաճելի է դիտել ժրաջան հրնձողները , որք արտերու մէջ շարուած կը հնձեն քարձրահասակ ցորենը և խուրճ կը կապեն : Աշնանացանի հունձքը դեռ չաւարտած , գարնանացանը կը հասուննայ , կը դեղնի և մանգաղի կը կարօտի . ահա վիւշը (կտաւատ) քաղելու ժամանակն ալ եկեր է , բոլորովին հասունցած ինկեր է այն . ահա կաննելին ալ պատրաստ է , թռչունները երամ երամ կը ժողովին և կը կտցահարեն անոր իւղալից հատիկները : Գետնախնձորին ալ հասնելու ժամանակն է : Ամէն-

քրն ալ հասած են, և պէտք է ատենին ժողովել . մինչեւ անգամ ամառուան երկար օրերը զանոնք հաւաքելու չեն բաւեր : Երեկոյները մարդիկ ուշ տուն կը դառնան իրենց գործէն , և թէպէտ յոգնած՝ սակայն իրենց ուրախ երգերու ձայնով օդը կը թնդացնեն վերջապոյսի խաղաղ ժամուն : Այսպիսի ծանր աշխատանքէ ետքը գիւղացին անոյշ քուն կը վայելէ , զգալով որ իր սուրբ պարտքը կատարած է : Առաւօտուն , արշալոյսը ծագելուն պէս , գիւղացիք կրկին դաշտ կ'երթան աշխատելու , և արդէն գիտէք թէ ամառն արեգակը կանուխ կը ծագի :

Բայց ի՞նչու գիւղացին ամառն ուրախ կ'ըլլայ , երբ այնքան շատ գործեր ունի : Ասոր պատճառները շատ են : Նախ՝ գիւղացին գործէ բնաւ չվախնար , ամէն դժուարութեանց մէջ մեծցեր է արդէն : Երկրորդ՝ գիտէ որ իր ամառուան աշխատութիւնը ամբողջ տարին զինքը և իր ընտանիքը պիտի կերակրէ : Երրորդ՝ կ'զգայ թէ իր աշխատանքով ոչ միայն ինքն ու իր ընտանիքը կը կերակրուին , այլ և սմբողջ աշխարհ , թէ՛ ես , թէ՛ դու և թէ՛ բոլոր մեր շրջակաբնակներն , թէեւ անոնցմէ ոմանք արհամարհանօք կը նային գիւ-



զացւոյն երեսին : Նա երկիրը հերկելով ու մշակելով, իր հանդարտ ու խոնարհ աշխատանքով կը կերակրէ զամենքը, ինչպէս ծառի արմատները կը կերակրեն այն հպարտ ճիւղերն որք կանաչ տերեւներով զարդարուած են : Չորրորդ՝ գիւղացին իր վաստակներու աւելորդ պատուը ծախելով՝ ստակ կը շահի և իր տան պակասութիւնները կը հոգայ :

Շատ աշխատութիւն և շատ համբերութիւն պէտք է գիւղական գործերու համար, բայց և այնպէս ո՛չ նուազ գիտութիւն և փորձառութիւն կը պահանջուի: Փորձեցէ՛ք միանգամ հնձել, և պիտի տեսնէք որ շատ հմտութիւն հարկաւոր է այս բանիս համար: Ո՛վ որ վարժուած չէ գերանդի բանեցնելու, չկրնար ժամերով գործածել զայն : Լաւ դէզ ընելն անգամ գիւրին բան չէ. գետին հերկել ամէն մարդու գործն ալ չէ : Ասկից զատ գիւղացին պէտք է գիտնայ թէ ի՞նչպէս կը շինեն ու կը պատրաստեն արօրը, ցախանը, սայլը . ինչպէս վուշն ու կանեփը պէտք է ծեծել, մաքրել, թել մանել, կտաւ գործել և պարաններ հիւսել : Ո՛հ, գիւղացին շատ և շատ բան կարող է ընել. ուստի և ո՛չ մէկ ժամանակ կարելի է տգէտ կոչել զայն, թէպէտ կարգալ չգիտնայ :

---

## ԴԱՍ ԿԳ.

### ԿԱՐՈՒԱԿՆ ՈՒ ՄԵԾԱՏՈՒՆԸ

Կարողակ մը կար ատենօք,  
Որ թէպէտ խեղճ, չքաւոր՝  
Կ'երգէր զուարթ ու անհոգ  
Աշխատելով ամէն օր :

Դրացի մ'ունէր Մեծատուն  
Որ չքեղ կեանք կը վարէր,  
Բայց ո՛չ հանգիստ և ո՛չ քուն  
Ունէր ցորեկն ու գիշեր :

Առտուան գէմ երբ նիրհէր  
Կարուակն ելած էր արգէն,  
Ու երգելով միշտ երգեր  
Կ'արթնցնէր զայն քունէն :

Հարուստն ըսաւ օր մը՝ իրեն  
«Կ'ուզեմ բարիք մ'ընել ես,  
Հարիւր ոսկի թող բերեն .  
Աս ամէնքն ալ կուտամ քեզ » :

Կարուակն առաւ երբ ոսկին  
Ալ աշխարհք իրն էր կարծես

Բայց այդ գանձով թանկագին  
Հոգն ալ մտաւ դռնէն ներս :

Դադրեցաւ ձայնն իր երգին  
Քունն ալ փախաւ աչքերէն  
Տանջանքն եղաւ իր բաժին  
Խաղաղ կեանքին փոխարէն :

Օր մ'ալ գնաց հարուստին  
Որ ալ հանգիստ էր առտուն ,  
Ա'ռ ոսկիներդ , ըսաւ , սին ,  
Տո'ւր քունս ու երգս ինձի դուն :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Բարոյական :

95. Շեղագիր բառերով խօսք կաղմել :

## Դ Ա Ս Կ Դ .

96. Շարադրել , պարսպ հասկը .

1. Հողագործ մը ու իր նորատի որդին հասունցած արտի մը քովն եկեր կը շրջագայէին : 2. Տղայն (թող անձամբ խօսի) կը հիանայ գեղեցիկ հասկի մը վրայ ուրուն գլուխը շիտակ կեցած է : 3. Հայրը նախամեծար կը համարի այն հասկերն որոնց գլուխը ծռած է (ինչո՞ւ) :

4. Այսպէս են նաեւ կարգ մը տղայք (ընդլայնել) : 5.  
Տղուն որոշումը :

97. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիչ :

Քիչնալ , ամչնալ , ճանչնալ , համառօտել , մօտենալ ,  
վազել , շողոքորթել , տաշել , պատրաստել , ածիլել ,  
ստուգել , թրջել , մաքրել , ծռել , բժշկել :

---

## ԴԱՍ ԿԵ.

### ՔԱՂԵՑԻՈՅ ՄԸ ՊԱՐՏՔԵՐԸ

Սիրելի տղաքս , երբ քսանըմէկ տարեկան  
ըլլաք , դուք ալ յափառաս մարդ պիտի համար-  
ուիք ու իրաւունքներ վայելէք : Պիտի կրնաք գոր-  
ծի մարդ ըլլալ , առեւտուր ընել : Չեր խօսքն  
ու usորագրութիւնը պիտի յարգուի՛ն : Ստացուածք  
պիտի ունենաք՝ զոր ըստ կամս պիտի գործածէք  
ու շահագործէք : Պիտի կրնաք ժողովներու մէջ  
ձայն ու քուէ ունենալ , ժառանգութեան տէր ըլ-  
լալ , կտակ ու նուէր ընել , եւայլն :

Նոյնպէս պարտականութիւններ պիտի ունե-  
նաք , տարբ պիտի վճարէք , ձեր թաղին եկեղեց-  
ւոյն ու դպրոցին իւղագի՛ն ու նպաստ պիտի տաք ,

տուն ու ընտանիք պիտի կազմէք, աղքատներուն, հիւանդ թաղեցիներուն պիտի օգնէք, և ձեր թաղին՝ դպրոցին ու եկեղեցւոյն պիտի օգնէք, ու առնոց մասակարարութեան պիտի մասնակցիք : Սորվելու էք պետութեան օրէնքը . անոր հպասակեալ էք, ձեր կեանքն ու գործերը վարելու էք այդ բարեւար օրէնքներուն համեմատ, որք կը պաշտպանեն ձեր կեանքն ու ինչքը :

Անհատներ կը կազմեն ընտանիք, համայնիք կը կազմուի ընտանիքներէ, և համայնքները կը կազմեն ժողովուրդը :

Ձեզմէ ամէն անհատ հպատակ է Օսմանեան պետութեան, որուն տէրն է Վեհափառ Սուլթանն, որ իբրեւ հայր կը սիրէ ու կը հոգայ իր ժողովուրդները :

Պետութեան գործերը վարող պաշտօնատէրերը կը կազմեն կառավարութիւն :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

99. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## ԴԱՍ ԿՁ.

100. Շարադրել, բարեկարգ տուն մը :

Արեղեանք հարուստ չեն, բայց Արեղեանց մայրը ամենէն հողածու կրնն է: Օդ, ջուր, աշխատութիւն կը վատնէ առատօրէն: Օդի փոփոխում, խոհանոցի մաքրութիւն, դարանները շփուած, ապակիները փայլուն: Արեւուն լոյսը կը թափանցէ այս փայլուն առարկաներուն վրայ:

101. Գտնել հետեւեալ շեղագիրներուն հոմանիշներ.

1. Սոխակը անտուներու երգիչն է:
2. Աղանին կը կանչէ իր վարուժանը վշտագին ձայնով:
3. Յաջողութեան մէջ հեշտ է գտնել բարեկամ մը:
4. Չափաւորութիւնը բարեբաւտութիւն կ'ընծայէ մեզի:
5. Տեսնուած չէ անձ մը որ բարի գործ մը ընելուն համար զզջայ:
6. Երանութեան տանող ամենէն ապահով նամբայն առաքինութիւն է:
7. Խաղաղ սիրտ ունենալու համար՝ անթիժ խիղճ պէտք է:

8. Թշուառներուն ձեռնառ եղիր որ Աստուած ալ  
քեզի ձեռնառ ըլլայ :
9. Գոց ձեռքով ճանճիկ անգամ չբռնուիր :
10. Ոչ չքաւորութեամբ խոնարհե, ոչ ալ ճոխութեամբ  
գոռոզացիր :

---

## Գ Ա Ս Կ Է .

### Փ Ո Ք Ր Ի Կ Վ Ա Ր Զ Ա Կ Ա Լ Ը

Վանդակիկ մը դրի աղուոր  
Իմ պարտէզիս մէջ սիրուն ,  
Որ թռչուն մը գայ ուղեւոր  
Առտու մը հոն շինել բոյն :

Ո՛վ քաղցրախօս շիկահառիկ  
Իմ տունս ընտրէ քեզ բնակ ,  
Միայն երգ մը կ'ուզեմ փոքրիկ  
Տունիս վարձքին փոխանակ :

Եւ երբ ուղես ամառ օրեր  
Պուրակիդ մէջ ապրիլ ազատ ,  
Քու փափաքիդ դէմ չեմ դներ  
Եւ կ'արձակեմ զքեզ ազատ :

Բանտարկելու չունիմ փափաք  
Զքեզ թռչնիկս անուշիկ .  
Ո՛հ , երգով մը եկո՛ւր մինակ ,  
Վարձել անակս իմ փոքրիկ :

## ԴԱՍ ԿԸ.



### ՄԱՅՐԸ ԵՒ ԵՐԿՈՒ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Մեր թաղին մէջ , խեղճ ազգատ  
Մայր մը կար շատ երջանիկ  
Ունէր զաւակ երկու հատ .  
Մէկ մեծ և միւսն էր փոքրիկ :



Ասոնք մէկտեղ կ'ապրէին  
Փայտայելով զիրար միշտ •  
Կապուած սիրով կաթոզին  
Ձէին ճանչնար երբեք վիշտ •

Օր մը մեծը մօրն ըսաւ ,  
« — Գիտեմ զիս շատ կը սիրես .

Բայց չես կրնար դուն բնաւ

Սիրել , որքան ես զքեզ » »

Մայրը հարցուց իր տղուն ,

« — Ի՞նչու կ'ըսես ատանկ բան » :

— « Երկու զաւակ ունիս դուն .

Գոչեց , ես՝ մայր մը միայն » :

Թելագրութիւններ . — Հարցումներու վերածել . —  
Այս ոտանաւորը վերածել արձակի :

## Դ. Ա. Ս Կ Թ .

103. Շարադրելու նամակ , մօր մը հիւանդութիւնը :

1. Իմացուցէք ձեր ամուսնացած քրոջ թէ ձեր մայրը հիւանդ եղած է . բայց հիմա վտանգն անցուցեր է :
2. Յայտնեցէք ձեր նախապէս ունեցած վախը ու յետոյ ձեր ուրախութիւնը . բժիշկին ձեզ տուած յոյսը :
- 3.

Ո՛րո՞ւմքն են շատ նուիրեցիք ձեր մօր . (անմիջապէս գրեցէք ձեր քցոյ որ շխտովի) : Խնդրեցէք ձեր կողմէն որ գայ :

104. Հետեւեալներուն երկիրկու հումանիշ գաննել :

Ճիրան , կողմ , կաթիլ , հովիտ , ցելս , հովիւ , մըր-  
րիկ , աւար , միրգ , ճիւղ , խաբէութիւն , ընծայ , առատութիւն , նաւակ , զոհ , մազ , բուրգ , երամիշտ :

---

## Դ Ա Ս Հ .

### Ա Շ Ո Ւ Ն

Աշունը գանդաղ ու հանդարտ կերպով կը հասնի : Մենք սովորաբար ա՛յն ժամանակ կը գիտենք զայն երբ բոլորովին երեւան ելլեն անոր աչքի զարնող նշանները : Դաշտերուն մէջ կը հընձեն և կը բարդեն հացաբոյսերը , բայց այս ալ ամառուան վերջանալուն նշան է , որովհետեւ հացաբոյսերու հասուննալն ամառուան քառամեթուն ապացոյց է : Նախ խշխշաշով կը խոնարհի գերանդւոյն առաջ և հարիւրաւոր գէղեր կը բարձրանան . ապա մեր աչքին առջեւ բոլորովին կը մերկանայ դաշտային ճամբան , ուր առաջ կը լսուէին յորեորո

ձայներն , որք եռանդեամբ կ'երգէին հասունցած արտերու գլխակոր հասկերու տակ : Քանի մը օր ետքը արտերն ալ կ'սկսին մերկանալ և այն ատեն կը նշմարուի աշնան առաջին նշանը — դաշտային ընդհանուր վերկուրթիւն : Բնութիւնը դարձեալ մեծ գործ է կատարած և բաժնելով մեզ հետ իր պարգեւները՝ կը պատրաստուի հանգստանալ :

Երկնակամարին տակ նոյնպէս խաղաղութիւն կը տիրէ . թռչուններուն զուարթ խումբերը կը լռեն : Կկռն և սխալկը վաղուց արդէն յուեր են : Արագիլը կը պատրաստուի ուղեւորիլ , որպէս զի անոնց ետեւէն հասնի , և իսկոյն անոնցմէ ետքը կրունկներու հրաժեշտի գոյիւնը կը լսուի : Արտոյտը դեռ դաշտին մէջ կ'երեւի , բայց անմուռնչ նստած է ակօսներուն մօտ : Կաքաւը կոյտերու տակ մտած՝ ուշի ուշով յուրջը կը դիտէ , մինչեւ իբր խայտախիտօս փետուրները կը փայլին արեգական ճառագայթներու տակ : Միայն սարեկները շշուկ հանելով կը թռչին դաշտերու վրայէն . իսկ ագռաւները բարեկամաբար իրարու մօտ շարուած կռկռալով կը խօսին , բայց կարծես թէ անոնք ալ պատրաստութիւն կը տեսնեն աշնան համար . ա-

նոնց կռուոցը օրէ օր կը նուազի և վերջապէս բու-  
լորովին կը դադրի :

Այսու ամենայնիւ արօտները դեռ կանաչ են :  
Տեղ տեղ տակաւին քանի մը ծաղիկներ կ'երեւին ,  
որոնց վրայ կը թռչին թիթեռներն , անոնց մեղրա-  
յին հիւթը ծծելու և անուշահոտութեամբ շնչելու  
համար : Ձատիկը , այս գեղեցիկ բզէզը , դեռ կը  
քասանի ծղօսներու վրայ , իսկ անխոնջ ճպուռն  
ամառուրնէ աւելի բարձրաձայն կ'երգէ իր միօրի-  
նակ երգը : Մերկացած արտերն ալ բոլորովին ա-  
մայի չեն , կամ գիւղացւոյն նախիրներն կ'արածին-  
այն տեղ , կա'մ վայրենի կենդանիներ ուտելիք  
կ'որոնեն իրենց համար : Նապաստակը միամտու-  
թեամբ կ'արածի անոնց մէջ . մուկը ձմեռուան հա-  
մար պահուած հասկերէն պաշար կը պատրաստէ -  
գորտն աներկիւղ կը թռչկոտի , վստահ ըլլալով որ  
այլ եւս արագիլի երկար կտուցը իրեն չսպառնար -  
ճնճողներն ալ խմբովին մէկ ծղօտէն միւսը կը  
թռչին . կարծես դեռ բնութիւնը ամենուն համար  
առատ սեղան պատրաստած է , և հազիւ աչքի կը  
զարնէ որ դաշտային կանաչ խոտին մօտ պահուը-  
աած է անոր մէկ թուամած թերթը :

Պէտք է տուել թէ աշունը պտուղներու  
ժամանակն է և ոչ թէ ծաղիկներու : Իրաւ է որ  
ամառը քանի մը պտուղներ կը հասնին , այլ ան-  
ցողական են անոնք : Բնութիւնը աշնան կը պար-  
զուէ մեզ յարգի պտուղներ , որ գեղեցկութեան  
և անուշահոտութեան կողմանէ կը գերազանցեն  
ուրիշ եղանակներու պտուղները : Այս տեղ ոսկե-  
գոյն տանձն և կարմրաթոյր խնձորը կը փայլի .  
այն տեղ կախուած են բազմատեսակ դաւառլներ ,  
տեսակ մը սալոր՝ որոնց վրայ կարծես մխրազոյն  
փոշի ցանուած է : Ահա առջեւդ արեգական տակ  
կը ժպտի տեսակ մը թաշապաս դեղձ . անոր մօտ ,  
փոքրիկ ծառերու վրայ , կախուած են մեծամեծ  
գեղին սերկեւիլներ . բազումաճիւղ և հսկայածա-  
րնկուզենւոյն վրայէն կը թափթփին ընկոյզներ ,  
իսկ անոր դէմ այգւոյն պատերէն կախուած  
են ահագին դդումներ : Այգւոյն մէջ , ընդար-  
ձակ տարածութիւն մը բռնած է խաղողի որթն ,  
որուն ահագին ողկոյզները՝ սեւ , սպիտակ , կանաչ  
ու կարմիր գոյներով՝ կարծես կը հրաւիրեն քեզ  
որ այս ամէն հարստութիւնը պարգեւող Տէրը փա-  
ռաբանես : Որթատունկերու այս ու այն կողմն ալ  
նշենին իւր վահանապաս պտուղները կը պատրաստ-

տէ : Ո՛չ սակաւ են յայնատեսերն թզենույ թուփերը՝ որոց կաթնահամ պտուղք ամէնքը կը հրապուրեն : Պողայից այգւոյն մէջ անպատմելի կեանք և ուրախութիւն կը տիրէ : Մարդիկ կը փութան բնութեան առատ տուրքը ժողվել . ուրախութեան ժպիտներով երկինք կ'ուղղեն իրենց փառարանութիւնները : Բայց ահա այս աշխատանքն ալ իր վախճանին կը մօտենայ և գիւղացւոյն գործերը օրէ օր կը նուազին , թէեւ ո՛չ այնքան որ դատարկ նստի նա : Արտերէն կրածը պէտք է կալը ժողվէ, և այգիներէն կլթած խաղողէն գինի պատրաստէ : Շատ անգամ ձմեռը չհասած՝ իր տարեկան ալիւրն աղալու կ'ստիպուի, որ մի գուցէ ձմեռը շուրերն սառին : Վերջապէս աշնան պէտք է սերմանէ , աշնցան ընէ , որպէս զի յաջորդ տարի ալ հաց ունենայ : Երբ այս ամէնքն աւարտէ , այն ժամանակ գիւղացին հանգիստ կ'առնէ : Աշնան վերջը և ձմրան սկիզբը ուրախութեան եղանակն է անոր համար : Գիւղացւոյն տօներն ու հարսնիքներն այդ միջոցներուն կը հանդիպին , երբ իր կարասը լի է պատուական գինիով և ամբարն՝ առատ ալիւրով :

Աշունն սկսելէ ետքը (Սեպտեմբեր 11 ին, երբ գիշեր ու ցորեկ հաւասար են), կամաց կամաց օրերը կ'սկսին կարճընալ, իսկ գիշերները երկարիլ : Երբ օրերը կարճընան, արեգակսն ջրմուխիւնն ալ կը նուազի, վասն զի կ'սկսի դէպի հարաւ հակիլ : Աշնան նշաններն օր աւուր աւելի կը բազմապատկին : Երկինքի երեսը կը ծածկուի միակերպ տխուր խորով մը որ երկար ժամանակ չփարատիր, և ուրկէ սգաւորի աչքին նման վերջէն շարունակ կաթիլներ կը հոսին : Ամենաթեթեւ հողմն անգամ կը խլէ ծառերու թարշամած զարդը, և երբ ամպերու մէջէն գլուխը դուրս հանէ արեգակը, անոր ճառագայթները կը լուսաւորեն միայն ոգեվար բնութեան տխուր պատկերը : Բընութեան մէջ ամէն ինչ իր վախճանին կը մօտենայ և ննջելու կը պատրաստուի : Ամենէն աւելի ուշ չուող թռչունները, ծիծեռնակները և արայտներն ալ շատոնց արդէն թռեր հեռացեր են : Գիւղացին դաշտային հարստութեանց յետին մնացորդները շտապելով կը հաւաքէ : Ամէն բան կը քարշաւի ու կը դեղնի, և սաստիկ քամին ծառերէն թափած տերեւները հեռուն մղելով կարծես թէ ձեան համար տեղ կը պատրաստէ :

---

## ԴԱՍ ՀԱ.



### ԿՈՊԵՌՆԻԿՈՍ

Պիլթագորոսի վարդապետութիւններուն ուշ  
չգնելով՝ մարդիկ երկար ժամանակ չէին հաւատար  
թէ երկիրս կը շարժի. անցաւ 2000 տարի, վեր-



չապէս երեւցաւ ուրիշ մարդ մը, որ Յոյն իմաստասէրին քարոզած ճշմարտութիւնն սկսաւ հաստատել: ԺԶրդ դարուն սկիզբը, Հռոմէական քահանայ մը, Կոպեռնիկոս անունով, Գերմանական Ֆրաուէնպերկ քաղաքին մէջ սկսաւ հետազօտել արեւուն և աստղերուն շարժումները, և այն համոզման յանգեցաւ՝ թէ երկիրս, որ անշարժ կ'երեւայ, անդադար իր առանցքին վրայ կը քառալի անիւի պէս, և միանգամայն արեւուն շուրջը կը դառնայ, ինչպէս իրեն նման քանի մը ուրիշ աստղեր: Այս շարժուն աստղերը, զանազան ուելու համար այն աստղերէն որ արեւուն շուրջը չեն պտըտիր, կը կոչուին մոլորակներ: Կոպեռնիկոս իր դիտողութիւնները առանձին տետրակի մը մէջ բացատրեց, և քիչ մը ետքը իր գաղափարները դեռ չտարածուած ու չընդարձակուած՝ 1543 թուին վախճանեցաւ: Այն տունը, որու մէջ կ'ապրէր Կոպեռնիկոս, մինչեւ հիմա Ֆրաուէնպերկ քաղաքին մէջ կը պահուի, և ուղեւորները հետաքրքրութեամբ կը զննեն այն ճեղքը՝ որ բացուած է այդ տան պատին մէջ, և ուսկից մեծանուն աստղագէտը կը հետազօտէր երկնային մարմիններուն ընթացքը:

Քելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

106. Շեղագիր բառերով խօսք կազմել :



## Գ Ա Ս Հ Բ.

107. Շարադրել նամակ :

1. Սիմոն իր ծնողքին խրատներուն հակառակ մօտեցաւ փեթակին և մէջը նետեց յարդի շիւղ մը : 2. Մեղուները յարձակեցան անոր վրայ և սոսկալի կերպով խայթեցին զանի : 3. Հիւանդ երկար ատեն — երկիւղ աչքը կորսնցնելու — բժիշկը զայն բուժեց ծեփելիքով : Կակղացուցիչ լուացումով : 4. Սիմոն իր դժբախտութիւնը կը գրէ մէկ ընկերոջը և կ'երդնու , թէեւ ուշ , երբէք չմօտենալ փեթակին :

108. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :

Կատաղի , կարմիր , տետրակ , ամպոտ , մթին , փայլուն , խարխուլ , շատախօս , հիւրընկալ , կարճահասակ , թափառական , երկչոտ , հպարտ , անպիտան :



## ԴԱՍ ՀԳ.



### ՈՒՂՏԻՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ուղտը քաջուեր էր դատաստանի  
Բայց ի՛նչ մեղքով. — այդ չէր յայտնի :  
Ատեանն ահաւոր, կաճառն անկաշառ

Խորհուրդն էր անճառ :

Ո՛վ սքանչելի տեսիլ ահաւոր,  
Նշանաւոր,

Ձի ուղտն ունէր հասակ խոշոր :

Ո՛վ զարհուրելի սազնայ սրսայոյզ՝  
հանդոյյ անլոյծ,

Ձի ցած դռնակն դատաստանի

Ուղտին մտնել չէր կարելի .

Սաստիկ է վէճ, մեծ է խնդիր

պէտք է վճիռ :

Աւագ իշխանք, տեարք պարոններ  
Կան ակնդէտ եւ անհամբեր :

Բայց վերջապէս մեր աղուխուն  
Չայն կը լսուի, ձայնիկ՝ ճկուն,

«Քո եմք ծառայ  
Առիւծ արքայ .

Դատաստանդ ահեղ, դատաւոր արդար,  
Վճիռդ անաչառ

Հրամայէ՛, Տէ՛ր, ուղտին կուզեր  
Կտրել, նետել նախ ոտները,

Յետոյ բերուի  
Քո առաջի» :

«Եղիցի» ,

Ատեանն ահաւոր, կաճառ անաչառ  
Չայնակցի խսկոյն . կրկնէ ծափահար .

«Եւ եղիցի» :

Վա՛յ իմ մեղքին, այսպէս դատի,  
Ամէն խնդիր դիւր կը լուծուի :

Թելադրութիւններ . — Նախ՝ հարցումներու յետոյ  
արձակի վերածել :



## ԴԱՍ ՀԴ.

110 Շարագրել արտոյսք :


1. *Ձմեռ է (նկարագրել)*. քանի մը արտոյաներ կ'ուզեն թողուլ իրենց ծննդավայրը, երթալու համար ծիծեռնակներուն գացած տեղը: 2. Տարէց արտոյտ մը կը հակառակի անոնց: Անոնք պիտի թողուն իրենց գիտցած երկիրը՝ անստոյգ երջանկութիւն մը փնտռելու համար: Ուրիշ տեղ հաճելի վիճակ չպիտի ունենան: 3. Վերջապէս արտոյաները կ'անսան իրենց տրուած խորհուրդներուն:

111. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ:

Ծլիլ, գանիլ, զլորիլ, զրկել, գտակ, գոռոզ, դիտել, երգել, երկարիլ, թոչնել, ժողովել, լմնցնել, ծածկել, շինել, սփռել, հասկնալ, կարծել:

---

**ԴԱՍ ՀԵ.**



**ԷՏԻՍԸՆ ԵՒ ԶԱՅՆԱԳԻՐ**

**Թովմաս Ա.յլա Էտիսըն 1847 ին ծնած է Մի-**

չան, Միացեալ Նահանգներու մէջ: Հայրը փոփոխակի գերձակ, պարտիզպան, ընդաւիճառ, կալուածներու փոխանակիչ ու առուծախի միջնորդ եղած էր: Հօրմէն ժառանգեց առողջ և կորովի կազմ, որ իր ընտանիքին զլիսաւոր հարստութիւնը կը թուի ըլլալ: Իր երկու պապերը հարիւր տարիէն աւելի ապրեցան: Իր ծննդեանէն ետք, ծընողքը Միլանէն մեկնեցան և Միչիկան գաւառին մէջ Բորդ-Հիւրօն կոչուած աննշան գիւղը հաստատուեցան, ուր անցաւ Էտիսընի մանկութիւնը: Նշանաւոր հնարիչը իր կրթութիւնը կը պարտի իր մօր, որովհետեւ, ինչպէս ինք կը խոստովանի, կեանքին մէջ երեք ամիս միայն վարժարան գացած է: Մանկութեան ժամանակ վայրենի բնաւորութեան մը տէր էր. միայնութիւն կը սիրէր, տանը մէկ անձանօթ անկիւնին մէջ առանձնացած՝ կ'աշխատէր և անյազ հրապոյր մը կը զգար գիրքի տառերը տեսնելով: Անխոնջ աշխատող մըն էր, մանուկ հասակէն կ'ուզէր ամէն բան ընդգրկել և ամէն բանի վրայ ծանօթութիւն ստանալ: Իր ծընողքը աղքատ էին: Իրիկուն մը, ճաշի ժամանակ հայրը ըսաւ իրեն. «Ահա՛ տասներկու տարեկան եղար. կորովի և առողջ ես, մինչեւ հիմա քեզ

խնամեցի, այսուհետեւ պէտք է որ դու հոգաս ինքզինքդ, վաղուընէ սկսած Շոգեկառփի մանուկ պիտի ընեմ քեզ Քանատայի մեծ գիծին վրայ :» Էտիսըն առանց բնաւ դիտողութիւն ընելու՝ սա պատասխանը միայն տուաւ . «Շատ լաւ :»

Տեսնենք թէ ի՛նչ է շոգեկառքի մանուկին պաշտօնը : Ամերիկայի շոգեկառքերը չեն նմանիր հօս տեղի շոգեկառքերուն . գիծին երկայնու-թեամբ շարուած կառքերուն մէջ նեղ ճամբայ մը կայ, որ կառքերը իրարու հետ կը միացնէ : Այդ երկայն դահլիճին մէջ են լողարանը, սրահը, ննջարանը, խոհանոցը, պարտէզը, ընթերցարանը . կարծես թէ շարժուն տուն մըն է :

Այդ կառախումբերուն մէջ կը շրջին տասնէն տասնը չորս տարեկան տղաք, որոնք յրագիտ, լուցկի, պտուղ, շաքարեղէն, սիկառ կը վաճառեն ուղեւորներուն, անոնց ձանձրոյթը դարմանելու համար : Ասոնց ընկերութեան մէջ մտաւ Էտիսըն : Իր ընկերները առաւօտէն մինչեւ իրիկուն չարաչար կ'աշխատէին . Էտիսըն երբեմն կը պահուրատէր հակերուն մէջ և հո՛ն պատուած ու ազտօտ գիրքերով կը զբաղէր . իր աշխատանոցը այն հսկերուն մէջ փոխադրած էր, և հոն պահած իր



տղայական գործիները, ֆիմիական նիւթերը, եւ այլն։ Գրեթէ միշտ մեքենաներն ու գործիները կը դիտէր ուշադրութեամբ և տղայ հասակէն կը ջանար հասկնալ մեխանականութեան զարմանալի օրէնքները։ Ամէն անգամ որ շոգեկառքը կը յայտարարէր կը հասնէր, գործը կը թողուր, հեռագիրի սենեակը կ'երթար և գործիները կը զննէր։ Նմանապէս երբ ծախու լրագիր առնելու համար տըպարանները կը մտնէր, ժամերով կը կենար հսն և հետազննիկ աչքերով կը դիտէր սպագրական մատուցը, ինչպէս նաեւ տառերը ձուլելու, շարեւոր, սպելու, դիրքերը կազմելու և այլ գործողութիւնները։ Տէքսոյթ Ֆրի Բրէս լրագրին գործաւորները շատ կը սիրէին զայն։ Օր մը սոյն լրագրին տպարանին մէջ 150 քիլոյի չափ հին մաշած տառեր ծախու հանուելով, էտիարն ընչին գնով մը առաւ զանոնք և տարաւ իր կառքին մէջ պահեց։ Հոն զարմանալի գործի մը ձեռնարկեց։ Լրագիր մը հիմնեց, որու տէրը, յողուածագիրը, գրաշարը, տպագրիչն ու ցրուիչը ինք միայն եղաւ, և երկաթուղիին անունով կրէյնս թրքնի Հերրլոս կոչեց զայն։ Պարզ թերթ մըն էր, չարաթը մէկ անգամ կը հրատարակուէր և մեծ

քանակութեամբ կը ծախուէր : Իր առաջին թերթը այնքան հասակակրայի ընդունելութեան արժանացաւ հասարակութեան կողմէ , որ Բորթ-Հիւրոնի մէջ երկրորդ թերթ մըն ալ հրատարակել սկսաւ Բոյ-Բրայ «Անխորհրդապահ Պօղոս» անունով : Այս թերթ ո՛րչափ կծու յօդուածներ պարունակէր , ա՛յնչափ աւելի կը փնտռուէր ժողովուրդէն : Բուն յօդուած մը գրած ըլլալով Բորթ-Հիւրոնի բնակիչներուն մէկուն դէմ , այն թիւը շուտով սպառեցաւ . թշնամանուած անձը փնտրուելով շոգեկառնի մանուկը՝ գետեզրին մօտ գրտաւ զայն , կատաղաբար վրան յարձակեցաւ և բռնեց գետին մէջ նետեց : Բարեբաղդաբար , Էտիսըն լողալ գիտնալով՝ ազատեց ինքզինքը : Այն օրէն ետք ալ չհրատարակուեցաւ Բոյ-Բրայ թերթը . միւս լրագիրն ալ տխուր վախճան մը ունեցաւ : Օր մը՝ աշխատանոցին սեղանին վրայ դրուած փոսփոռի սրուակը վար իյնալով բռնկեցաւ և սկսաւ այրել վաճառքներու կառքը : Շոգեկառքերու վարիչը մարել տուաւ հրդեհը և վառքէն դուրս նետեց Էտիսընի գործիները , տրպազրական տառերը և աշխատութեան բովանդակ արդիւնքը : Այս երկու դէպքերը փակեցին

Էտիսընի շրագրական տպարէշը : Եւ սակայն ուրիշ անակնկալ դիպուած մը աւելի փառաւոր տպարէշի մը դուռները բացաւ մեծ հնարիչին տուջեւ : Օր մը Բօր-Քլէմանի կսյարանին քարափին վրայ կը սպասէր , յանկարծ իր մօտէն անցնող ճեպրնքաց վայրաշարժ մեքենայէ մը քսան մէթր հեռու մանկիկ մը կը նշմարէ որ կը խողար երկաթէ ճամբուն վրայ : Էտիսըն տեսնելով տղուն անխռասափելի վտանգը , իսկոյն ճամբուն վրայ կը նետուի և մանկիկը կը դրկէ ճամբէն դուրս կը նետէ յաղթական դէմքով : Կառախումբը կ'անցնի և մանկիկը ողջ առողջ հօրը կը յանձնուի : Մանուկին հայրը , որ Բօր-Քլէմանի հեռագրասկէնէր , իր բնակարանը կը հրաւիրէ զայն և հեռագրութիւն կ'ուսուցանէ անոր : Այսպէս Էտիսըն անակնկալ պատահարի մը և միանգամայն իր անխոնջ աշխատութեան շնորհիւ նշանաւոր հեռագրապետ մը եղաւ : Սկիզբները թերութիւն մը արդելք կ'ըլլար իր յառաջգիմութեան : Չը կրնալով յաղթել իր ընթերցասիրական բուռն եռանդին , գործի ժամանակ գրական աշխատութիւններով կը զբաղէր . այս պատճառով բազմաթիւ հեռագրատուներէ ճամբուեցաւ , բայց Էտիսըն վը-

հասիլ չէր գիտեր. ուստի շարունակեց հեռագրական ասպարէզին մէջ և յամառ ու հանճարեղ աշխատութեամբ կարեւոր գիտեր ըրաւ հեռագրութեան մէջ, որոնք իր համբաւը աւելի տարածեցին, մանաւանդ ճայնագիրին գիւտն, որու գործածութիւնն այսօր Տիեզերական եղած է: Չայնագիրին միջոցաւ մեր ձայնը, մեր խօսքը և մեր երգերը կ'արձանագրուին մեծադեպ թերթի մը վրայ և ամէն անգամ որ գործին շարժեցնենք, նոյնութեամբ լսելի կ'ըլլան այդ ձայները: Էտիսըն իր ձայնագիր գործին հասարակութեան ցոյց տալով՝ շարժը 2500 ֆրանք կը շահէր:

Նիւ-Եօրքէն ժամ մը հեռու կը գտնուի իր ամառնային բնակարանը. հո'ն է իր աշխատանոցը, գործիները, մեքենաները և ուրիշ ամէն նիւթերը: Իր տնօրէնութեան տակ կ'աշխատին ելեֆոսագէտներ, մեխանագէտներ և անարտագէտներ: Գրեթէ ամէն օր աշխարհի ամէն կողմերէն նշանաւոր անձեր այցելութեան կուգան իրեն որ ժպտուն եւ հանձնակրէյի դէմքով կը հիւրընկալէ ամենքն ալ, և յօժարակամ ցոյց կուտայ անոնց իր գործիները: Էտիսըն միջհասակ, թարեկազմ և կորովի մարդ մըն է, անխոնջ աշխատող: Օր մը նորոգութեան

համար հեռագրական գործի մը բերին իրեն, 60  
ժամ շարունակ աշխատեցաւ անոր վրայ: Իր մե-  
քենաներուն քով ունի սիրուն մատենադարան մը:  
Այնքան ընթերցասէր է որ ամէն կարեւոր գիրք  
և լրագիր կը մտնեն իր աշխատանոցը: Կ'ըսէ թէ  
«Լաւագոյն է տասներկու անգամ ընտիր գիրք  
մը կարդալ, քան տասներկու անկարեւոր գիրք  
մէկ մէկ անգամ կարդալ»: Աշխատանոցին մէջ իր  
ամէնէն սիրելի ընկերն է իր վերջին կատարելա-  
գործած Չայնագիրը, որու յաճախակի սա հար-  
ցումը կ'ուղղէ. «Ի՞նչպէս ես, ժերո՛ւկ Ֆօնօ-  
կրաւս»:

Այսպիսի մարդ մըն է ահա ձայնագիրի մե-  
ծահանճար հնարիչը. ազմուկէ, փառքէ, պսակ-  
ներէ հեռու, լռիկ և անձայն կ'աշխատի: Օր մը  
թերեւս ժողովուրդները երթան յաղթանակով պը-  
սակել զինք, որովհետեւ իր աշխատութիւնները  
ամէն գովեստէ վեր են, և իր գիւտերը, որոնց  
թիւր միշտ կը բազմանայ, մեծամեծ օգուտներ կը  
մատուցանեն մարդկային ազգին:

112. Թելագրութիւններ. — Հարցումներու վերածել:

113. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել:



## ԴԱՍ ՀԶ.

114. Շարադրել — Յարասեւութիւն :

1. Պօսեցէք երկու աշակերտներու մասին որոնց մէջ  
կը յարատեւ է, և միւսը չէ : 2. Առաջինը քննութեան  
կ'ընդունուի, երկրորդը կը մերժուի : 3. Յուցուցէք թէ  
յարատեւութիւնը միշտ օգտակար է :

115. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :

Միշտ, շուտով, հիմա, նորէն, լուկմի, յաճախ,  
ձեւ, միայն, վերջապէս, բոլորովին, մօտ, շատ, տա-  
կաւ, յանկարծ, յայտնի, անշուշտ, այնպէս :

---

## ԴԱՍ ՀԷ.



### Ա Ղ Ք Ա Տ Ը

Անոր աչքերն փոսն իջած են, գոյնը կար-  
մրորակ է, մարմինը նիհար, դէմքը վիհ: Քիչ  
կը քնանայ, քունն ալ շատ թեթեւ է. խոհուն  
է, և մտացի ըլլալով հանդերձ, ապուշ երեւոյթ  
մը ունի: Գիտցածն ըսելու կամ իրեն ծանօթ  
դէպքերուն վրայ խօսելու կը մոռնայ, և եթէ  
երբեմն խօսի, մէջէն չի կրնար ելլել, կը կարծէ  
թէ իր ունկնդիրներուն ձանձրութիւն կը պատ-  
ճառէ, կարճ կը խօսի, բայց պաղութեամբ, ինք-  
զինքը մտիկ ընել չի տար: Բնաւ չը խնդացներ,

կը ժպտի ուրիշներուն, անոնց համակարծիք է, կը վազէ, կը թռչի, անոնց փոքրիկ ծառայութիւններ ընելու համար, հաճոյակիւստ է և շողոփորթ. իր գործերուն վրայ գաղտնապահ է, երբեմն ալ ստախօս: Երկոց է, կամաց ու թեթեւ կը քալէ, կարծես կը վախնայ գետինին դպչելու: Աչքերը կախ կը քալէ, և չի համարձակիր վեր առնել ու անցորդներուն նայիլ: Բնաւ չ'ընկերանար անոնց որ վիճաբանելու համար չըջանակ մը կը կազմեն, խօսողին ետեւը կը կենայ, գաղտնագողի կ'ունկնդրէ խօսուածը, և եթէ երեսը նային, կամացուկ մը կը քաշուի կ'երթայ:

Բնաւ տեղ չի գրաւեր, թեթեւ մը կը նստի, ուսերը սեղմելով կը քալէ, գլխարկը մինչեւ աչքերուն վրայ քաշած՝ որպէս զի չնշմարուի, իր վերարկուին մէջ կը կծկտի ու կը պլորուի: Եթէ խնդրեն որ նստի, հազիւ թէ աթոռի մը եզրը կը տեղաւորուի:

Յած կը խօսի, գէշ կ'արտասանէ բառերը: Միայն պատասխան տալու համար կը բանայ բերանը. գլխարկին տակէն կը հազայ կամ քիթ կը սրբէ: Դրեթէ ինք իր վրայ կը թքնէ, և կը սպասէ որ մինակ մնայ՝ յօրանջելու համար, կամ



չաս շատ՝ քովը գտնուողներէն ծածուկ կը յօրան-  
ջէ, ո՛չ բարեւ տալու, ո՛չ մեծարանք ընելու հա-  
մար ուրիշին ծանրութիւն կը պատճառէ. — Ին-  
չու որ աղքատ է :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :  
117. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :

## Գ Ա Ս Հ Ր .

### Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Մ Է Ջ

Երկու քափոր հանդիպեցան իրարու ,  
Թաղում մըն է , սեւ դագաղ մը խեղճ տղու ,  
Սեւեր հագած մայրը կ'երթայ ետեւէն ,  
Տրտում տխուր՝ աչքերն անդուշ կ'աւրսատունն ,  
Մանկիկ մըն է , միւսն ալ՝ չքնաղ նորածին ,  
Բեհեզներու մէջ զայն կնիւղ կը տանին ,  
Թռչունի պէս ճողոռոյտով կ'ուտէ կաթ  
Իր զուարթ մօր թեւերուն մէջ խանդակաթ :  
Երբ կ'աւարտին թաղման հանդէսն ու կնունք՝  
Խայտառքեան պատկերին տակ սրբաշուք՝  
Երկու մայրերն հանդիպելով՝ ծնրադիր ,  
Իրարու սիրտ կը հասկնան անձկալիր :

Եւ արօթքի ազդեցութեամբ հրաշայի,  
Զուարթ մայրն ալ յանկարծ կուլայ կ'այլայլի  
Դագաղին մտ զոր գերեզման կը տանին,  
Իսկ լացող մայրն հոն կը ժպտի նորածնին :  
Թելադուքիւններ . — Նախ հարցումներու, յետոյ  
արձակի վերածելով՝ շարադրել :

## Դ Ա Ս Հ Թ .



## Ձ Մ Ե Ռ

Ձմեռ ժամանակ թէեւ արեգակը կը լուսաւորէ աշխարհ, սակայն ջերմութիւնը քիչ է . պատճառն այն է որ երկար ժամանակ չի մնար

երկինքի կամարին վրայ, ձմրան օրերը ամառուան օրերէն անհամեմատ կարճ ըլլալուն. ասկէջ զատ ձմեռը, ինչպէս դուք ձեզմէ կրնաք դիտել, արեգակը մեզմէ կը հեռանայ դէպ ի հարաւ, հեհեռաքար իր ճառագայթներն ալ շեղակի կ'արձակէ մեր վրայ: Չմեռը Գեկտեմբեր 11ին կ'սկսի Երկրիս լեռնոտ և բարձրաւանդակ մասերուն մէջ, ինչպէս և այն աշխարհներու մէջ որոնք աւելի հիւսիսային կողմը կ'իյնան, ձմեռը այդ նշանակուած օրէն առաջ կ'սկսի: Սաստիկ սառնամանակ բոլոր աշխարհ կը կաշկանդեն: Գետերն ու լիճերը ծածկուած են սառույցի հաստ կեղեւներով, որոց տակէն հոսող ջուրն իր մէջ կը պահէ բազմաթիւ կենդանիներ որ խիստ սակաւ սնունդ կ'ընդունին: Չիւնի անսահման սփռոյցներ միակերպ կը տարածուին մեր աչքին առջեւ և անխնայ կը ծածկեն թէ՛ թարշամած խոտերը և թէ՛ աչնցանի դեռ կանաչ մնայած արտերը: Բայց ձիւնը թէ՛ արտերու և թէ՛ բոլոր բոյսերու համար աւելի օգտակար է քան թէ անձիւն ցուրտը: Չեան ներքեւ սերմերն ու նորարոյս կանաչներու արմատներն անփլաս կը մնան, որովհետեւ այնտեղ համեմատաբար աւելի տաք է: Ամէն կողմ միաձեւ

ապիտակ մերկութիւն կը տիրէ և արեգական կար-  
ճատեւ ճառագայթներու տակ բազմաթիւ ցոյաց-  
ւելունք կը գոյանան : Եթէ ձիւնին վրայ չնշմարուէին  
նապաստակներու , գայլերու , աղուէններու և  
աքիսներու հետքերը , եթէ գիւղերու և քա-  
ղաքներու շրջակայքը չթռչտէին շատ մը քաղցած  
թռչուններ , յիրաւի պիտի կարծէինք թէ բուսա-  
կանութեան հետ դադրեր է կենդանական կեանքն  
այ : Սաստիկ ձմեռուան մէջ կերակուրի պակասու-  
թիւնը կը հարկադրէ վայրենի գազանները և մին-  
չեւ իսկ զգոյշ աղուէսը մարդիկներու բնակարաննե-  
րուն մօտենալ : Գայլն իր համարձակութիւնը կըրկ-  
նապատկելով մինչեւ անգամ մարդուս կ'սպառ-  
նայ : Բայց շատ գազաններ ալ ձմեռ ժամանակ  
իրենց որջերը կը քաշուին : Արջը ձմրան սկիզբէն  
կը թմրի , կը քնանայ փարայրիկ մէջ , իսկ սկիռոջ  
թէեւ չթռչտիր ծառերու վրայ , բայց իր խոռո-  
ջին մէջ աշնան սկիզբէն պատրաստած առատ պա-  
շարը կը վայելէ :

Միայն կենդանիներն չեն որ անհան-  
գիստ կ'ըլլան ձմեռուան ցուրտէն : Մարդիկ կը  
պատրաստուին ընդունիլ զայն՝ իրենց բնակարան-  
ներն և լուսամուտները ամրացնելով՝ վառարան-

Ներքը կը վառեն և հրաժարելով դաշտային աշխատութենէ, տնական գործերով կը պարապին :

Չմեռն ունի նաեւ իր թեթեւ ուրախութիւնները : Գեղեցիկ է մանաւանդ երբ արեգակը պայծառ լոյս կ'արձակէ և ձիւնապատ դաշտերուն վրայ կը փայլին բիւրաւոր կայծեր : Բայց ձմեռը զուարճալի է այն մարդուն համար միայն՝ որ տաք տուն և փափուկ զգեստ ունի, որ սաստիկ փութի ժամանակ կրնայ բոցավառ կրակին առջեւ նստած երեկոյեան սննդարար ընթրիքին սպասելու հարուստը՝ եթէ դուրս ալ ելնէ, կը հագնի իր տաք մուշտակը, փառաւոր կառքի մէջ կը նստի և արագընթաց ձիեր երկու բոպէի մէջ զինքը ուզած տեղը կը հասցնեն : Բայց անդին ի՞նչ դիրքի մէջ է խեղճ ծերուկ մուրացկանը : Առանց ցուրտին սաստկութեան նայելու, ստիպուած է փողոցէ փողոց թափառիլ և երկչտութեամբ ողորմութիւն խնդրել ի սէր Քրիստոսի : Մերուկը չունի տաք մուշտակ . տրեխները ծակծկած են և հագուստը պատուտած . ձայնը ծերութենէն և ցրտէն կը կերկերի . աչքերէն արտասուքի կաթիլներ կը գլորին, ձեռքերն ու ոտքերը կը դողդողան : Անոր ձեռքէն բռնած կ'առաջնորդէ մանուկ :

մը՝ որ ոչ նուազ ցաւալի կայութեան մէջ է: Խեղ-  
ճը ոտքերը գետինը կը զարնէ և փայտ կտրած  
ձեռքերուն մէջ կը փչէ, իսկ սաստիկ ցուրտը  
անոր աչքերէն արտասուքի կաթիլներ կը խշէ:  
Ներս առէ՛ք խեղճը, տաքցուցէ՛ք և տուէ՛ք ա-  
նոր ինչ որ կրնաք: Քարասոսորեամբ մի՛ մեր-  
ժէք «Աստուած տայ» ըսելով: Աստուած արդէն  
տուեր է ձեզ, դուք ալ աղքատներու բաժին հա-  
նեցէ՛ք Աստուծոյ տուածէն: Երեւակայեցէ՛ք որ  
եթէ դուք անոնց տեղն ըլլայիք, շա՛տ և շատ  
պիտի ցանկայիք որ օգնէին ձեզ, և եթէ օգնէին՝  
որքա՛ն գոհ կ'ըլլայիք և կ'աղօթէիք անոնց հա-  
մար. աւելի լաւ է զրկուիլ դատարկ խաղալիք-  
ներէ կամ անօգուտ անուշեղէններէ, և անոնց փո-  
խարէն օգնել աղքատներուն:

Թելադրութիւններ. — Հարցումներու վերածել.

120. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել:

## Դ Ա Ս Ձ .

### Կ Ո Յ Ր Տ Ղ Ա Ն

Գեղեցիկ է, կ'ըսեն, արփիմ,  
Ծաղկին ճիւղերն ալ կը հակին  
Գետին վրայ վայելչօրէն .

Թէ պերճախօս թռչնիկն աղու  
Եւ միջատներն այնքայոյ  
Շող շող լոյսին մէջ կը պարեն .

Բոյրը, կ'ըսեն, ծաղիկներուն  
Ան թոյրերուն չափ չէ սիրուն՝  
Որ թերթերուն կը ձօնէ լոյս .  
Թէ բլուրներն ալ ու ծոր ծոր,  
Լեռներ, մարդեր, ջուրէր բոլոր,  
Եւ պուրակներ և այգեր կոյս՝

Այնքան հրապոյր ունին գողօրիկ՝  
Որ ծունկի դան պէտք է մարդիկ  
Այդ պերճութեան առջեւ շքեղ .  
Բայց իմ պատիս չէ ցաւ ու խոց  
Որ չեմ տեսներ ծովն ալեկոծ  
Ոչ ալ ծաղկին գոյներն ու գեղ .

Ո՛չ երկինքը , ոչ շողն այգուն  
Ո՛չ ալ սյուրակն ու միրգն հասուն ,  
Ոչ թռչնիկը , լոյսն անսահման . . .  
Բողոր այս պերճ բարիքներէ  
Հատ մը , ս՛վ Տէր , կ'ըղձայի ես ,  
Տեսնել մայրի՛կս իմ սիրական :

---

## Դ Ա Ս Չ Ա .

### Մ Ե Մ Մ Ա Յ Ի Ը

«Եւ քնանա՞ս , զարթի՛ր , մեծ մայր սիրական ,  
Յարդ քունիդ մէջ բերանդ ստէպ կը շարժէր .  
Ձի աղօթքներդ ալ քու նինջիդ են նման ,  
Բայց արձանն ես կարծես կոյսին այս գիշեր .  
Շրթունքդ անշարժ և մեղմիկ շունչդ է լռեր :  
Ինչո՞ւ ճակատդ այդպէս կ'իյնայ վայրահակ ,  
Մենք ի՞նչ ըրինք որ ալ մեզ չես սիրեր :  
Ջահն է սժգոյն և կը միսայ մեր կրակ .  
Եթէ լռես , պիտի մեռնինք մենք անտէր ,  
Պիտի մարին մեր հնոցին հո՛ւսկ կայծեր :



Յուրա են ձեռքերդ, աչքերդ շուտ թող բացուին  
Դուն կըսէիր, աշխարհք մը կայ մեզմէ վեր,  
Թէ կայ երկինք և գերեզման, կեանք է սին,  
Մահուան վրայ կը խօսէի՛ր անվեհեր,  
Ի՞նչ է մահը, մայրիկ, ինչու չես ըսեր :»  
Այս պէս ի դուր հեծկյսային անյարիր,  
Այգն արթնցաւ. կը քնանայ դեռ հանին,  
Զանգակն հնչեց խուլ հարուածներ օդային,  
Եւ անցորդ մը տեսաւ դռնէն հիւղակին  
Թափուր մահճին՝ Սուրբ Դիրքին քով լալազին՝  
Որը տղաքն որ կ'աղօթէին ծնրադիր :

Թելադուքիւններ. — Արձակի վերածելով շարա-  
գրել :

---

## Դ Ա Ս Ձ Բ.

### Կ Ո Յ Ր Ա Ղ Ջ Ի Կ Շ

Մայր եկեղեցին արտաճմիկ տեսարանի մը  
հանդիսավայր դարձած էր Զատիկի առտուն :

Քրիստոնէական Ասագ օտնը պայծառ մթնո-  
յորս մը գոյացուցած էր տաճարին մէջ, ուր հառա-

խընուած երկսեռ հաւատացեալները իրենց տօնական հագուստներու ամէնէն ընտիրովը պճնուած, սրճապարար ներդաշնակութիւն մը կը կազմէին եկեղեցւոյ ակնախօսիչ յուսազարդութեանը և հոն սարքուած հոգեւոր խրախճանքին հետ: Փոքրիկները մանաւանդ իրենց հրեշտակային դէմքով ու թազմազան արգուզարդով՝ աչքառու տեղ մը կը բռնէին ազօթողներու խուռներամ շարքին մէջ. ոմանք իրենց ծնողքին քովիկը կանդնած և ոմանք ալ պատուհաններու կամ տրամադրելի նստարաններու վրայ ելած: Արարողութեան իւրաքանչիւր դրուագը նոր խնժիղով մը կ'ողջունուէր այս անմեշունակ հոգիներուն կողմէ, որոնք բուռն հետաքրքրութիւն ցոյց կուտային բան մը չկորսնցնելու համար սեղանին վրայ պարզուած սրբազան տեսարաններէն: Լուսափառի ջահերը, պղպտուն կանթեղները, ոսկեհուռ շապիկները, պատրիարքական աթոռը, ոսկեճոյղ գաւազանը, խոյրը, եմփիտրոնը, և վերջապէս տաճարին մէջ շողշողացող ամէն աչքառու առարկայ՝ նոր ուրախութիւն կ'առթէր փոքրիկներուն, որոնք հիւսցիկ շեշտերով ու անզուսպ ճեւշոյով կ'սքանչանային այս ամէնուէն վրայ, չմոռնալով մերթ ընդ մերթ իրենց տպաւորու-

Թիւնները պարզել հասակակիցներու, և կամ անոնց նկատմամբ բացատրութիւններ պահանջել հայրիկներէն :

Փոքրիկ տղեկ մը միայն անտարբեր կը թուէր այս ամէնուն :

Հաղիւ հինգ տարեկան աղջնակ մը բաւական հոկիկ հագուած, հանդարտ ու անտարբեր՝ նրստարանին վրայ կանդնած էր տարէց կնոջ մը քով որ մեծ մայրիկն ըլլալու էր անշուշտ :

Արարողութիւնները կը շարունակէին : Ուրիշ տղայք կը ժպտէին, ետ առաջ կը դառնային, չարածճի անհանդարտութեամբ կ'եռնէնքիլն, փոքրիկ աղջնակը սակայն համակերպող ըութեամբ մը անշարժ կը մնար իր տեղը, սպիտակ թոմսուլիկ մատուրներովը քակելով ու հիւսելով ծուէնները վարսերուն՝ որոնք պարանոցէն վար մինչեւ կուրծքերը կ'երկարէին :

Նստարանին ետին կանգնած էի ես, և քովինտի միայն կրնայի տեսնել կոսակասն դէմքը տղեկին, որուն կաթնաթոյր ծոծրակին աջ ու ձախ շարժումներէն ազօտ կերպով միայն կը նշմարուէր քաշեայ ողորկութիւնը վարդ այտերուն :

Աշարչադործ ութեան գլուխ դործոյներէն ալէսք էր ըլլար այս հրեշտակը, այնչափ բարեձեւ էր գլուխով ու իրանով:

Պատարագի Աւետարանէն ետք «Փառք քեզ Տէր Աստուած մեր»ի փառարանութիւնը, պահ մը անհացոյց հաւատացեալները: Հաղարաւոր ժողովարդ ձայնակցեցաւ չորս երկուասանեակ դպիրներու խմբերդին, որուն սերովքեակաւ պասկառանք մը կ'ընծայէին ծնծդաներու խոշ քնդիւնները, քշոյներու խժաշուր զօղանջներն ու բուրջխառներու արծարծած բոյրի անպանման փոշաները: Անկարելի էր չզգածուիլ պատարագի այս խորհրդաւոր վայրկեանէն, ու ջերմեւանդութեան զօրեղ բարդով մը յնցեց ծովացած բազմութիւնը և ամէն մարդ երկու ձեռուրները իրարու միացուց օւղղածիդ, ու վերամբարձ՝ մշամիտի սրտով կրկնելու համար Հաւատոյ Հանդանակը՝ «Հաւատամք»ը:

Փոքրիկներն ալ օրինակեցին մեծերու այս բարեպաշտիկ ձեւը և իրենց մանկական թաթիկները իրարու միացուցած ուղղածիդ ու վերամբարձ բռնեցին զանոնք: Աղջնակը այս անգամ ալ անտարբեր կը մկար դեռ և մեծ մայրիկը բաւական

ճիշդերէ կտք, հազիւ կրցաւ «Հաւատամք»ի պատ-  
շտն ձեւը տալ անոր թաթիկներուն :

Հետաքրքրութիւնը արթնցաւ մէջս, ինչո՞ւ  
այս տարտամ ընթացքը, ինչո՞ւ այս բքամսու-  
քիւնը սիրուն հողի մը վրայ, որ ուշիմութեան  
ամէն ճիշդերով տէտք էր օժտուած ըլլալ : Պահ մը  
ուշագրութիւնս լարեցի, և մտէն դիտելու համար  
եբբ դէպի առաջ ծռեցայ, տեսարաններու ամէ-  
նէն սրտաճմիկը, ամէնէն սղեխարշը, ամէնէն  
տղբային պարզուեցաւ աչքիս :

---

## Դ Ա Ս Զ Գ .

### Գ Յ Ո Ւ Յ Ե Ա Ն Պ Ա Ր Տ Ք Ե Ր

Իրուքեան պարտքերը սա. առածով կը մեկ-  
նուին . «Ըրէ՛ք ուրիշին՝ ինչ որ կ'ուզէ՛ք որ ձեզի  
ընեն» : Անոնց բովանդակութիւնն է սա բացատ-  
րութիւնը . «Ուրիշին բարիք ըրէ՛ք» : Ասոր համար,  
գլխութիւնը կը կոչուի նաեւ բարեգործութիւն :

Տկարներուն ու թշուառներուն մեղսու ըլ-  
լալը գլխութեան սովորական ձեւն է : Կարօանե-

բուն հայ տալ, հիւանդներուն դեղ ու դարմանն հայթայթել, տկարները պաշտպանել, ահա ասանք են դժուրեան ամենէն սովորական օրինակները։ Բայց ձեռննուռքիւնը՝ մեր նմաններուն միայն նիւթապէս օժանդակելուն մէջ չի կայանար։ Շատ անգամ ըստ խորհուրդ մը, երբեմն սոլ բարեկամական մեղադրամբ մը աւելի կ'արժեն՝ քան նիւթական նպաստ մը։ Այս բանը կախում ունի պարագայէն և անձէն։

Մերք ընդ մերք և քննաւնայի համար գրթած ըլլալ բաւական չէ։ Դժուրիւնը պետեանք մը կամ հաճոյք մը չէ, այլ պարտք մը որ մեր կողմէն կը պահանջէ շարունակութիւն և յարատեւութիւն։

Մարդկութիւնը ընտանիք մ'է որուն մէջ ուժով ու երջանիկ եղողները պարտին աշակցիչ աշակարներուն ու դժբաղդներուն, ինչպէս եղբայր եղբոր կ'ընէ։ Սիրենք զիւար, օգնենք իրարու։ Մեր սիրտերը մինչեւ սա բարձր կէտը հասնենք, եղբայրութիւն։ Աւետարանը կ'ըսէ. «Դուք ամենեւեքին եղբարք էք»։

Թելադրութիւններ . — Հատու ամսեկու լատենէ։

123. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել։

## Գ Ա Ս Զ Դ .

124. Շարադրել նամակ :

Ձեր ուսուցչին անունն է . յայտնեցէք ձեր շնորհաւորութիւնները . նաեւ ձեր սէրը , երախտագիտութիւնը իր նուիրած այնքան խնամքներուն համար :

125. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :

Ազգ , գաւաթ , գամ , գաւազան , օղնութիւն , փարախ , փափուկ , ուրախութիւն , հրաշք , որոգայթ , համեստութիւն , ձեւ , վերջ , բերք , կոշիկ , զօրաւոր :

---

## Գ Ա Ս Զ Ե .

### Մ Ն Ո Ւ Ն Դ Ի Վ Ա Ր Դ Ե Ր Ը

Դեկտեմբերի մէգին մէջէն

Տրտում վարդեր . կը բողբոջեն ,

Նման աչքին արցունքով թաց ,

Ձոր չի վառեր կեանքին նախանձ :

Արեւն անոնց բուրում չտար

Ոչ ալ գոյներ ոսկեակար .

Բայց սիրտերուն ալ վշտալից

Դալուկն անոնց չազդեր թախիծ :

Եւ քանի որ մասդան զարուն  
Նորարողոց հողիներուն  
Կը սահմանէ դեղն իր փայլուն,  
Տառապողին համար. ո՛վ Տէր,  
Թող որ փթթին միշտ այդ վարդեր.  
Այդ Ծնունդի ամ դոյն վարդեր :

---

## ԴԱՍ 22.

### ԱՂԲԻԻՐԸ ՈՒ ԾՈՎԸ

Անհուն ծովուն մէջ շիբ առ շիբ  
Կը կաթէր ջուր մ'ակաւակիս,  
Երբ շառայեց ծափն աշխատ  
Ահեղագոյ, «Ի՞նչ կ'ընես աստ,  
Ես ամպրոպն եմ, շաւիթն ու մերիկ,  
Անսահման եմ, ինչպէս երկինք,  
Պէտք ունի՞մ քեզ. խեղճ աղբերակ,  
Մինչ փոքր ես դուն, ես անյատակ : »  
Եւ աղբիւրն ալ ըսաւ ծովուն.  
«Ես անշուք եմ դուն ռալնիս,  
Քայց կը բերեմ քեզ, ծո՛վ անհուն,  
Կաթիլ մը ջուր, որ կը խմուի : »

Թեյադրութիւններ. — Արձակի վերածելով՝ շարա-  
գրել .

---



## ԴԱՍ ԶԷ.



### Գ Ա Լ Ի Լ Է Ո Ս

Կոպեռնիկոսի գիտը, թէեւ շատ գեղեցիկ,  
դարձեալ ուշադրութիւն չգրաւեց, այնպէս որ  
հարիւր տարի վերջը ուրիշ նշանաւոր աստղագիտ  
Վլ, Գալիլէոս անունով, հարկադրուեցաւ նոյն ճշ-  
մարտութիւնը ապացուցանելու աշխատիլ: Գալիլէոս  
Ֆրան Իտալիոյ Բիզա քաղաքն և ա՛յն աստիճան

եռանդով հետեւեցաւ ուսման, որ իր քսան և հինգ տարեկան հասակին մէջ արդէն Քիզայի համալսարանին չափազիտութեանց ուսուցչապետ (Քրօֆէսոր) կարգուած էր: Իր երիտասարդութեան հասակին մէջ կարեւոր գիւտեր ըրաւ և մեծ աշուն վաստկեցաւ: Իմանալով որ Տանիմարքացի մը դիտակը հնարած է, որով հեռաւոր առարկաներ կը տեսնուէին, և զոր շատեր իրբ խաղալիկ կը գործածէին, Իպլիէոս սկսաւ աշխատիլ և շատ չանցած առաջին հեռագիտակը (դիէլեսօք) շինեց: Թէև շատ անկատար էր տակաւին, ասով հանդերձ շատ օգնեց անոր՝ Կոպերնիկոսի գիւտերուն ճշմարտութիւնը ստուգելու և ուրիշ շատ նորանոր գիւտեր ընելու:

Գալիլէոս դիտակի գիւտէն առաջ ալ կը կարծէր թէ ստաղբըրը փոքրիկ կայծեր չէին, այլ մեծաձեծ երկիրներ որ կը շարժին անհուն անցրպեսին մէջ: Իսկ հեռագիտակի օժանդակութեամբ համազուեցաւ որ իր ենթագրութիւնները ստոյգ էին: Հեռագիտակով բուսինին նայելով՝ տեսաւ որ անոր վրայ կային խորունկ ձորեր ու լեռներ և մինչև անգամ այդ լեռներու բարձրութիւնը չափելու հնարը գտաւ: Այսեւուն նայելով՝ գտաւ որ

անոր վրայ կան բիծեր որ կը շարժին, երբեմն կը ծածկուին, իսկ երբեմն նորէն կը յայտնուին, և հետեւցուց որ արեգակը երկրէս քաղնապատիկ մեծ, ահագին գունտ մըն է. և այդ գունտն, որ լուսաւոր մթնոլորտն] մը չընկալատուած է, իր օտանցքին վրայ կը թաւալի: Յետոյ Գալիլէոս սկսաւ գիտել երեկոյեան դէմ փողփողող պայծառափայլ մուրակն՝ որ Արուսեակ կը կոչուի, և տեսաւ որ մեր լուսինին նման է, լուսինին նման կը մեծնայ ու կը նուազի, երբեմն ալ բարակ մանիկի մը ձեւը կ'առնէ: Ուրիշ մուրակի մը մօտ, որ Երեւակ կը կոչուի, փայլուն թեւերու նման բան մը նկատեց, բայց չի կրցաւ լաւ որոշել թէ թեւեր չէին, այլ մուրակին շուրջը ձգուած երկու զայլուն օղակներ: Իր դիտողութիւնները շարու նակելով՝ համոզուեցաւ որ Լուսնիքազ կոչուած ուրիշ մեծ մուրակի մը շուրջը կը պտտին չորս գեղեցիկ աստղեր, որ լուսիններ են, և տարբեր արագութեամբ անոր շուրջը կը դառնան, ինչպէս որ լուսինը կը դառնայ մեր երկրի շուրջը:

Իժուար չէ ըմբռնել թէ այս բոլոր գիւտերը Գալիլէոս ո՛չ մէկ օրուան և ո՛չ իսկ մէկ տարուան մէջ կատարեց: Նրիտասարդ դասատուն ծերացաւ

«Քինչեւ որ կրցաւ դիտել այս ամէնը՝ զոր մենք հարեւանցի պատմեցինք : Այս միջոցիս Գալիլէոսի անունը, որ մարդկութեան համար ուրիշ շատ օգտակար և նշանաւոր գիւտեր ըրած էր՝ հոյակոտեցաւ ամբողջ Եւրոպայի մէջ : Բայց ուր փառք, հոն և տնոր հակառակորդի՝ Կալանձ : Կալանձորդներն և անոնց հետ անմիա ու ձեռնաբաց մարդիկ բաւրասեցին Գալիլէոսը, պնդելով թէ անոր յայտնութիւնները հակառակ են Ս. Գիրքին, ձինչդեռ ընդհակառակն՝ Գալիլէոսի գիւտերը Ալքսանդրի անասնեւան իմաստութիւնն ու ամենակարողութիւնը կ'ապացուցանէին : Սակայն Հաւատաքրննութեան սարսափելի Ատեանը, որ կը կարծէր թէ կեղծ ու բռնաւորական միջոցներ կարող են ընդունելի ըլլալ ամենաբարի Աստուծոյ, դատապարտեց Գալիլէոսը իրր մեղապարտ և բանտարկեց : Պատուական ծերունին, որ իր բոլոր կեանքը դիտութեամբ անցուցած էր մարդկութեան օգտին համար, բանտարկուեցաւ խոնաւ բանտի մը մէջ : Քանի մը ամիս բանտարկութենէ վերջը՝ խեղճ ծերունին իր սքանչելի գիւտերէն հրապարակաւ հրատարակու ծանր պայմանով արձակուեցաւ բանտէն : Բայց հանդիսաւոր հրատարականը արժասու-

ճեղու ժամանակ՝ Գալիլէոս չը կրցաւ համբերել և  
սաքչ գեանին զարնելով՝ բարկութեամբ գոչեց  
«Թո՛ղ մեր ըսածը ըլլայ, սակայն երկիրս կը  
շարժի» : Այս խօսքերուն համար նորէն բանտար-  
կեցին Գալիլէոսը և այս անգամ երկար ատեն :  
Հոռակ ուրեմն զօրաւոր անձերու միջնորդութեամբ  
և իր ծերութեան լնայելով՝ սրձակեցին զայն  
բանտէն, բայց պայմանով որ Փիօրէնցայի մատ-  
առանձին տեղ մը բնակի և երբէք չի հեռանայ  
անկէ : Հոն Գալիլէոս իր նշխարեալ կեանքն անցուց-  
գիտական պատասխաններու մէջ, քանի մը բա-  
րեկամներէ շրջապատուած, և քանի մը նոր ճրջ-  
մարտութիւններ ալ նուիրելով մարդկութեան :  
Այդ անգուլ պարսպամունք զրկեցին զայն իր մէկ-  
աչքին լոյսէն, բայց մինչեւ վերջին շունչը, որչափ  
միւս աչքով տեսներու կարող էր, շարունակեց իր  
գննութիւնները : Կուրութիւն, խլութիւն, սֆնու-  
քիւն և հիւանդութիւններ, որոնք բանտին խա-  
նաութեան հետեւանքն էին, դառնացուցին ծե-  
րունւոյն վերջին օրերը : Վերջապէս 1691 Յունուար-  
ճին Գալիլէոս մշտնջենապէս աղատեցաւ ամէն տե-  
սակ հալածանքէ : Մարմինը կը հանգչի Փիօրէն-

ցայլ Ս. Խաչ Եկեղեցւոյն մէջ, ուր հոյակապ արձանե-  
մը կանդնուած է՝ զոր քանդակեց Միքէլ Անճելոյ ։

Թելսդրուքիւններ . — Հարցումնիրու վերածել ։

128. Շեղաղիր բառերով մէյմէկ խօսք կազմել ։

---

## Դ Ա Ս Ձ Ը .

### Լ Ո Ւ Ս Ն Ա Կ Ը

Երկինք ծածկուած էր սեւ ամպերով,  
Անձրեւ կը տեղար, ուժգին փչէր հով .  
Սարաալիեցուցից գոռումով ահեղ  
Շէկ կայծակներու կը տեղար հեղեղ ։

Արսէն ու Արուս պատուհանին քով  
Նստած՝ նայէին դուրս տխուր դէմքով  
Մայրիկը չկար տան մէջ այն գիշեր,  
Հայրիկն ալ հեռու քաղաք էր գացեր ։

Երբ հանդարտեցաւ մորիկն այն սաստիկ  
Ցրուեցան ամպերն ալ մէկիկ մէկիկ,  
Յանկարծ փայլեցաւ գեղեցիկ լուսնակ  
Երկինքի վրայ՝ դեղնած, սիրունակ ։

Քոյր իմ, վե՛ր նայէ, ըսաւ Արսէնիկ  
Տե՛ս, երբոր ծովէն նոր կ'ելլէր լուսնիկ,  
Որքան կարմիր էր, վառ ու բոցաշոյս,  
Բայց հիմայ ինչո՞ւ այսպէս է, Արուս :  
Միթէ չե՞մ գիտեր, եղբայր իմ Արսէն,  
Այնքան սոսկալի որոտիմ ձայնէն :  
Սաստիկ վախնալով դեղեցիկ լուսինն,  
Եղած է իր գոյնն այսպէս դերգեղին :

Ա. Ռ Ա. Ծ

Տղայք, հետաքրքիր ըլլալու են և ամէն օր  
օգտակար նոր բան մը սորվելու են :

Թելագրութիւններ . — Հարցումներու վերածել :  
130. Եեղազի բառերով մէյմէկ խօսք կազմել :

ԴԱՍ 2Թ.

131. Եարադրել, օգտակարն ու հաճելին :

1. Հօրեղբայրը կ'ուզէ Ատրինէն և Էօթէնին վարձաւորել իրենց շահած մրցանակներուն համար, անոնցմէ լուրջանչիւրին կու տայ հինգ հինգ Ֆրանք, և կ'ըսէ որ ընտրեն վաճառանոցին մէջ իրենց հաճելի բանը : 2. Ատ-

րինէ կ'ընտրէ վիզնոց մը, թեւնոցներ: Էօթէնի ձմեռ-  
նային հագուստ մը: Ատրինէ կը զարդարուի տօնի օրը-  
Էօթէնի կը տխրի: 3. Չմեռը կու գայ, Էօթէնի կը հագնի  
զգեստը. Ատրինէ կը տխրի: 4. Ո՞վ լաւն ընտրեց:

132. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ:

Ամուր, թշուառ, չար, հարուստ, մաքուր, ծուռ,  
ճշմարիտ, անարգ, գործունեայ, ողորմած, պատշաճ,  
խռովարար, ապերախտ, ծածուկ, ծեր, յանդուգն, գե-  
ղեցիկ, թուլամորթ:

---

## Դ Ա Ս Ղ.

Ա Ք Ր Ա Յ Յ

Ե Ի

Մ Ա Ն Ե Լ Ո Ի Մ Ե Ք Ե Ն Ա Յ

Մեր հանդերձները սովորաբար կը շինուին  
բամպակէ, բուրդէ, մետաքսէ և կտաւէ: Բամ-  
պակը իր նախնական ձեւին մէջ շատ տարբեր է  
մանուած բամպակէն: Բամպակը մանելու համար  
յատուկ գործարաններ ու մեքենաներ կան: Ընդ-  
հանրապէս գիպուածը պատճառ եղած է մեծա-  
մեծ գիւտերու. պարզ գործաւորներ նշանաւոր



հնարիչներ եղած են, այսպիսիներու կարգէն էր նաեւ Բիչարտ Աքրայթ, բամբակ մանող մեքենային հնարիչը :

Աքրայթ ծանօթացած էր Բէյ անուն ժամագործի մը, և կը կարծուի թէ Բէյ տուած էր անոր բամբակ մանելու գաղափարը : Ինչ որ ալ ըլլայ, Աքրայթ իր ուշադրութիւնը բոլորովին այս գաղափարին նուիրեց, և անխոնջ եռանդով սկսաւ աշխատիլ, որպէս զի կարենայ իրացնել զայն : Նոյն միջոցին Աքրայթի հայրենակիցները պատուիրակ ընտրեցին զայն, բայց Աքրայթ այն աստիճան չքաւոր էր, որ հագնելու զգեստ չունենալով՝ զինքը ընտրողները հանգանակութեամբ ըզգեստ մը տուին անոր, և այսպէս կրցաւ ընդունիլ իր պատուիրակի պաշտօնը :

Աքրայթի շինած մեքենան շատ թշնամիներ ունեցաւ, գլխաւորապէս բամբակի գործաւորներն, որոնք այսպիսի մեքենայի մը հնարումն իրենց աշխատութեան վնասաբեր կը համարէին . հետեւաբար վախնալով ժողովրդեան սպառնալիքներէն՝ Աքրայթ՝ որոշեց իր մեքենան և ուրիշ գոյքերը ապահով տեղ մը փոխադրել : Նոթինկէմ գնաց և հոն հարուստ դրամահերկերէ օգնութիւն խնդրեց : Անոնք

ալ հաճեցան պէտք եղած դրամը տալ, պայմանով որ մեքենայէն յառաջ եկած շահուն իրենք ալ մասնակցին : Սակայն տեսնելով որ մեքենան ակնկալուած շահը չբերեր՝ հրաժարեցան դրամ տալէ : Այն ատեն Աքրայթ դիմեց Սթրիւտ և Նիտ պարոններուն, որոնց առաջինը գուրպայ շինելու արուեստին հնարիչն ու արտօնատէրն էր : Սա իսկոյն հասկցաւ Աքրայթի գիւտին կարեւորութիւնը և ընկերութեան պայմանագիր մը կընքեց անոր հետ : Այս ընկերութեան շնորհիւ հարստութեան դուռները բացուեցան Աքրայթի առջեւ :

1769 ին, «Ռիչարտ Աքրայթ ժամագործ նութիւնկէմի մէջ» անունով արտօնագիր մը ստանալով, նոյն քաղաքի մէջ բամբակ մանելու գործարան մը հիմնեց, որու մեքենաները ձիերը կը դարձնէին, ուրկէ կը հասկցուի թէ իր մեքենան տակաւին կատարելագործման կարօտ էր : Աքրայթ աւանց երբէք վհատելու, այնչափ փոփոխութիւններ ու բարեփոխումներ մտցուց անոր մէջ՝ որ վերջապէս գործածութիւնը շատ դիւրացաւ և օգտաւէտ եղաւ : Աքրայթ այս յաջողութիւնը յարատեւ աշխատութեամբ միայն կրցաւ

ձեռք բերել: Նախ իրեն օգնող դրամատէրները տեսնելով որ Աքրայթի մեքենան մեծամեծ ծախքերու կ'ենթարկէր զիրենք՝ առանց նշանաւոր արդիւնք մը արտադրելու՝ վիասեցան: Սակայն ձեռնարկութիւնը յաջողեցաւ, բայց այն ժամանակ ալ գործաւորները զինուեցան Աքրայթի դէմ և Շորլիի մօտ շինած մէկ գործարանը հիմնադրուեց ըրին: Նոյնպէս և Լանքշայրի վաճառականները միաբանելով դատ բացին Աքրայթի դէմ և արդարեւ յաջողեցան ոչնչացնել անոր արտօնութիւնը, սակայն Աքրայթ չվճատեցաւ այս ճախողուածէն: Ընդհակառակն ուրիշ քաղաքներու մէջ նորանոր մանարաններ հիմնեց: Սթրիւտի հետ կնքած պայմանագիրին ժամանակը լրանալով, Գրամֆօրտի գործարանն ալ իր տրանսպորտի տակ առաւ, և քիչ ժամանակէն այնքան ընտիր գործեր արտադրեց որ ամենուն համակրանքը շահեցաւ: Աքրայթ անխոնջ աշխատող մըն էր, զարմանալի եռանդով և փութացանութեամբ օժտուած: Յիսուն տարեկան հասակին մէջ ֆերականութիւն ուսալի ուղղագրութիւնը ճշգեղու համար: Այս նոր զբաղման պատճառաւ ժամանակ չկորսնցնելու համար՝ Աքրայթ ֆառաձի կառքով կ'երթար իր գոր-

**Ժարանք :** Ահա այսպէս Աքրայթ հիմնադիրը եղաւ այժմու սարագազորժողովեան, որ այսօր անբաւ հարստութեան աղբիւր մըն է թէ՛ անհասներու և թէ՛ ազգերու : Ուստի երբ բամպակէ զգեստ մը հագնինք, երախտագիտութեամբ պարտինք յիշել այս ճշմարտապէս մեծ մարդուն անունը :

**Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել . — Բարոյական :**

134. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :

~~~~~

## Դ Ա Ս Դ Ա .

135. Շարադրել, երկու գործաւորներ :

**Սեթ** (քառասնամեայ), **Մկրտիչ** (քսանամեայ) . երկուքն ալ հիւան, կ'աշխատին լաստակի մը վրայ . (նկարագրել) : Յանկարծ լաստակը կը տապալի և երկուքը կը մնան փայտի մը վրայ : Սոսկալի տագնապ մը այս երկու գործաւորներուն մէջ : Մկրտիչ իր անձը կը նուիրէ Սեթն ազատելու համար՝ որ ընտանիքի հայր է, (կարճ խօսակցութիւն) : Մկրտիչ գահավէժ իյնալով՝ կը մեռնի, մեծարանք այս վեհօգի գործաւորին :

136. Գտնել հետեւեալներուն երկերկու հոմանիշ :  
Կրթել, կասկածիլ, տանջել, օգնել, փնտռել, վա-  
զել (Չուրի), ստիպել, խորովել, համբուրել, յողնիլ, կա-  
պել, կցել, գիտնալ, պաշարել, հրել :

## ԴԱՍ ՂԲ.

### Հ Ո Վ Ի Ի Ի Ն Ե Ր Գ Ը

Ես բարձր լերան սուրբ աարի վրայ  
Նստած՝ կ'արածեմ, Տէ՛ր, իմ հօտերը,  
Դիշեր ու ցերեկ Քոռ տեսքիդ կարօտ  
Քաղաղ կը սպասեն իմ ոչխար, իմ հօտ :

Արդեօք կ'ըլլայ որ դքեղ ալ մէկ օր  
Տեսնեմ ու սիրեմ որպէս գթած հօր,  
Արդեօք կ'ըլլայ ո՞ր մէկ օր դուն ալ գաս  
Իմ վրանին մէջ բարի հիւր դառնաս :

Ո՛վ տէր, իմ վրանս երբոր ԴՈՒՆ հիւր դաս,  
Եւ բարի ողջոյն սիրով ինձի տաս,  
Ոտքերդ կը լուամ ջուրով՝ պաղ, յատակ  
Քեզ հանգիստ կուտամ իմ վրանիս տակ :

Ինչպէս Աբրահամ ծերունի հայրիկ  
Կը հիւրընկալեմ Քեզ, Տէ՛ր իմ քաղցրիկ ,  
Քեզ համար զոհեմ գառըն անասուս  
Կը խնկեմ բուրում աշխարհ արարատ :

Կաթ, սէր, կարագով կը կազմեմ սեղան  
Եւ ծաղիկներով կը զարդարեմ զայն ,  
Քեզ կը խմցնեմ մեղր օշարակ  
Կ'ածեմ իմ սրինգով երգ քաղցրանուագ :

Թարմ շուշաններով կարմիր սպիտակ  
Քու գլխուդ համար կը հիւսեմ պսակ ,  
Ասրով եմ գործած փափուկ պատմուճան  
Տէր, Քե՛զ կ'ընծայեմ իմ սիրոյս նշան :

Երբ կը հեռանաս, Տէ՛ր, դուն սիրա ազնիւ  
Եւ «Մնա՛ւ բարով, կ'ըսես, հե՛զ հովիւ» .  
Քեզ կ'աւաջնորդեմ մինչ լերան կատար ,  
Եւ համբուրելով դնեմ ճանապարհ :

Այց ըրե՛՛ մէկ օր այս սուրբ մյրգաստան  
Այցելէ ինձի, տէր իմ պատուական ,  
Զի առաջուրնէ՛ դուն, այս, հովիւին  
Եղար պահապան ու պաշտպան վերին :

Արդեօք ես՝ խեղճուկ հովիւըս նոյնպէս  
Ձունի՞մ այնքան շնորհ որպէս Քոյդ Մովսէս :  
Միթէ Աբրահամ, Իսահակ, Յակովբ  
Միա՞յն սիրելի եղան քեզի քով :

Թելադրութիւններ . — Արձակի վերածելով՝ շարա-  
դրել :

---

## ԴԱՍ ՂԳ.

### ՀՈԳԻԻՆ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

Տղա՛ս դիտէ քու ներսդ և հոգիիդ մէջ  
պիտի գտնես շատ աւելի սխալներ, քան  
չորջրդ գտնուող նիւթական բոլոր առարկաներուն  
մէջ :

Եւ նախ՝ կը խորհի՛ս, տղաս : Խորհիլը չտես-  
նուիր, չլսուիր, չջշափուիր, սակայն գոյութիւն  
ունի :

Խորհելով է որ կրնաս ճանչնալ ճշմարտու-  
թիւնը :

Մտքիդ մէջ է որ կը պահես տեւական յիշա-  
տակը ամէն տեսած, լսած, սիրած բաներուդ :

Ինչ հրաշալի բան է յիշողութիւնը : Երբ մայրգ-  
քովդ ըլլայ յիշողութիւնդ քեզի ցոյց կուտայ իր  
գիմագիծերը և իր սիրական պատկերը : Կը կար-  
ծես տեսնել զայն , լսել անոր ձայնը : Այսպէսով  
մեր աչքէն հեռու եղող էակները մեր միտքին մէջ  
ներկայ կրնան ըլլալ :

Մեր հոգիին մէջ աւելի գեղեցիկ բան մըն  
ալ կայ , ան իր մէջ կը պարունակէ անհուն իմաս-  
տութեան , անսահման կարողութեան , անեզր բա-  
րութեան գաղափարը : Ի՛նչ սքանչելիք է աս , որ  
պզտիկ տղայ մ'ըլլալով հանդերձ՝ կրնաս յիշել ,  
կրնաս սիրել , կրնաս բաղձալ անսահման կատարե-  
լութեան . հոգին Աստուծոյ պատկերն է :

Միշտ մաքուր պահենք մեր հոգին :

Քելադրութիւններ . — Հարցումներու վերածել :

139. Գտնել հետեւեալներուն հականիշը :

Ճշմարիտ , երկայն , զօրաւոր , ուրախ , բաց , լայն ,  
պաշտպան , պատերազմ , կանխել , դիմադրել , առաւե-  
լութիւն , անէծք , միասին , վաղ , չափազանց , հեռու ,  
անցեալ , արտաքին :

---



## ԴԱՍ ՂԴ.



### Ն Ե Ի Տ Ո Ն

Անգլիոյ մէջ կ'ապրէր հանճարեղ գիտուն մը՝ Իսահակ Նեւտոնն անունով (ծնած 1642 թուին և մեռած 1727 ին)։ Շատ խելացի էր. յաճախ ամենահասարակ առարկաներու վրայ նայելով՝ ա'յնպիսի սուր դիտողութիւններ կ'ընէր, զորս հազարաւոր մարդիկ չէին միտքերնին բերած։ Անգամ մը Նեւտոնն ազարակին մէջ պտտած ժամանակ ինձոր մը տեսաւ, որ ոստէն փրթելով գետին ին-

կաւ : Ուրիշ անգամներ ալ տեսած էր թէ ի՞նչպէս խնձորը վար կ'իյնար , բայց բնաւ ուշադրութիւն չէր ընծայած : Իսկ այս անգամ հարցուց ինքն իրեն . « Ի՞նչու խնձորը ոստէն փրթելով դետին ինկաւ , վեր չելաւ կամ գէպի մէկ կողմ շնետուեցաւ : » Նեւտոն գիտէր որ ամէն երեւոյթ իր պատճառն ունի , ուստի և հարցուց ինքն իրեն , թէ ի՞նչ է պատճառն որ ամէն մարմին երկրիս վրայ կ'իյնայ և վեր չը նետուիր կամ օդին մէջ չի մնար : Լաւ քննելով այս սովորական երեւոյթը՝ որու վրայ մինչեւ այն ժամանակ ոչ ոք ուշադրութիւն դարձուցած էր , նեւտոն վճռեց թէ երկրիս մէջ ձգողական ոյժ մը կայ , որու նմանը մարդիկ վաղուց նկատեր էին մագնիսին մէջ , այն զանազանութեամբ միայն որ երկրին այդ մագնիսական զօրութիւնը գէպի իրեն կը ձգէ ամէն մարմին թէ՛ պինդ , թէ՛ հեղուկ , որով ջուրը ծովերէն դուրս չի հոսիր և օզը այլ և այլ կողմեր չցնդիր : Նեւտոն՝ այս վճիռը տալով միայն գոհ չեղաւ . շարունակեց իր զննութիւնները և շուտով տեսաւ որ միայն երկիրը չէ որ իրեն կը ձգէ մարմինները , այլ և ամէն մարմին գէպի իրեն կը ձգէ ուրիշ մարմիններ :

Եթէ շուրով լեցուն ամանի մը խաղաղ մակերեւոյթին վրայ ձգենք քանի մը փոքրիկ թեթեւ մարմիններ, կը տեսնենք որ սյդ մարմիններն իրարու մօտ կը հասնախմբուին կամ տակաւ կը մօտենան ամանին եզերքին: Փոքրիկ տաշեղը եթէ գետի մէջ ձգէք, միշտ մեծ գերանին կը մօտենայ, իսկ տերեւները և միւս փոքրիկ մարմինները եզերքին կը մօտենան:

Նոյնպէս Նեւտոն տեսաւ որ բոլոր մարմինները իրար կը քաշեն, և եթէ քար մը չի մօտենար իր մօտ գտնուող քարին, պատճառն է երկրի ձգողական ուժն որ շատ մեծ է քարին ձգողական ուժէն, ինչպէս որ երկրագունտը մեծ է քարէն, այսինքն քանի մը միլիոն անգամ:

Եթէ մանուկ մը փոքրիկ կառք մը քաշէ և ուրիշ մըն ալ կառքին ետեւի կողմէն պինդ բռնէ և ետ քաշէ, ո՛ր կողմի մանուկն որ աւելի ուժով քաշէ, կառքը այն կողմը կ'երթայ: Իսկ եթէ նոյն մանուկը կառքին ետեւէն կախուի, կատաճիգ երիպարները չեն զգար: Այսպէս ալ, թէեւ բոլոր երկրի վրայ եղած մարմիններն իրար կը քաշեն, բայց անոնց փոխադարձ ձգողական ուժն երկրի ուժին հետ համեմատելով՝ աւելի աննշան

է քան մանուկին ուժը չորս ձիու ուժի հետ բաղ-  
դատմամբ :

Իսկ ի՛նչ բան է մարմինին ծանրութիւնը :  
Քարը հողին վրայէն վերցնելով՝ կը զգանք որ  
ծանր է, կամ թէ ըսենք՝ կ'զգանք թէ ո՛րքան  
ուժով կը քաշէ զայն երկիրը : Երկրիս աւելի կամ  
պակաս քաշելն է որ այս կամ այնքան ծանրու-  
թիւն կուտայ մարմիններուն : Ու է մարմինի մը  
ծանրութիւնը համեմատելով ծանօթ ծանրութեան  
մը հետ, կրնանք գտնել այն մարմինն կշիւրը  
(քաշը), այսինքն թէ այս ինչ առարկան քանի՞  
քաշ է :

Գիտունները, որպէս զի որոշեն առարկանե-  
րու ծանրութիւնները կամ ըսենք այն ուժն որով  
անոնցմէ իւրաքանչիւրն երկրէս կը ձգուի, սկսան  
համեմատել իւրաքանչիւր մարմինի ծանրութիւնը  
ջուրի ծանրութեան հետ, և գտան որ բաժակ մը  
ջուրը 13 անգամ թեթեւ է բաժակ մը սնդիկէն,  
երկաթը  $8\frac{1}{2}$  անգամ ծանր է ջուրէն, ոսկին  $19\frac{1}{2}$   
անգամ եւ այլն : Մարմիններու այս ծանրութիւնը՝  
մաքուր ջուրին հետ բաղդատմամբ՝ կը կոչուի *սե-  
տակարար ծանօթութիւն* :

\*  
\* \*

Գիւրաւ կը հասկցուի թէ ինչո՞ւ կապարեայ վոքրիկ գնդակը՝ երբոր ջուրի մէջ կը ձգենք, իսկոյն տակը կ'երթայ, իսկ մեծ գերանը ջուրին երեսը կը մնայ. առէ՛ք այնչափ ջուր որքան կրնայ զետեղուիլ գերանին մէջ, նկատելով թէ ան դատարկ է. կչւեցէ՛ք զայն և կը տեսնէք որ ջուրի այդ քանակութիւնը քանի մը անգամ աւելի ծանր կ'ըլլայ քան թէ նոյն իսկ գերանը: Գերանը չընկրզմիր այն պատճառով որ փայտին տեսակարար ծանրութիւնը շատ պակաս է ջուրի յարաբերական կշիռէն: Գիտէ՞ք արդէն թէ ջուրը սառելով աւելի մեծ տեղ կը բռնէ և կը պայթեցնէ շէշը երբոր լեցուն է ջուրով և ամուր կնքուած: Գիտէ՞ք նաեւ թէ այդ պատճառով է որ սառոյցը կը լողայ ջուրին երեսը: Իւզը, ընդհակառակն, երբ սառի՝ կը սեղմուի, ասոր համար սառած իւզի կտորն իսկոյն կը խորասուզի հալած իւզի մէջ, ինչպէս պաղած կապարը հալած կապարի մէջ:

Բայց այս բոլոր զննութիւնները չգոհացուցին Նեւտոնը: Ան ուշադրութիւն դարձուց այն երեւոյթին վրայ, որով քար մը կամ գնդակ մը դէպի

մէկ կողմ նետուելով, կամ հրացանի գնդակը հը-  
րացանէն արձակուելով, քիչ քիչ կը խոնարհի և  
վերջապէս երկրիս վրայ կ'իյնայ: Նեւտոն այս ե-  
րեւոյթը բացատրեց հետեւեալ կերպով: Երկու  
ուժ դէմ առ դէմ կը մրցին. մէկ ուժը այն է,  
որով կ'արձակուի քարը, իսկ միւսն է երկրիս ձը-  
դողական ուժը որ կը քաշէ քարը, քարը հեռա-  
նալով՝ տակաւ առ տակաւ կը կորոնցնէ սկզբնական  
հարուածէն ստացած ուժը, իսկ երկիրը՝ ընդհա-  
կառակն՝ շարունակելով իր զօրութիւնը՝ վերջապէս  
կը քաշէ զանի դէպի իրեն:

Նեւտոն, որ արդէն պիտէր թէ լուսինը երկ-  
րիս շուրջը կը պտըտի և երկիրը արեգական, դիւ-  
րաւ հասկցաւ թէ ինչո՞ւ լուսինը երկրէս և եր-  
կիրս արեգակէն չեն հեռանար: Անշուշտ այն  
պատճառով որ երկիրս լուսնէն մեծ է և արեգա-  
կը երկրէս, որով երկիրը լուսինը իրեն կը քաշէ  
և արեգակն ալ երկիրը: Իսկ թէ ինչո՞ւ լուսինը  
վար չիյնար երկրիս վրայ և երկիրը արեգակին  
վրայ, որովհետեւ լուսինը երկրիս շուրջը, իսկ եր-  
կիրը արեգակին շուրջը կը պտըտին առաջիկ ու-  
ժով և ստագոռքեամբ:

Նեւտոն այխարհիս մեծահանճար մարդոց մէկը

ըլլալով հանդերձ, քրիստոնէական անկեղծ հաւատք և երկիւղածութիւն ունէր։ Չափազանց հեզ էր, ամենուն հետ քաղցրաբարոյ, ամէն բանի մէջ ճշմարտասէր, պարզ վարմունքի տէր, և ամենեւին միտքէն չէր անցնէր թէ իր մեծ կարողութեան վրայ միլիոնաւոր մարդիկ կը հիանան և պիտի հիանան յաւիտեան։ Անհամար աստղերու շարժումները չափազանց ճշգրտութեամբ հաշուելով, այդ ահագին մարմիններու ծանրութիւնը կը չափուէր, և լուսնի շարժման արագութիւնը չափելով հանդերձ, ինքզինք կը համարէր «Իբրեւ մանուկ մը որ մանր քանիւ կը խաղայ սիւղերիս անասնաման ովկիանոսին եզերքը»։ Ամէն դործերու մէջ ունեցած յաջողութիւնը Արարչին օգնութեան կ'ընծայէր, որ աղբիւրն է բոլոր ճշմարտութիւններու։

Խորին ծերութեան մէջ, երբ ճերմակ մազեր իր իմաստուն գլուխը կը պսակէին, նեւտոն խելքի և զգացումներու թարմութեան կողմէ սուոյդ երիտասարդի մը կը նմանէր։ Կարծես ժամանակը անգամ չէր համարձակեր դպչիլ պատկառելի ծերունիին։ Սակայն հասաւ վերջապէս ժամը և այս մեծ մարդն ալ կոչուեցաւ Անոր քով, որու անունը յաճախ կը կրկնէր խորին ջերմեռանդութեամբ։

**Քելագրութիւններ . — Հարցումներու վերածել .**  
**141. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :**



## **ԳՍՍ ՂԵ.**

**142. Շարադրել , ռոպլութիւն :**

**Թաղէոս իր հօրմէն մօծ ժառանգութեան մը տիրացած էր , բայց անիկա չչա՛ագործեց զայն , վասնեց չար ընկերներու անսալով : Խեղճը տխուր վա՛սճան մը ունեցաւ :**

**143. Գտնել հետեւեալներուն հականիշը :**

**Յստակ ջուր , պա՛ք , նիհար , անաչառ , տարբեր , խաղաղ կեանք , հաստատել , սխալ լուր , սխալ դատողութիւն , բնական , գ՛նել , անկեղծ , նենգաւոր , ի՛չնել , վստահիլ , գովեստ :**





## ԴԱՍ ՂԶ.

### ՎԱՐԴ ՈՒ ՄԱՆՈՒՇԱԿ

«Մաղիկներուն եմ տիրուհին  
Բուրաստանին վայելցն ու զատդ»,  
Ըսաւ օր մը ինքնապանծ վարդ-  
Խոնարհ ու հեզ մանուշակին,  
Որ անկիւնը բուրաստանին՝  
Քաշուած կ'ապրէր, աչքը գետին ։  
«Տե՛ս հասակիս վայելչութիւն .  
Իմ քաղցրիկ հոտ, իմ անոյշ գոյն  
Կը գրաւեն սիրտն ամենուն ։  
Մինչ խառնուած կանանչներուն՝  
Քու կարծ հասակդ շատ անգամ  
Մարդոց կ'ըլլայ ոտքին կոխան » ։  
Պատասխանեց հեզ մանուշակ ։  
«Այդ չափազանց քուկին պարծանք  
Յայտնի նշան է տգէտ մտքի .  
Թո՛ղ շփանալըդ, վա՛րդ, մէկդի ։  
Կատարեալ տե՛սք, վայելչութի՛ւն  
Միշտ կը սիրեն խիստ պարզութիւն .

Երբ որ անոնց վրայ աւելցուի  
Համեստութիւն բարքի, լեզուի,  
Ամէն սիրտեր կը գրաւուին :  
Թէ ասոնցմէ մէկը պակսի .  
Գիտցի՛ր շատ վա՛ր է անոր գին :»

\*  
\*  
\*

Մանուշակէս առէ՛ք խրատ  
Օրհորդներ, եղէք զգաստ :

---

## Գ Ա Ս Ղ Է .

144. Շարադրել . — Արձակի վերածելով :

145. Գտնել հետեւեալներուն հականիշը :

Ստէպ, խարխուլ, անմահ, ներելի (մեղք), մարդա-  
«էր, ապուշ, համար, մխիթարել, համնիլ :

## ԴԱՍ ՂԸ.

### ԴԱՇՏԵՐՈՒ ԱՇԽԱՏԱԻՈՐԸ

Ո՛վ մշակ, ահա արեւը իր առաւօտեան շո-  
ղերով կ'ոսկեզօծէ ակօսներդ, ո՛տք ելիր:

Ահա արտոյտը՝ որ ոսկեզիւսակ ցորենին տակ  
պահոււրտած՝ բոյնէն կ'ելլէ և երգելով՝ կը թռչը-  
տի: Գնա՛, հերկէ՛, և քու զուարթ երգերդ ուղ-  
ղակի երկինք ելլեն արտոյտին երգերուն հետ:

Երկրագործին աշխատութիւնը տաժանելի է,  
բայց անոր բազուկն ուժեղ է և սիրտը արի:

Հովին ու արեւին դէմ՝ մերկ բազուկներով,  
ազատ օդէն ուռած կուրծքով, գեղացին գործի  
կը սկսի, «վասնո՞ժ արտը հռժկո՞ւ մշակով կ'ար-  
գասաւորի»:»

Գլուխը կախած կ'աշխատի բեղմնաւոր հողին  
վրայ զոր իր ձեռքը կ'արգասաւորէ, և ուսկից,  
Աստուծոյ օգնութեամբ, պիտի բղխի վաղուան  
հունձքը: Յետոյ երբ վայրահակ ճակատը կը  
բարձրացնէ, իր շուրջը կը տեսնէ ընդարձակ կա-

պոյտ երկինքը, որ դէպի երկիր կը խոնարհի ու հորիզոնին ամէն կողմէն կը գրկէ զայն :

Ո՛վ դուն, որուն դէմքը կը հռոյսահրի զով ու ջինջ օգով, դո՛ւն, որ գլխուդ վրայ երկինքն ունիս և ոտքերուդ տակ դալար երկիրը, դո՛ւն որ չես ճանչնար մեծ քաղաքներու մրոճ գործաւորները, դո՛ւն, որու ականջը չէ վարժուած մեքենաներու խշացոցիչ աղմուկին, և որուն ազատ ականարկը կրնայ թափառիլ դէպի հեռաւոր դաշտեր, արիացիք, ո՛վ շինական, թող որ քաղաքներու գործաւորը կոշտ երկաթն ու անտաշ քարը ձեռաւորէ, դո՛ւն երկիրը կը գործես, կենսաւոր ու բեղմնաւոր հողը :

Քու ձեռքիդ տակ թող ծնին ու մեծնան թարմրուղէշ հասկերը, որոնք ցորեն պիտի արտադրեն, կամ կարմիր ողկոյզները՝ ուսկից գինին պիտի հոսի, հողին անսպառ կողերէն հանէ՛ մեր հանապազօրեայ հացը :

Դո՛ւն ես մարդկութեան մէջ կեանք սփռողը, քու աշխատանքիդ շնորհիւն է՝ որ տիեզերական աշխատանքը կը քաջալերուի, աշխատէ՛, և մի՛ յոգնիր բնաւ մարդկային ազգը սնուցանելէ :

Փելագրուփուցներ . — Հարցումներու վերածել :

147. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :



## ԴԱՍ ՂԹ.

148. Շարադրել, նամակ :

Ութ օր է իվեր սրդողած էք ձեր ընկերոջ հետ, արդ  
գրեցէք անոր թէ մոռնայ անցեալն ու հաշտուի :

149. Գտնել հետեւեալներուն հականիշը :

Յապաղիլ, բարբարոս, արգիլել, շահիլ, անզգայ,  
արշալոյս, հանգչիլ, հիմնել, տխուր, համեստ, աւելել,  
բիրտ, խակ, հսկայ :



## ԴԱՍ Ճ.

### ԱՐԶԵՍՏԱԻՈՐԻ ԿԵԱՆՔԸ

Ամէն արհեստ լաւ է, պէտք չէ գէշ աչքով  
նայիլ այս կամ այն արհեստին : Ամէն գործ ունի  
իր դժուարութիւնները : Հողագործն իրաւ է որ

կոչու ու տաժանելի աշխատութիւն մ'ընելու պարտաւոր է, բայց իր յոգնութիւններն եթէ չըլլան, ինչպէ՞ս պիտի ստանայ ցորենն, որով ինք ու իր ընտանիքը կ'ապրին, աւելցածն ալ կը ծախէ և անով իր ուրիշ պէտքերը կը հոգայ:

Այսպէս նաեւ հիւսնը, դարձիկը, որմնադիրը, խաղախորդը, ուսայնանկը, պայտարը, լրպուսը, բրուսը: Այս ամէն արհեստաւորներն ալ մարդուս համար պէտք են և ամենքն ալ իրենց արհեստին մէջ դժուարութիւններ կը կրեն: Ի՞նչ ընենք, ապրելու համար, պէտք է աշխատիլ. «Քրտամբ երեսաց քոյ կերիցցես զհաց»: Այս է Աստուծոյ պատուէրը:

Ի՞նչ հաճոյք է արհեստաւորին համար, առտուն կանուխ իր գործին վազել, ուրախ զուարթ աշխատիլ, քրտինք թափել ցուրտին ու տաքին, յոգնութեան ու նեղութեան տոկալ:

Աշխատութեան մէջ է անոր հացը, ապրուստը, ուրախութիւնը, ուժը, իր ու իրեններուն հանգիստն ու երջանկութիւնը: Սիրենք արհեստները, ձեռարուեստները, հողագործութիւնը:

Արհեստաւորներն ալ պէտք է գոնէ նախակրթարանէ չըջանաւարտ ըլլան, կարդալ, գրել:

հաշուել գիտնան, եթէ ոչ չեն յաջողիր, ետ կը  
մնան :

Թելադրութիւններ . — Հարցումներու վերածել :  
151. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :

## Դ Ա Ս Ճ Ա .

### Ձ Ա Տ Ի Կ

Մաղկած են դաշտեր ծիւ ծիւ խասուտիկ,  
Եւ կոչնակ ժամուն կ'աւետէ Ձատիկ,  
Ձատիկն է եկեր և աշխարհ ցնծայ,  
Կարմիր հաւկիթներ բերեր մեզ ընծայ :

Ձուարթ ու պայծառ թէ ծագէ արեւ  
Թէ ամպոտ ըլլայ և սեղայ անձրեւ  
Ի՞նչ փոյթ, Ձատիկն է միշտ ուրախ Ձատիկ.  
Ուրախ ցատքուտեն միշտ մեծ ու պզտիկ :

Ժողովրդային այս պարահանդէս  
Կը տօնուի տարին մի անգամ այսպէս

Չքուարթ երգերով՝ խաղերով անմեղ,  
Եւ ո՛չ մուր գնենն, ո՛չ դիմակ տգեղ :

Փող՝ թմբուկ հնչեն ժիր՝ միօրինակ  
Եւ թնդայ երկիր պինդ ոտքերու տակ .  
Ծածանի հովէն գոյնզգոյն եագմանն .  
Արեւէն ցոլայ չեփկէնիկն արմանն :

Տարւոյն մէջ թափած քիրտն իրենց ճակտուն .  
Կրկին՝ բայց ուրախ՝ այսօր կը հեղուն ,  
Եւ հետզհետէ պարն ոգեւորի ,  
Եւ անկեղծ պագ տայ ընկեր ընկերի :

Բայց թմբկին ձայնէն երբեմն ալ յուզուած՝  
Օղիին խառնեն կաթիլ մ'արտասուաց ,  
Եւ իրենց դարիւր գլուխ գլխի մօտ  
Կնոջ ու զաւկի կը քաշեն կարօտ :

152. Շարադրել . — Արձակի վերածելով ցու-  
ցունեղ թէ ինչ հաճոյք կը վայելէք Ձառկին :

---



## ԴԱՍ ՃԲ.

### ՍՔԷՏԵՆՍԸՆ ԵՒ ՇՈԳԵԿԱՌՔ

Անգլիոյ Թայն դետի: եզրը Ուիլլամ անուն գիւղաքաղաք մը կայ. հոն ծնած է 1781 ին ճօրճ Սթէֆէնսըն: Հայրը գործուոր էր ածխահանքի մը մէջ, շաբաթը տասներհինգ ֆրանք կը շահէր և հազիւ կրնար իր ընտանիքին ապրուստը ճարել:

Ճօրճ իրեն հասակակից տղոց հետ խաղալով և իր կրտսեր եղբայրներուն վրայ հսկելով կ'անցունէր իր մանկութեան օրերը: Իրենց բնակած քարճիթին առջեւէն կ'անցնէր այն փայտէ ուղին, որու վրայէն ձիերը քաշելով՝ կը տանէին հանքածուխի կառքերը: Այս տեսարանը ճօրճի հանճարեղ միաքին ուշադրութիւնը կը գրաւէր միշտ:

Ճօրճ տասներհինգ տարեկան եղած ժամանակ, շատ աշխատասէր պատանի մըն էր, և ապագային մէջ լաւ մեքենագործ մը ըլլալու նշաններ ցոյց կուտար: Երբ իր շաբաթական թոշակը տասներհինգ ֆրանքի բարձրացաւ, յաղթական ձայնով գոչեց.

«Ահա, հիմա կեանքի համար ստեղծուած մարդ-  
մըն եմ:»



Աթէֆէնսըն տասնևութ տարեկան էր, ո՛չ  
կարգալ գիտէր և ո՛չ գրել, թէեւ ճարտար մե-  
քենագործ մըն էր. բայց բնաւ ամօթ չհամարեց  
ճանչնալ իր սղիտութիւնն և երթալ վարժա-

բանն այրեմնարան ուսանիլ : Ուիլլիմկթընի նաւա-  
հանգիստը լեցուն էր շոգեհաւերով որոնք ածուխ  
սունելու կուգային : Շոգեշարժ մեքենայ մը զե-  
տեղուած էր մօտակայ բլրակին վրայ՝ հանքածու-  
խով լեցուն կառախումբը քաշելու և բլրակին  
գագաթը հանելու համար : Սթէֆէնսըն այն մե-  
քենան կառավարելու պաշտօնն ստացած էր : Օր  
մը , իր տան ծխնելոյզը քիչ մնաց որ բռնկէր ,  
դրացիները վազեցին և ահագին քանակութեամբ  
ջուր թափեցին ծխնելոյզին մէջ : Սթէֆէնսընի կա-  
րասիներն աղտոտեցան , և սրահի մեծ ժամացոյցը  
դադրեցաւ բանելէ : Սթէֆէնսըն շակեց զայն և  
սլաքն իննի վրայ բերաւ : Այսպէս շրջակայ գիւ-  
ղերուն ճարտար ժամագործներէն մին եղաւ :

1803 ին արու զաւակ մը ունեցաւ և անունը  
Ռօպէրթ դրաւ : Շատ տարիներ Սկովտիոյ մէջ  
մնաց շոգեշարժ մեքենաներ վարելու պաշտօնով .  
միանգամայն երկրաշափուքիսն և թուաբանութիւն  
ուսաւ , և իր Ռօպէրթ որդին նիւքեասթիլի մէջ  
վարձարան մը դրաւ : Որդին աշխատասէր ըլլալով՝  
սկսաւ յառաջ նրթալ գիտութեանց մէջ , և ամէն  
իրիկուն հայր և որդի միասին կ'աշխատէին . ծրա-  
գիրներ կը գծէին և մեքենաներ կը նորոգէին :

բայց ձօրճի գլխաւոր փափաքն շոգեշարժ կառ-  
քեր հնարել և զանոնք երկաթէ ուղիներու վրայ  
քալեցնել էր: Երկար ժամանակ առանձնացաւ Բի-  
լինկվօստ՝ իր ամենասիրելի բաղձանքն իրագործելու  
աշխատելով: Լօրտ Ռավէնշվօստ օգնեց անոր և  
մեծագումար դրամագրուիս մը գրաւ անոր տրա-  
մադրութեան ստակ՝ առաջին շոգեշարժ կառքը  
շինելու համար: 1815 ին շինած կառաշարժ մե-  
քենան կատարեալ չէր, աւելի զօրութիւն ու ա-  
րագութիւն տալ հարկ էր մեքենային. ուստի ա-  
ւելցուց կրակին քանակը, մեծցուց կաթսային ծա-  
ւալն և շոգին օձապտոյտ խողովակներու մէջ պը-  
տրտցուց: 1823 ին Նիւքեասթիլի մէջ շոգեկառքի  
յատուկ գործարան մը հիմնեց, որուն արտադրու-  
թիւնները քանի մը տարուան մէջ ծաւալեցան  
բովանդակ աշխարհի վրայ:

Սթէֆէնսըն Լիվրբուլի և Մանչէսթէրի միջեւ  
երկաթուղոյ գիծ մը հաստատեց, որ մեծ համ-  
բաւ շահեցուց իրեն: Բայց և միանգամայն մե-  
ծամեծ դժուարութեանց հանդիպեցաւ: Երկրին  
բնակիչները սաստիկ թշնամի եղան այս օգտակար  
ձեռնարկին, քարի և ըրչի հարուածներով կը հա-  
շածէին խեղճ գործաւորները: Հարկ եղաւ այլ և

այլ հնարիւնաց միջոցներ գործ դնել անոնց դէմ՝  
Լրագիրներն ալ խստիւ կը քննադատէին Սթէֆէն-  
սընը . կ'ըսէին թէ երկաթուղոյն պատճառով  
կովերը չպիտի կրնային դաշտերուն մէջ արածիլ  
և հաւերն ալ չի պիտի ածէին : Մոգին պիտի  
սպաննէր օդին մէջ սլացող թռչուններն , տուները  
պիտի այրէր , կառաձիգ երիվարներն անգործ  
պիտի մնային , վարսակն ու գարին ալ պիտի  
ուտուէր և պանդոկապետները անօթի պիտի մը-  
նային :

Սթէֆէնսըն և իր ընկերները երկու տարի շա-  
րունակ հարկադրուեցան պաշտպանել իրենց ձեռ-  
նարկութիւնը : Երկամեայ վիճաբանութիւններէ և  
խռովութիւններէ ետքը , Լորտերու ժողովը միա-  
ձայնութեամբ հաւանութիւն տուաւ երկաթուղի-  
ներու հաստատման : Չորս մեքենաներ մրցեցան ,  
և Սթէֆէնսընի մեքենան յաղթող հանգիսացաւ :  
Ռօպէրթ Լոնտոնէ Պիրմինկէմ երկաթուղիի գիծ  
մը յինեց , որ անոր գեղեցիկ փառքերէն մին ե-  
ղաւ : Եւրոպական աղգերը մեծաշոյժ պատիւներ  
ընծայեցին ճորճի և Ռօպէրթի , և վեհապետները  
արքայական պարգեւներով վարձատրեցին զանոնք :  
1845 ին ճորճ իր գիւղական տունը քաշուեցաւ և

հոն սկսաւ երկրագործութեան պարապիլ, պան-  
ժալով իր պարտէղին ընտիր բերքերուն վրայ, ո-  
րոնց չէին կրնադ բնաւ հաւասարիլ ուրիշ պար-  
տէզներու բերքերը: 1848 Օգոստոս 12ին ձօրճ  
Սթէֆէնսըն մեռաւ: Անթիւ գործաւորներ յու-  
զարկաւոր գացին անոր դագաղին ետեւէն և Ձէս-  
թէրֆիլտի բնակիչները անոր մահուան օրը փակե-  
ցին իրենց կրպակները: Անգլիա երկու հսկայ կո-  
թող կանգնած է անոր, Լիվրբուլի և Նիւքասթլի  
մէջ:

Ռօպերթ Սթէֆէնսըն շարունակեց իր հօր  
փառաւոր ասպարէզը: 1850ին Լոնտոնի Երկրա-  
չափական Ընկերութեան նախագահ ընտրուեցաւ,  
և Նորուէկիա երկար ուղեւորութենէ մը ետքը,  
մեռաւ 1859ին և իր մարմինը այսօր կը հանգչի  
Ուէսթմինսթրիի Արքայարանին մէջ:

ձօրճ յաճախ սա խօսքը կը կրկնէր իր բարե-  
կամներուն. «Ըրէ՛՛ֆ, ինչ որ ես ըրի:» Մենք ալ  
ընենք ինչ որ ան ըրաւ, այսինքն չվհատինք  
կեանքի բազմադիմի դժուարութիւններէն: Ան-  
շուշտ ամէնքս ալ չենք կրնար փառքի և հարըս-  
տութեան հասնիլ, բայց կրնանք պատուաւոր և  
օգտակար ասպարէզ մը ընտրել:

Թելագրութիւններ. — Հարցումներու վերածել:

154. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել:

## ԿԱՍ ՃԳ.



### ՄԱՆԿԻԿԻՆ ՔՈՒՆԸ

Նիրհէ Մանկիկն իմ սիրուն  
Անոյշ քունով նիրհէ դուն,  
Օրրանիդ քով եկան հիւր  
Արեւն, արծիւն ու զեփիւռ,  
Թողած ծովերն՝ ամպն ու սար,  
Համբոյր բերել քեզ հազար:

Բացաւ արծիւն իր թեւեր  
Գլխուդ վերեւ ուկեհեր,  
Շրթունքներուդ վրայ նուռ,  
Սրսկեց արփին վարդ և հուր,  
Ու փայփայեց քամին զով  
Այտերդ իր նուրբ բեհեզով:

Նիրհէ՛, մանկիկն իմ սիրուն,  
Անոյշ քունով նիրհէ՛ դուն :  
Բոյնը դարձաւ գոռ արծուին ,  
Մարդը մտաւ լոյս արվին ,  
Թռաւ գնաց իր մօր քով  
Զեփիւռն անհուն նաղանքով :

Սիւքին դարձին անձկալիր  
Մայրիկն հարցուց . «Ո՞ւր էիր»  
Դեւերու հե՞տ կռուեցար ,  
Յուզեցիր ծով ու սար : »  
Իսկ համբոյրով մը ջերմին  
Պատասխանեց խօլ քամին .

«Ես ծառ ու ծով չեմ յուզեր ,  
Դեւ հալածել չեմ ուզեր .

Մանկիկին քով ամէն օր ,  
Ըսի երգեր ու օրօր .  
Նիրհէ մանկիկս իմ սիրուն  
Անոյշ քունով նիրհէ՛ դուն : »

---



## Դ Ա Ս Ճ Դ.

155. Շարադրել. — Արձակի վերածելով :

156. Գտնել հետեւեալներուն հականիշը :

Երէց որդի, թողումը, պարտատէր, միանե-  
ժան, գլխաւոր, նախադասութիւն, արձակ, խօսք,  
սպիտակ, շինական, տեւական, գմբեթարդ, հեղինակ,  
Թափանցիկ, Թարմ հաց, գրիչ, ջրհոր, շոայլ, մարդ,  
մահ, դեր, պարկ, պատճառ, ինայող :

---

## Դ Ա Ս Ճ Ե.

### Գ Ո Ր Ծ Ի Կ Ե Ա Ն Ք Ի Մ Է Ձ

Դպրոցէն ետք մեր յարմարութեան ու ըն-  
դունակութեան համեմատ դործ մը, արհեստ մը  
պիտի սորվինք :

Նախ աշկերտ պիտի ըլլանք : Մեզմէ մէկը  
խանութպանի քով, ուրիշ մը կոշկակարի քով,  
երբորդ մը ներկարարի, սպագրիչի, գծագրիչի,  
նկարիչի, ոսկերիչի, ժամագործի, դերձակի, վա-  
ճառակի, նպարտիւնաւորի, կահագործի, կամ  
ուրիշ արհեստաւորի քով աշկերտութիւն պիտի ընէ :

Սկիզբներն անփորձ է աշակերտը , բան չի գիտեր : Բայց ուշադրութիւն կ'ընէ , արհեստին կը վարժեցնէ իր ձեռքը . վարպետին ըրածին կը հետեւի , և քիչ քիչ կը սորվի ինք ալ անոր պէս բանիլ և գործ պատրաստել : Ուշիմ տղայ մը շուտ արհեստ կը սորվի , և օր մըն ալ կը յաջողի վարպետ ըլլալ իր կարգին :

Աշակերտութեան շրջանին ալ պէտք է որ ազնիւ , բարի , պարկեշտ և ուղղամիտ ըլլանք , պէտք է յարգենք մեր վարպետը , անոր հաւատարիմ ըլլանք : Անոր պատուէրներն անտրտունջ կատարենք . մեզի վստահած գոյքերն ու գործիքները խնամքով գործածենք : Անոր վրայ գէշ չի խօսինք , իր խանութին կամ տան մէջ պատահածներն ուրիշին չհաղորդենք , առանց իր հաւանութեան , առանց մեր մեծերուն գիտութեան , առանց զօրաւոր պատճառի որոշեալ ժամանակէն առաջ մեր վարպետին քովէն չելլենք ուրիշ գործի մէջ քանի մը զրուշ աւելի շահելու համար : Ասիկա կը նշանակէ ապերախտ ըլլալ իր վարպետին հանդէպ : Զանանք օր ըստ օրէ յառաջադիմել մեր արհեստին մէջ , փորձառու և ճարտար ըլլալ և արժանի ըլլալ աւելի վարձք ստա-

Նալու : Վարպետներն ալ իրենց աշկերտն իբրև զաւակ հոգալու են , անոնց վարմունքին նայելու են , չափազանց աշխատցնելու չեն , և արհեստ սովորեցնելու են :

157. Քելագրութիւններ. — Հարցումներու վերածել :

158. Շեղադիր բառերով մէյմէկ խօսք կազմել :

ԴԱՍ ՃԵ .

Լ Ե Ձ Ո Ւ

Երկնասուր ձիւրք մըն է լեզուն որով մարդ իր միտքն ու զգացումներն իր նմաններուն կրնայ բացատրել : Աստուած մարդուն տուաւ կատարեալ կարողութիւններ , ինչպէս նաև խօսելու ձիրքը՝ որպէս զի զայն մշակէ ու ծաղկեցնէ : Լեզուի մը յօրինուածքին պատճառներն են մարդկային պիտոյքը թէ Ֆիզիքական և թէ բարոյական — անօթութիւն , վիշտ , սէր , կիրք , ևլն . զարգացման պայմաններն են ժամանակը , ընկերական յարաբերութիւնները , կրթութիւնը , արուեստ ու գիտութիւններ , որոնց օր ըստ օրէ մշակմամբ՝

կը մշակուի նաև լեզուն : Ուստի հնար է հին ու նոր ժողովուրդի մը փաղափակրթութեան աստիճանը չափել իր լեզուէն , որ հարուստ , ճոխ ու ընտիր կրնայ համարուիլ եթէ կարենայ ամէն գիւրութեամբ արտայայտել բնական , ինսուսասիւրական ու գիտական գաղափարներ իրենց նուրբ երանգներով՝ ինչպէս է մեր Հայերէն լեզուն : Մարդ իր միտքը բացատրելու համար՝ երեք տեսակ նշաններ կրնայ գործածել — շարժում , յօդաւոր ձայն , գիր : Առաջինը խօսելու պարզագոյն ձեւն է , իսկ խօսքն ու գիրը կրնան ամենէն վերացեալ գաղափարներ ակներև բացատրել : Այս կարողութեամբ ալ մարդ անասուններէն վեր կը բարձրանայ :

159. Թելադրութիւններ. — Հարցումներու վերածել :

160. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :



## ԴԱՍ ՃՁ.

### ԱՍՏՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ուլ պայծառափայլ շողշողուն աստղեր  
Որ երկինքի մէջ վառ վառ կը շողէք ,  
Այդպէս ծագելով գիշերէ գիշեր ,  
Ըսէք ինձ , աղէ՛ , ըսէք դուք ի՞նչ էք :

Միթէ քնացող երկիր կը հսկէք  
Երբ անոր վրայ մութը կը տիրէ ,  
Եւ ձեր լուսասփիւռ խումբովը կ'ըլլէք  
Մեր այքին անտես հորիզոններէ :

Ճանապարհորդին շաւղին լոյս կուտաք ,  
Երբ ո՛չ արե կայ և ո՛չ ալ լուսնակ ,  
Եւ իր անընկեր միայնութեան մէջ  
Ձեր նշոյլներով ուղեցո՞յց կ'ըլլաք :

Փալիլուն աստղեր , դուք որ օրն կարգաւ  
Գիշերըն ի բուն կը հսկէք արթուն ,  
Արձակ ծովուն մէջ մոլորած մի նա՞ւ  
Արդեօք կը բերէք իր ուղիղ ճամբուն :

Ու կը պլպլան , չեն պատասխաներ ,  
Ձայն չի՛ լսուիր հոն , լուռ է ամէն բան ,  
Այդ արեգները ինչո՞ւ են կեցեր  
Եւ չեն փութար տալ ինծի պատասխան :

Արդեօք ամառուան տապը բոցակէզ  
Անձրև աչնային , տարափ ձմեռուան  
Եւ գարնանագեղ վարդեր աննման  
Ձեր սափորներէն ի վար կը տեղան :

Թող պատմեն ինծի որոնք որ ձեզմէն  
Շատ զարմանալի բաներ սովրեցան ,  
Թէ ինչպէս ատոնք հին ատեններէն  
Կապոյտ երկինքին վրան դրուեցան :

Այսչափ փալփլուն սիրուն աստղիկներ ,  
Ո՛հ , սիրտս հատաւ , ինչ պիտի ըլլան ,  
Ո՛վ արդեօք ինծի , ո՛հ ով այս գիշեր  
Դաս մը պիտի տայ աստղերուն վրան :

161 . Արձակի վերածել :



## ԴԱՍ ՃԷ.



### Օ Դ Ա Պ Ա Ր Ի Կ

Արդարև գեղեցիկ բան է բարձրանալ օդին մէջ, և այդ բարձրանալը օդապարիկով միայն կ'ըլլայ: Մարդիկ օդապարիկով կը շրջին մթնոլորտին մէջ, կը քննեն անոր վերին խաւերը ու զանազան աշխատութիւններ կը կատարեն պատե-րազմի ժամանակ: Ո՞վ հնարած է օդապարիկը: Ֆրանսայի Անտէյ քաղաքին մէջ երկու եղբայրներ կային թուղթի գործարանատէր, Մօնկօլֆիէ եղբայրներ անունով: Օդապարիկի առաջին գաղա-

փարը անոնք յղացան և իրենց անունով «Մօն-  
կօլֆիէ» կոչեցին զայն : Խոշոր կտաւէ գունտ մը  
շինեցին , վարի կողմէն բաց , և թելերու միջոցով  
կողովի մը հետ հաղորդակցող : Կողովին մէջտեղ  
դրին երկաթեայ վառարան մը յարդ ալրելու  
համար , որպէս զի տաք շոգին դունտին մէջ մըտ-  
նելով՝ թեթեւցնէ զայն և բարձրացնէ : Առաջին  
փորձը Բարիզի մէջ կատարուեցաւ 1783 Սեպտ .  
12ին , Գիտութեանց ձեմարանի անդամներու և  
խուռն բազմութեան ներկայութեամբ , որոնք  
հիացումով կը դիտէին հրաշալի տեսարանը :

Մօնկօլֆիէ եղբայրներուն գիւտը գեղեցիկ էր ,  
բայց գունտը տաք օդով լեցնելը վտանգաւոր  
կրնար ըլլալ . այդ անպատեհութեան առաջքը  
առնելու համար հարկ էր այնպիսի կազ մը պատ-  
րաստել օդապարիկին համար որ օդէն աւելի թե-  
թեւ ըլլար և անվտանգ : Բնագիտութեան ուսու-  
ցիչ երիասարդ մը , Շառլ և Ռոպէր անուն եղ-  
բայրներուն հետ ընկերակցութեամբ , առաջարկեց  
օդապարիկները փոխանակ տաք օդով լեցնելու՝  
ջրածին կազով լեցնել , որ օդէն գրեթէ տասն և  
չորս անգամ թեթեւ է : 1783 Օգոստոս 27ին ,  
առաջին փորձը կատարուեցաւ Բարիզ , և Դեկ-



տեմբեր 1ին , Շառլ և Ռօպէռ իրենց նորահնար  
գործիքովը օդային ուղեւորութեան մը ձեռնար-  
կեցին : Օդապարիկին գունտը կը շինուի մետաք-  
սէ հաստ բեհեզէ թափթա ցանցով մը ծածկուած .  
վարի կողմէն կախուած է նաւակ մը որուն մէջ կը  
նստին օդանաւորդները . վերի մասին մէջ կան  
եքկու դուռներ որոնք կրնան բացուիլ կամ գոց-  
ուիլ լարի մը միջոցով : Զրածիկ կազը նտակին  
մէջ դրուած մասնաւոր տակառներու մէջ կը  
պատրաստուի և աւելի մեծ տակառի մը մէջ մըտ-  
նելով՝ խողովակի մը միջոցաւ կ'անցնի օդապա-  
րիկի գունտին մէջ : Օդանաւորդը իր հետ կ'առ-  
նէ դրօշակներ , խարիսխ , աւազով լեցուն պար-  
կեր , ծանրաչափ գործիներ եւայլն : Քանի բարձր  
ելլել ուզէ , աւազով լեցուն պարկերը վար կը նե-  
տէ , որով օդապարիկը թեթեւնալով աւելի կը  
բարձրանայ : Վար իջած ժամանակ եթէ անտառի  
մը կամ ծովեզերեայ ժայռի մը վրայ և կամ ծո-  
վու մէջ իյնալու վտանգ տեսնուի , օդանաւորդը  
ուղղութիւնը կը փոխէ և խարիսխը աւելի ապա-  
հով տեղ մը նետելով հոն կ'իջնէ : Դրօշակները  
այլեւայլ նշաններ տալու կը ծառայեն . ծանրա-  
չափը մթնոլորտին այլեւայլ վիճակները կը ցու-

ցընէ , օրինակի համար՝ ստորին խաւերու մէջ օդի ճնշումը աւելի է , իսկ վերին խաւերուն մէջ շատ քիչ : Ծանրաչափ գործիքը առէ՛ք ձորի մը մէջ դրէ՛ք , կը տեսնէ՛ք սնդիկի սիւնակը կը բարձրանայ օդին ճնշումին տակ : Լերան մը գազաթիւր ելէ՛ք , կը տեսնէք որ սնդիկի սիւնակը վար կ'իջնէ : Բարձրութեանց մէջ օդը անօսը է և հետեւաբար նուազ ճնշող :

Օդապարիկը հնարուելէն ի վեր շատ մարդիկ բարձրացած են օդին մէջ . 1804ին Կէյ-Լիւսաք բարձրացաւ մինչև 7016 մէթր . 1862ին Կլէյքը և Փօքսվէլ բնագէտները՝ մինչև 10,000 մէթր . Պաուալ և Պիքսիոյ մինչև 7049 մէթր : Այս բարձրութիւններէն կը տեսնենք թէ մարդիկ մինչև ո՛ր աստիճան կը յաջողին բարձրանալ : Մթնոլորտին վերին բարձրութեանց մէջ կեանքի վտանգը անխառնախփէջի է : Քանի՛ քանի ուղեւորներ մարած են , շնչառութիւնն զաղրած է , մարմնոյն ամէն կողմերէն արիւնը առատաբար հոսած է , և երբեմն վտանգը ա՛յնքան սաստիկ եղած է որ մահը վրայ հասած է :

Օդապարիկին կատարելութեան համար բան մը միայն կը պակսի՝ դէկը , որու միջոցով միայն

կարելի է մեր ուզած ուղղութիւնը տալ անոր ,  
Վերջին տարիներուն մէջ , գիտուններէն ոմանք  
աշխատելով փորձեր ըրին ղեկաւորելու օդապա-  
րիկը , բայց դեռ պէտք եղածին չափ կատարելա-  
գործուած չէ այս գիւտ : Աշխատութիւնները կը  
չարունակուին օդապարիկը աւելի օգտակար և  
աւելի գործածական վիճակի մէջ դնելու համար :

Քելագրութիւններ . — Հարցումներու վերածել :  
163. Շեղագիր բառերով մէյմէկ խօսք կազմել :



## ԴԱՍ ՃԸ.

### ԱՐԵԻ ՈՒ ԱՂՋԻԿ

Ոտներդ երկար տրեխներ հագած ,  
Աջովդ երկաթ գաւազան առած ,  
Գլխիկդ իկախ տրտմած ու տխրած ,  
Ո՞ւր դունալ արդեօք կը չուես կ'երթաս :

— Մի հարցըներ ,  
Յաւս մի նորեր :